



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19701

70 m
g.

902-1

1 - 12

115

Ե. ԽԱՆՅԵԱՆ

- 5 OCT 2011

ԳԱՆՉԱԿԻ ԳԱԽԱԳ



R. L. SOR

1004

Up in the air

Ազգագրական զանդիսից

ԹԻԳԼԻՒ

Տպագրան Կ. Մարտիրոսյան կողմէն հանդիսացնելի | **Տիոգրաֆія Հ. МАРТИРОСЯННА**
Օրբելյանովսկայ պ., д. № 1-2.

01.

30.04.2013

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Ноября 1900 года.



ԳԱՆՉԱԿԻ ԳԱԼԻԱՆ

ՆԻՒԹԵՐ ԸՊԵԳԱՅ ՈՒՍՏԻՄՆԵՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԵՄԵՐ

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ *)



անձակի գաւառում բնակւում են զլխաւորապէս հայեր,
թուրքեր, ուուս աղանդաւորներ և գերմանացիներ: Հայերը
և թուրքերը բնիկներ են, իսկ ուուս-աղանդաւորներն ու
գերմանացիները գալիք ականներ:

Թուրքեր են համարւում նաև թափառական Ացումները, որոնք
իրանց Թումից (հիւզանդիոնից) գաղթած են համարում, և իրանց
կոչումն էլ բացատրում են որպէս Աց ուում (Էց ուուում) կոչականից
կազմուած: Սրանք մահմեղական են, շիփ աղանդին, խօսում են Ա-
տրպատականի բարբառով, մի առանձին արտասանութեամբ և ոչըն-
չով չեն զանազանում միւս թուրքերից: Սրանք բնակւում են Ամիր-
վար, Ազի, Բիրդէօզ, Ազքենդ, Դաստափուր, Դամջալի, Գիւնէյ, Դամի,
Զագա-դարասի, Ղարաբուլախ և Ղազախ էլյիլախ հասարակութիւննե-
րի մէջ:

Բացի Ացումներից թուրք են համարւում նաև Սաֆի-Քիւրդ
Ղարաչազի, Սաֆի-Քիւրդ Քիւրակչազի և Ջաղելի-Քիւրդ հասարակու-
թիւնների բնակիչները, որոնք թէև աղօտ կերպով պահել են իրենց
քրդական ծագման աւանդութիւնը, բաց և այնպէս թէ լեզուով, թէ
կրօնով և թէ սովորութիւններով չեն տարբերւում միւս թուրքերից:

Նախկին բնակիչ Աղուանները այնպէս ձուլուել են հայերի և
թուրքերի մէջ, որ հետքերն անգամ չեն նկատւում:

Կուլտուրական տեսակիցից ամենից բարձր համարւում են գեր-
մանական գաղթականները, յետոյ ուուս-աղանդաւորները, ապա հայերը
և ի վերջոյ թուրքերը: Վիճակագրական բաժնում առաջ կը բերենք
այս ժողովուրդների ինչպէս բացարձակ, այնպէս և համեմատական
թուրքը, այժմ տալիս ենք մի քանի պատմական և ազգագրական
տեղեկութիւններ:

*) Տես Ազգ. հանդէս, գիրք 6.

ԳԵՐՄԱՆԱՅԻՆ ԵՐԵՐ.

Գերմանացիներին կովկաս հրաւիրեցին կառավարչապետ Երմոլիի ժամանակ 1817 թ. որպէսզի տեղական ժողովրդներին աշխատատիրութեան օրինակ լինին և սովորեցնեն բնիկներին երկրագործութեան և գինեգործութեան լաւագոյն ձևերը: Ֆաղթականները եկան Ալիրտեմբերգեան թագաւորութիւնից, լիաւորապէս նեղուելով նապօլէօն Ա. Ալրշաւանքներից և ծանր հարկերից:

Այս գաղթականութեան բաւական նպաստեցին այն ժամանակուայ յայտնի քարոզիչ Բենզել և Ջտելինզը, որոնք գուշակելով Գերմանիայի կործանումը, համոզում էին սեպարատիստներին փրկութիւն որոնել հայրենիքից դուրս, կովկասում, Արարատի ստորատներում: Կախ 31 և ապա 1400 գերդաստան Ուէքրի և Փրիկի առաջնորդութեամբ Դունայով անցան Վենդրիս և Վալախիա և եկան Իզմայիլ, ուր 40 օր կարանտինի ենթարկուեցան, իբր սնունդ գլխաւորապէս մրգեղէններ գործածելով՝ շատերը ջերմ ստացան և 1000 հոգի մեռան: Ապա երբ անցան Օդեսսա, ուր կրկին կարանտինի ենթարկուեցան, համարեա բոլորն էլ հիւանդացան:

Այսպիսի ցաւալի զրութեան ժամանակ Ուուսաց կառավարութիւնը օդնութեան հասաւ, գաղթականներին բաժանեց 10 խմբերի և առանձին յանձնակատարներով ճանապարհեց, տալով հէնց Օդէսսայում իւրաքանչիւր գերդաստանին 500 ր. ձի և կառք զնելու, 40 ական կոպէկ իւրաքանչիւր հոգուն օրական ուտեստի և երկական ըուբլի ամէն մի գերդաստանին օրական պաշարեղնի համար, իւրաքանչիւր խմբին էլ տրուեց փոքրիկ, ճանապարհորդական դեղատուն: Վերջապէս 1818 թուի վերջին 1400 գերդաստան գաղթականներից կովկաս հասան միմիայն 455 գերդաստան, միւսները չկարողացան կրել ճանապարհի դժուարութիւնները:

Այս 455 գերդաստանից մի մասը հաստատուեց Թիֆլիսում և նրա նահանգում, իսկ 194 գերդաստանը Գանձակի գաւառում, որից 67 գերդաստանը Աննէնֆելդ գաղութում, որ

այսպէս կոչուեց նի պատիւ Մեծ իշխանուհի Աննա Պավլովնա, Նիդերլանդիայի թագուհու և 127 գերդաստանը Ելենէնդորֆ գաղութում, որ այսպէս կոչուեց ի պատիւ Մեծ իշխանուհի Հեղինէ Պավլովնայի, Մեկլենբուրգ-Ճվէրինիայի մեծ հերցոգութունը:

Այս երկու գաղութներին տրուեցաւ հող՝

Գաղութի անունը.	Գեղեցիկ	Յարմար		Անյարմար		Ընդամենը		Մի գեղասահետական տիւն.
		դես.	սաժ.	դես.	սաժ.	դես.	սաժ.	
Աննէնֆելդ.	67	3185	—	383	2090	3568	2090	47,54.
Ելենէնդորֆ.	127	4498	1538	1407	1784	5906	922	35,81.
	194	7683	1538	1791	1474	9475	612	—

Սակայն Աննէնֆելդը Ճամքոր զետի անմիջապէս ափին շինուած լինելով՝ սաստի՛ անառողջարար կլլմայ ունէր, ուստի և բնակիչները մեծ չարդ էին կրում. մինչև 1831 թիւը մեռել էին 360 հոգի, մինչ դեռ ծնուել էին միմիայն 94 հոգի: Այս պատճառով գաղթականները ցրուեցան զանազան գիւղեր, բայց ոչ մի տեղ աղատ հողեր չգտնելով, ստիպուեցան վերադառնալ: Այս ժամանակ նրանց տրուեցաւ 285 դեսիատ. 1527 սաժէն տեղ դիւղից 18 վերստ հեռաւորութեան վրայ որպէս ամառանոց: Վերջապէս 1873 թ. դրանց տեղափոխեցին ութը վերստ դէպի հիւսիս, կատարելապէս առողջարար տեղ և նուիրեցին 1500 արքունական գերաններ և 6000 բուրլի դրամ, իբր նպաստ նոր տներ կառուցանելու:

Այսպիսվով՝ կառավարութիւնը մինչև 1851 թուականը տուել է

Նուէր.	պարտք.
Աննէնֆելդին.	11,882, ₆₄ .
Ելենէնդորֆին	29,006, ₉₄ .

Ընդամենը 40889,₅₈. 26409,₃₂.
Պարտքը գաղթականները լիովին հատուցել են:

Մինչև 1850 թուականները գաղթականների տները բնիկ թուրքերի և հայերի բնակարաններից ոչնչով չէին տարբեր- տում, միայն այս ժամանակից պետական կալուածների էկս- պեդիցիայի գլխաւոր, գաղտնի խորհրդական ֆաղենվը ան- ձամբ շրջում էր այս գաղութները և բոլոր միջոցներով դրր- դում էր կանոնաւոր, եւրոպական տներ շինել: Մինչև անդամ առանձին նուէրներ էին նշանակում լաւ տուն շինողներին. մինչդեռ միւս զիւղերի վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձ- նում:

Այս 82 տարիների ընթացքում գերմանական այս ժողովուրդը, որ շատ անգամ կարօտ է եղել կառավարութեան *) և հայերի օգնութեան **), որ ամենաչնչին վարձատրութեամբ ծառայել է հայերի և պարսիկների տներում, այսօր շնորհիւ իւր կուլտուրական բարձրութեան և աշխատասիրութեան՝ դաւառի տնտեսապէս ամենաապահովուած տարրն է ներկայանում. Գանձակեցիների այգիները հետզհետէ նրանց ձեռն են անցնում և հաւանական է, որ կարճ միջոցում, նրանք իրենց այգիներով միանան Գանձակին: Այսօր Գանձակի գաւառի առաջին հարուստը գերմանացի Փորերն է Համարւում և գերմանացոց տներում ու այգիներում ու աշխատանքները թուրքն ու հայն են կատարում. և այն նախկին աղախին գերմանուհիները այժմ կորսետով սեղմած իրենց մէջքը, ժամանակ են անցկացնում գաղութի կլուբում, կամ իրենց տանը, պիանինօների առաջ: Նորաձեռութիւնը, անբարոյականութեան հետ միասին, կամաց կամաց ներս է ծծուում այս գաղութների մէջ և քայլայում նրանց խաղաղ կեանքն ու տնտեսական բարեգաստիկ գրութիւնը:

Այս գաղթականները ոչ մի առաջնահարություն չեն

^{*)} 1826 թուի պատերազմից վնասուելու պատճառով կառավարութիւնը նպաստ տուեց՝

ԱՆՆԵՆՔԵԼԴԻՆ 24.524 թ. 8.850 թ.

Акты Арх. Ком. 5. VII 51,474 р. шис. 21,844 "

**) Երիցեան. Ամենայն հայոց կաթող. և Կոմիկասեան Հայք. հ. Ա. 490. 236.

արել շրջապատող ժողովուրդների վրայ և սրա պատճառը ոչ
սակաւ նրանց բնաւորութեան եսական ու անհատական
կողմն է: Գաղթականները վերաբերեւում են դէպի բնիկները
մեծ մասամբ արհամարհանքով. նրանք նրանց վրայ նայում
են որպէս հասարակ բանուորական ուժի, որ պէտք կը գայ
հնձի, խոտհարի կամ այզու շտապ աշխատանքների ժամա-
նակ վարձելու և կամ որպէս թշնամի—դիշատիչի, որից պէտք է
մեծ ջանքով պահպանել իրենց դաշտերն ու այգիները *):

S U S T R

Գանձակի գաւառի հայ բնակիչների մեջագոյն մասը բնիկներ են՝ իսկ փոքրագոյնը՝ զաղթականներ Պարսկաստանից, Քիվանշիրի, Երեւանի և Ղաղպատի գաւառների գիւղերից։ Ո՞չ միայն բնիկներն ու գաղթականները, այլ և Գիւղստանի վիճակի և արևմտեան մասի բնակիչները միմեանցից բաւական տարբերութ են թէ՛ բարբառով և թէ՛ սովորութիւններով։ Գիւղստանի վիճակը աւելի նման է Վարանդացին, (Ղարաբաղին), որի հետ պատմական բաւական սերտ անցեալով կապուած է եղել։

Բնիկներն ընդհանրապէս աւելի քան միջահասակ են, իսկ մելի-քական և հոգեւորական դասերի մէջ շատ յաճախ պատահում են բարձրահասակներ:

Հասակի միջին բարձրութիւնը հասնում է 1657 միլիմետրի, փոքր լինչ ցածր հագուի (1668) և Թիֆլիսի (1658) հայերից, բայց բարձր միւս գաւառներից:

Կրծքի միջին շրջապատը հասնում է 847 միլիմետրի, 21 մմ.
աւելի բարձրութեան կիսից, փոքր ինչ աւելի Թիֆլիսի (840) և Բա-
գուի (844) հայերի կրծքերից, բայց պակաս՝ միւս գաւառներից, ինչ-
պէս Զանգեզուրի (852), Քիբրավիլի (842) և այլն. Կուրծքը պատաժ
է սև, խիտ մաղերով:

Գլուխ ձեզ երկար է, 177 միլիմետր երկ. և 156 լայն. քիթը երկար (59,₅ մմ.) և նեղ (31,₅) աչքերը սկ, ճակատը ուղղահայեց:

Աւելի տեղեկութիւններ չենք կարող տալ, որովհետև մարդա-

*) **Огнепись** был начертан въ 1871—1872 гг. Экономический быт и феодальных колонистовъ въ Закавказскомъ краѣ. Никифорова, въ „Материалахъ для изученія экономического быта государственныхъ крестьянъ Закавказского края. т. I. с. 99—106.

բանական հետազոտութիւններ այս տեղացիների վերաբերութեամբ կատարուած չեն հմուտ բժիշկների կողմից, բացի պ. **Պանտիւխովից**⁴⁾, իսկ սրանը հիմնուած են միմիշացն միքանի հարիւր մարդկանց չափումների վրայ; Բնաւորութեամբ եսասէր և հեշտասէր են. դարաբաղիների հետ համեմատելով՝ սրանք աւելի պակաս աշխատամէր են, բայց աւելի կոպիտ, չունին նրանց նախաձեռնող ողին և ոչ էլ նրանց ընդունակութիւնները:

Մտաւոր գարգացմամբ աննախանձելի են, ստոր Ճուշուց, թէև աւելի մօտ և երկաթուղիով կապուած **Թիֆլիսի** հետ. **Սրա** պատճառը, կարծեմ, նախ այն է, որ համեմատաբար տաք կիմայի և հեշտաբեր այգիների շնորհիւ Գանձակեցին փոքր ինչ ծով է և երկրորդ՝ ապրուստի միջակ միջոցներ ունենալով՝ Ճուշեցու պէս ստիպուած չէ տարուաց մեծագոյն մասը ուրիշ քաղաքներ անցկացնել և վերադարձին բերել իւր հետ դրսի քաղաքակրթութիւնը. Նոյն իսկ քաղաքում մտաւոր անշարժութիւն է տիրում. բացի այդիները ուռողելու ջրի հերթի և այս պատճառով ծագած կուներից, ուրիշ գրեթէ ոչ մի խնդրի մասին չեն խմբւում և խօսում: Երիտասարդութիւն իւր վարդագոյն իդէալներով և աշխոյժ գործունէութեամբ գոյսութիւն չունի ոչ գիւղերում և ոչ նոյն իսկ քաղաքում:

Գրագէտ կանանց թիւր շատ փոքր է, իսկ տղամարդկանցը հասնում է մինչև 7%:

Բարոյականութեամբ նոյնպէս լաւ չեն, կրօնը, շնորհիւ տղէտ և մանաւանդ թերուս և թերահաւատ հոգեորականների, բաւականաչափ կորցրել է իւր նշանակութիւնը. ընկած կրօնական հաստատիքներին չեն փոխարինել բարոյական սկզբունքները, և սրանք թէ կրօնական և թէ բարոյական սկզբունքն երից գուրիկ մնացած՝ արագութեամբ դիմում են դէպի ապականութիւն. պանդխտութիւնը, նազուի շռապութիւնն ու գեղսութիւնը, ամառանոց եկողների շռայտութիւնը և այն գալիս են շտապեցնելու ացդ բարոյական անկումը: Քաղաքին և հանքացին գործարաններին մօտիկ և առհասարակ մեծ գիւղերը բարոյապէս շատ ընկած են և տանջւում են վեներական ախտերով. իսկ կենդրոններից հեռու գիւղերը բարեբաղդաբար փոքր ինչ լաւ են:

Բ Ն Կ Ա Ր Ա Ն.

Գանձակի գաւառը չունի իրեն առանձնայատուկ բնակարանի ձև, այստեղ կան թէ սուրբութեր, որ յատուկ են ամբողջ Ղարաբաղին. և մանաւանդ Զանգեզուրի Ղափան մասին ^{**)}, և թէ կանոնաւոր սե-

*) Անտրոպոլոգիչескія наблюденія на Кавказѣ. Тифлісъ.
**) Նկարագրութիւնը տես իմ „Զանգեզուրի գաւառ“-ում:

նեակներից բաղկացած բնակարաններ: Այնպէս որ ազգագրական տեսակէտից չարժէ երկար կանգ աւնել սրանց վրայ, միայն գաւառի կուտուրայի մասին աեղեկութիւն տալու համար կասեմ, որ քաղաքի և մանաւանդ հաճիքենդին մօտիկ զիւղերում, ինչպէս են Մոռութ, Ազատ և այն, որոնք նոյնպէս իրը ամարանոց են ծառայում, արդէն զարադամները վերանում են և կան 2-4 սենեակներից բաղկացած մաքուր և բաւական գեղեցիկ տներ. իսկ այս կենդրոններից աւելի հեռու գիւղերում, ինչպէս են Փիփ, Ղարադաղլու և այն, ուր համեմատաբար քաղաքակրթութիւնը աւելի քիչ է թափանցել, գեռ ևս մեծ մասամբ զարադամներ են: Միայն պէտք է ասել, որ ամբողջ գաւառում այժմ այլևս զարադամ չեն կառուցանում, այլ՝ չքաղաքակրթուած տեղերում վերանորդում և պահպանում են, իսկ փոքր ինչ քաղաքակրթուածներում քանդում և նոր ձևինն են կառուցանում և կտորները կղմինտրով ծածկում:

Կահաւորութիւնը ասիականի և եւրոպականի խառնուրդ է. կան աթոռներ, սեղան, բայց կայ և հաւատացուներ և ներքնակներ ձգուած գետնին, որոնց վրաց նստում են ծալապատիկ:

Քաղաքում տների մեծագոյն մասը աղիսաշէն է, մեծ մասամբ մի և երկու յարկանի: Ընդհանրապէս արտաքինի վրայ շատ քիչ ուշագրութիւն է գարձուած. Նոյն իսկ ամենալաւ փողոցի վրայ գտնուած ահազին տները, արտաքուստ ոչ մի զարդարանք, ոչ մի գեղեցիկութիւն չունին: Ներքուստ էլ այնքան յարմարութիւններ չեն ներկայացնում:

Կահաւորուած են մասամբ եւրոպական և մասամբ ասիական ձևով, իսկ մի քանի տներում կան նաև եւրոպական բաւական լաւ կահասիք և թանգագին գորգեր:

Զ Գ Ե Ս Ե Ւ Զ Ա Ր Դ

I. Կ ա ն ա ն ց

Ջապիկ. — կարում են կարմիր շիլաբակից կամ կարմիր ալրշից, որի արշինը արժէ մօտ 20 կոպէկ: Խնում է մինչև ոտները: Կուրծքը մէջտեղից բացուած է, և եգրերին սև հաւատ (երիզ) կարած: Կըրծքի մասը կրինակի է լինում, և կամ աւելի հասարակ կտորից աստանացած, որ աւելի տաք պահէ: Թռեքերը միջակ լայնութեան են, և հասնում մինչև ձեռքի կոճինները: Կոճակներ չունին, այլ վեր են քըշտում, մանաւանդ գործ անելիս:

Փոխան. — կարում են շիլաբակից, միտկալից, շիլայից և այն:

Բազուկ Հայոց
Հոհիսիմեան Դպրոց
Եղեղ-ծխակ. (օրինակ)



Գ ա ն ձ ա կ ե ց ի

Հագնում են շապկի տակից և բանջառվ կապում: Փողքերը երկար են, նեղ և վերջանում են տուժ, որ 2-3 վերշոկ լայնութեան սև մահուդ է լինում, երբեմն էլ բաւշեաց կամ մետաքսեաց կտոր, իսկ սրանից վերև նեղ ասեղնագործ երիզ-նաշխը. երևացող մասը միացն այս քողը և նաշխն են լինում:

Արխալուդ.—Կարում են զանսղան գոյնի չթերից, մովից և այլ կտորներից: Մէջքի վերաց բնական սեղմուելով՝ արխալուզը իջնում է մինչև ծնկները: Կուրծքը եռանկիւնածե բացուած է: Արխալուզը հագնում են շապկի վրաչից, տաք ժամանակ միայն մէկ հատ, իսկ ցուրտ միջոցին՝ 2, 3, 4 և մինչև անգամ հինգ: Առաջին արխալուզը կոչում է բառի արեւուրեա և աւելի հասարակ է լինում, թեքերը հասնում են մինչև մատները և վերջանում հազար-ժապաւէնով: Միւսները կոչում են զլիսի (վերաչի) արխալուդ, և աւելի լաւ կտորից են կարուած լինում, բոլոր եղբները կարուած են լինում հազար-ժապաւէն: Թեքերը երկար են լինում և հէնց կրան տակից բացուած, իսկ արմունկի մօտից զայթանով միացած, թեքերի ծացրերը եռանկիւնածե կտորուած: Այս թեքերի ծացրին, կռնից մինչև ծացրը՝ մի արծաթէ շղթայ է կարուած, որի վրաչից կամ դրամներ և կամ նշածն դիվմաներ են կախուած: Սովորաբար թեքերը չեն հագնում, այլ կախ են ձգում:

Առաջին արխալուզի վրաչից կապում են գոյն, որ կարմիր չթից կէս մետք լայնութեան և 3 մետք երկանութեան կտոր է: Գոտին երկու անգամ փաթաթում են մէջքին, յետոյ առջևում մի հանդոյց ձգում և ապա ծացրերը հնի են քաղում, գտուում մէջ:

Քրւաճա —Կարում են շալից. կամ մովից բամբակած, մէջքին բուզմայով փոքր ինչ սեղմուելով հասնում է մինչև ծնկները. կուրծքը եռանկիւնածե բաց է, թեքերը հասնում են մինչև արմունկը այնպէս որ ամբողջ ծղիլը բաց է մուտք: Քրւաճայի բոլոր եղբերը պատում են աղուէսի կամ աւելի թանգագին մորթով:

Գլխի յարգարանիք —Նախ մազերը սանրում են, յետոյ ուղիղ մէջ տեղից երկուսի բաժանում, առանձին առանձին ոլորում, երկուսն էլ կծում, այդպէս պահում. և մի եռանկիւնածե սպիտակ շոր՝ հշընք՝ կապում վերաչից: Յետոյ երկու ռշան իրար վրաց դնում և կզակի տակից տանելով՝ կապում են գագաթին: Ղոլանը շորի կտորտանք են միմեանց վրաց փաթաթուած, այնքան, որ ունենում են 5 ս. լայնութիւն, 3 ս. հաստութիւն և այնքան երկարութիւն, որ հասնում են կապողի մի քունքից մինչև միւս քունքը: Մրա ծացրերին հաստ թել է կապած, որով և հանգուստում են: Յետոյ երեսի երկու կողքից դնում են մի պոչ-թելից ոլորած 20 սանտիմետր երկ. և 2 սանտ.

հաստութեան թել, և ծամերը, ծացը վերկից դնելով՝ փաթաթում վերան, յետոյ այս երկուսն էլ կծած սպասում են, և մի ճկատանոց—եռանկիւնսձև ծալուած մի շոր-ճակատի վրացով անցկացնելով՝ կապում ծոճրակի վրայ: Յետոյ մի սպիտակ հշրանք, —եռանկիւնսձև մահուդիքարի կտոր, որի երկու ծացերին առ է կապած,—ձգում են զլխին, ծամերի ծացերը տանում դէպի կզակի տակը և մշրջանին կապում, քողը մի երկու անգամ անցկացնում զլխի և կզակի վրացով և հանգուստում: Սպա երկու դրանների վրայ դնում են դաշնիք դրանը.—սա եռանկիւնսձև, մէջտեղում 5 ս., ծացերում հետզհետէ նեղացող, մի փայտ է 14 ս. երկարութեան, շորերի մէջ փաթաթուած և ծացերին քող կապած,—և քողերը կապում զագաթին, քորոցով տակի դուանը միւսների հետ ամրացնում: Սպա դնում են պատուաց (երեսանոց) —26 ս. երկարութեան և 14 ս բարձրութեան եռանկիւնսձև կարմիր մահուտ է, շուրջը դալթան, իսկ երկարութեամբ գեւշտուաւ (կլապիտոնի ասղնեղործ մի կտոր), եզրին արծաթի թոփեր. ուժանց միքանի հատ էլ գոյնզգոյն հուլունք կարած: Երկու եռանկիւնի երսանոցները զագաթի և ծոճրակի մասի քողերով միմեանց կզած են. իսկ երրորդ քողով կապում են բկի տակ:

Ըրեսանոցից յետոյ կապում են ժմէնչւ, որ մի քառ. մետր մեծութեան սպիտակ միտկալ է, եռանկիւնի ծալուած. սա ձգում են զլխին, աջ ծացը կզակի տակով տանում, իսկ ձախը բերանի վերացով բերում են, և ծոճրակի մօտ երկու ծացերը հանգուստում: Սա ծածկում է բերանը անմիջապէս քթի տակից և ամբողջ դրանները: Սպա զագաթին դնում են հապնի—45 ս. երկարութիւն և 10 ս. լայնութիւն ունեցող կտորի վրայ խմոր են քսում, լայնութեամբ երկուս ծալում, վերան նորից խմոր քսում և նոր մի ուրիշ նոյն երկարութեան և միքիչ աւելի լայնութեան շոր քաշում, անցկացնում մի պուլիկի վրայ, երկու ծացերը իրար կարում, և դնում արևի տակ չորացնում: Յետոյ մի ասղնեղործած, հինգ սանտիմետր լայնութեան և 50 ս. երկարութեան թաւշեաչ կտոր կարում կոպիկի առաջի մասում. սա էլ կոչում է ճշլանչուաց, և ծացերին ունի երկական քող, որոնցից մինը կապում են ծոճրակի վերացով, միւսը բկի տակով անցկացնելով՝ կոպիկի վրայ:

Սպա մի եռանկիւնսձև ծալուած գունաւոր փարսի եալլուղ ձըդում են ճակատի վրացով և կապում ծոճրակի վրայ:

Յետոյ ձգում են շրանք, որ կարմիր, մետաքսեաչ, եռանկիւնսձև ծալուած մի կտոր է: Եւ սրա վրայ կապում են շալման—մի եռանկիւնսձև ծալուած հասարակ կտոր, որ ձգում է ճակատի վրայ և կապում ծոճրակի մօտ:

Սպա անց են կացնում հուռ—մի կարթաւոր շղթաց, որ պահպանում է չալման և չարղաթը:

Արժեկի բ.

Բշրդանի	15—20 կ.
3 դրան	10—15 "
2 պոչ	5—10 "
Սպիտակ մշրդանի	15—20 "
Ըրեսանոցը	1 ր.	60—2 ր. "
Թոփերը	4—5 ր.	" "
Քիթկալը	25—30 "
Կոպին	10—15 "
Ճկուտանոց	40—60 "
Զարդաթը	5 ր.	8 ր. "
Զալման	20—30 "
Կոերը	20 ր.	25 ր. "
													32 ր. 42 ր. "

Ունաւան. —Նախ հագնում են գուլպայ, և ապա չմոշկ կամ չուստեր:

Սրանից յիսուն տարի առաջ Թիֆլիսից մուտքէ գործել վրացական տարագը, որ այժմ բաւական տարբերում է նրանից առաւելապէս իւր պարզութեամբ: Խըկացի վրայ հագնում են լէհին, որ սովորական, հասարակ դէցրան է. —իսկ սրա վրայ առաջները քիկածա, հանդիսաւոր կամ տօն օրերին քեաթիպա՝ իսկ այժմ հասարակ ժակէտ, որ տեղացիները պայտ են կոչում:

Գլխի յարդարանք. —Մագերը ականջների մօտ ոլորելով այստերի կողքից փոքր ինչ երեացնում են, վերացից մի սպիտակ լաշակ կապում. զագաթին մի հապն դնում, վերացից մի եալլուի ձգելով ծոճրակի մօտ կապում, յետոյ մետաքսեաչ եռանկիւնսձև ծալուած մի եալլախ ձգում են կոպու վրայ, ձախ ծացը, բկի տակով և ամբողջ կզակը ծածկելով անցկացնում, և կոպու վրայ քորոցով ամրացնում: Ապա եալլուիսի աջ ծացը միեւնոյն կողմից յետ են ծալում և ամրացնում նոյն տեղում, այնպէս որ եալլուի կրկին ծալուած ծացը քաշի ուսի վրայ:

II. Տղամարդկանց

Սովորական շապիկ և վարտիքի վրայ հանգնում են լայն, լէհուաց շալուար, որ խնչանչ կապում է առաջից կամ կողքից: Փողբերի ծայրերը դնում են գուլպաների մէջ և տոլաղով կապում: Ճալուարը սովորաբար կարում են շալից կամ սև ներկած կոտակից:

Ճապիկ վրացից հագնում են առաջաւուած, որի կուրճքը առաջները եռանկիւնսձև բաց էր լինում, իսկ այժմ ամբողջովին ծածկուած է: Երիսալուղը կարում են սև կամ կապուտ ներկած կոտակից:

Արխալուղի վրայ հագնում են չե-^{թու}, որ մէջքի մօտ բուզմայով սեղմուելով իջնում է ծնկներից ներքեւ: Կարում են սև շալից: Ոտներին հագնում են քոշեր կամ տրեխներ, Գլխներին ծածկում փափառ, որ կարում են գառան մորթից:

Հարուստները ձմեռը հագնում են չուխի տակից ժեր (մուշտակ), գառան մորթից կարած, չուխի տարազով:

Կտածումի (տատուաժի) սովորութիւնը մինչև հիմայ էլ պահպանուել է Գանձակի գաւառում, այսպէս՝ ձեռքի հարուածներով կամ երկար տրորելով անգայացնում են մարմնի այն մասը, որ ուզում են կտածել, ինչպէս ձեռքերը, այտերը, ճակատը և ազն, և յետոյ փոշիացած ածուխի շաղախի կամ թանաքի մէջ թաթախած թելը անցկացնելով ասեղին՝ անց են կացնում կաշուի միջով. ածուխը կամ թանաքը թելից անցնում է մարմնին և սև բիծ տալիս, որ շատ երկարդիմանում է: Մրան գիւղացիները լուլ են ասում. անում են երեսին, ձեռքերին, ծծերի վրայ, կրծքին և ազն. բայց սովորաբար մի մի խալ անում են ունքերի մէջ, մի մի հատ էլ աչքերի տակ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒԽՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ. Գանձակի գաւառում ևս աղջիկներին շատ փոքր հասակումն են պսակում և մանաւանդ՝ նշանում: Ուժ տարեկանը արդէն նշանում է, իննը-մաս տարեկանը՝ պսակում: Ես ներկայ եղայ Գետաշէնում մի նշանդրէքի, Հարսնացուն հազիւ ուժ տարեկան լինէր. մի կարճ, փոքրիկ աղջիկ էր, որ մարդկանց մէջ չէր երևում: Հայրը գրկեց նրան և կանգնացրեց թաղթի վրայ, որ փոքր ինչ երևայ: Եւ երբ քահանան առաջարկեց աջ ձեռքը մեկնել, որ մատանին դնեն մատը, նա ձախը մեկնեց: Խեղճ աղջիկը ապշած կուչ էր եկել, նրա դէմքը արտայալում էր, որ չի հասկանում, թէ ինչ են անում իւր հետ: Երբ քահանան հարցրեց, թէ համաձայն է ամուսնանալու փեսացու երիտասարդի հետ, նա շարունակեց անշարժ մընալ և կարծես չհասկացաւ էլ հարցը: Այն ժամանակ քահա-

նան բարկացած հրամայեց նրան, որ զլուխը շարժէ: Եւ նա խոկոյն շաբժեց:

Իրենց գիւղացիների ասելով եթէ աղջկան զգակով խփէք և նա վայր ըլնկնի՝ արդէն ժամանակն է պսակելու, նա տրդէն ուժեղ է և կարող է աշխատել:

Վերջին տարիներս միայն գիւղերի առաջաւոր, փոքր իշտէ կրթուած մարդիկը փոքր ինչ ուշ են պսակում իրենց աղջիկներին, սակայն սրանք էլ չեն թոյլ տալիս 14-15 տարին անցկենալու, որովհետեւ 17-18 տարեկան աղջիկը արդէն տանը մնացած է համարւում և միայն այրի մարդիկը կալող են նրանց ուզել:

Ծղաները, աղջիկների հետ համեմատելով՝ շատ ուշ են պսակում. սովորաբար 21 տարին անց, երբ զինուորական ձառակութիւնից կամ ազատում են և կամ կատարում: Բացառութիւն կազմում են անդրանիկ որդիները, որոնք զինուորական ձառակութիւնից ազատ լինելով, շարունակում են նախնի սովորութեամբ շատ վաղ, 14-15 տարեկան հասակում պսակուել:

Բացի զինուորազրութիւնից, նագսւն ևս բաւական մեծ աղջկեցութիւն է ունեցել պսակուողների հասակի վրայ: Պատանիները, երիտասարդները սիրով զիմում են բագու փող գիզելու, որպէս զի յետոյ պաակուին: Անցնում են տարիներ, և երիտասարդները թէւ մի քանի կոպէկով հարստացած, բայց ֆիզիքապէս և բարոյապէս աղքատացած վերադառնում են գիւղ և մատաղահաս աղջիկների հետ ամուսնանում: Դժբաղդաբար ամուսնացող գոյզերի տարբերութիւնը հետզհետէ մեծանում է, ամուսինը շատ աւելի քան հինգ տարին մեծ է լինում կնոջից: Խնամութեան աւտինաններ.—Եթէ պսակուողները աղջկեցութեան եօթերորդ աստիճանի են՝ սլակի թոյլտութիւն ստացում է տեղական կառավարութիւնից, եթէ վեցերորդ՝ կոնսիստորիայից, իսկ եթէ հինգ՝ սինոդից: Այսպէս և խնամութեան 5 աստիճանը թոյլ է տալիս կառավարութիւնը, չորրորդը կոնսիստորիան, իսկ աւելի մօտիկը՝ սինոդը:

Թէւ ոչ եկեղեցական, բայց սովորութեան իրաւունքով

Ծով չի տրւում որդեգրին ամռանանալ որդեգրողի որդիների կամ քուրերի, եղբայրների հետ:

Ընդհանրապէս պսակի թողտութիւն խնդրում են ոչ թէ
նշանագրութիւնից, այլ պսակից առաջ, երբ պսակուող զոյգը
միմեանց բաւական մօտեցած և ընտանիքներն էլ բաւական
ծախոներ են արած: Այս պատճառով էլ չհասութեան դէպքե-
րում շատ դժուար է լինում նրանց յետ կեցնել պսակելու խոս-
տումից, մանաւանդ որ ժողովուրդը նշանուած աղջկայ վրայ
այլ ես չի նայում որպէս նախկին անարատ կոյտի, մի օտարի
շունչ այնուամենայնիւ անցել է նրա երեսով: Եւ ահա այս է
պատճառը, որ նշանուած զոյգը ամէն միջոցի դիմում է պսակի
թողտութիւն ստանալու, և երբ ոչ մի կերպ չի յաջողուում,
հարսանիք են անում և փոխանակ պսակի խորհուրդը կատա-
րելու, հարս ու թագուօր հարսնեորներով շըջապատուած՝
գաւուլ զուռնի առաջնորդութեամբ գնում են եկեղեցու գաւիթը,
համբուրում եկեղեցու զուռը և վերագառնում: Այսուհետև նը-
րանք պսակուած են համարւում, թէև ժողովուրդը փոքր ինչ
ծուռ աչքով է նայում նրանց: Քահանան պայես չի յաճախում
նրանց տուն, չի օրհնում, նրանց չի հաղորդում, բայց նրանց
որդիներին մկրտում է և ապօրինի գաւակ համարում: Տասնեակ
տարիներից յետոյ կամ հոգեոր իշխանութիւնը գիշանելով իրա-
ւունք է տալիս պսակուելու և կամ սրանք որդեգրում են իրենց
գաւակներին, և կամ կտակով իրենց կարողութիւնը նրանց
թաղնում:

Ամստենացողների եւ սրանց ծնողների համաձայնութիւնը.—Ընդհանրապէս դեռ այժմս էլ հազիւ է պատահաւած, որ ամուսնացողների համաձայնութիւնը ամուսնութեան վերաբերմամբ հարցնեին և կամ անրան մի առանձին նշանակութիւն տայլին։ Եթէ հարցնում էլ են, այս էլ տղալին, իսկ աղջկան ոչ մի անգամ և ինչ հարցնեն, քանի որ նա մի փոքրիկ 8-9 տարեկան երեխայ է։ Չափահանների մերաբերութեամբ փոքր ինչ զգուշ են. սրանք, բռնութեան դէպքերում փախչում են իրենց սիրածի հետ։ Ամուսնութեան խնդրում գերակշռութեամբ այն ունին մայրերը և մանաւանդ աղջկայ մայրը։ Սա իւր

Հաւանած տղային գրաւելով՝ երբ տեսնում է, որ նրա ծնողները
և կամ իւր ամուսինը չեն համաձայնում, տալիս է տղային,
թէ փախցրու, և յստոյ, իբր թէ բալորովին անմասն է այդ
գործում, խփում է ծնկներին և աղմուկ բարձրացնում, թէ
տարան, աչքի լոյս աղջիկս տարան:

Պատահում են նաև դէպքեր, երբ ծնողները փեսացուի բացակայութեան միջոցին, առանց նրա համաձայնութիւնն առնելու, նշանում են նրան: «Հալալ կաթնակեր» տղալի՛ պարտականութիւնն է խոնարհել ծնողների կամքի առաջ:

Նշանադրութեան զանազան ձեւեր.—Այս դաւառում
կան նշանադրութեան հետևեալ ձևերը.

ա. Օրօրոցախագ.—Երբ երկու գերդաստան շտապում են շուտով բարեկամանալու և կամ երբ մինչ երեխաները չեն ապրում, փոքր հասակում և նոյն իսկ օրօրոցում նշանում են մանուկներին, որպէսզի միւս երեխայի բախտը ապրեցնէ և առաջնին։ Այսպիսի նշանադրութեան ժամանակ ծնողները խա-չաձև քեարտում են օրօրոցների լծերը և կարմիր կանաչ թել կապում վերայից։ Այսպիսի նշանադրութիւնն այժմ թէև քիչ, բայց և այնպէս՝ դարձեալ տեղի է ունենում։ Ճատ հազիւ է պատահում, որ այս ձեռու նշանադրուածները մեծանալիս հրա-ժարուէին ամուսնանալուց։ Փողովուրդն էլ սաստիկ դատապար-տում է այդպէս վարուսդին։

բ. ՚Մաղկազարդի նշանադրութիւն. — Նախապէս առնելով հարսնացուի ծնողների համաձայնութիւնը՝ տղայի մայրը կամ մի մօտիկ աղքական ծաղկազարդի երեկոյեան մի կարմիր քող է ձգում հարսնացուի գլխին և մի խաչանիշ մոմ, որի վրայ կարմիր և կանաչ ժեել է կապուած, տայիս նրա ձեռքի:

գ. Վարդավառի նշանադրութիւն: — Վարդավառին ճա-
շեց յետոյ զրեթէ բոլոր գիւղացիները հաւաքւում են մի ընդար-
ձակ, հարթ տեղ և դաւուլ զուռնի ներդաշնակութեամբ մի-
մեանց ձեռք բունած պարում «զոմփի» և այլ պարեր: Խմբա-
կան պարերից յետոյ սկսում են իշխանութեամբ կաքաւ: Այս ժամա-
նակ նշանուիլ ցանկացող երիտասարդին մասնի, նախապէս առած
լինելով իւր հաւանած լողակայ նոյզաց հայուածայնութիւնը,

բունում է այդ աղջկայ ձեռից, բերում զուռնաչու առաջ, մի կարմիր չարղաթ ձգում գլխին և հրամայում զուռնաչուն. Աստուած քո որդուն էլ էս օրին արժանացնի, մի լաւ հաւա (եղանակ) աճա:

Զուռնաչին իսկոյն մինչև ականջները փքում է այտերը և կարմրած աչքերը ճպճպացնելով՝ ածում ռ-պ-ն-դ-ռ-ր-ա-ն: Աղջիկն սկսում է պար գալ. իսկ նրա ապահաւ սկեսուրը միքանի պտոյտ է անում նրա շուրջը և պարի կիսին մօտենում նրան, համբուրում և մի խնձոր, մէջը մի մատանի և կամ արծաթի դրամ խրած տալիս ձեռքը, մի քիչ միրդ ածում գրպանը և ծապ տալով խնդրում շարունակել պարը: Աղջիկը խնձորը ձեռին շարունակում է պարել. կնոջ ազգականները «շօբօշ» են տալիս ալսինքն զուռնաչուն նուիրելու համար գրամներ են դնում պարելի բուռը: Իսկ սա մի քիչ էլ պարելուց յետոյ բռի դրամները ձգում է զուռնաչու առաջ և խնձորը ձեռին վազում գէպի իւր ընկերուհիները: Այնուհետև նա արդէն նշանուած է համարում այդ կնոջ որդու հետ, որ շատ անգամ հանդիսատես է լինում այդ ծիսակատարութեան:

Մի քանի աւելի լուսաւորուած գիւղերում երիտասարդը ոչ թէ լոկ հանդիսատես է լինում, այլ ինքն է զեր կատարում. երբ աղջիկը սրա ազգականուհիների ստիպմամբ սկսում է պարել, երիտասարդը նրան «շօբօշ» է տալիս արծաթ կամ ոսկի դրամ: Եւ եթէ նա ընդունում է, սրանով նա արտայաւտում է իւր համաձայնութիւնը. պարի վերջին նա իրեն տուած դրամը ձգում է զուռնաչու առաջ և ինքը փախչում:

Դ. Սովորական նշանապէս մի բարեկամի միջոցով աղջկայ ծնողների համաձայնութիւնը առնելով, երիտասարդի հայրը միքանի բարեկամների հետ մի երեկոյ գնում է աղջկայ տունը, տանելով մի մատանի, մի թունգի գինի, մի շիշ օղի և մի քիչ չոր մրգեր, մեղր և այլն: Այստեղ հրաւիրում են և աղջկայ բարեկամները, ինչպէս և քահանան: Քիչ խօսակցութիւնից յետոյ բոլորը նստում են ընթրելու, որի ժամանակ խմում են «ջուխտ օջախի կենացը» և բարեմախտում, որ Աստուած մի օջախից միւսին «խէր» տայ:

Ընթրիքից յետոյ քահանան կատարում է նշանադրութեան ծէսը. հարսին քողով ծածկած կանանց սենեակից բերում են տղամարդկանց մատ, կանգնեցնում երիտասարդի կողքին, քահանան հարցնում է սրանց փոխադարձ համաձայնութիւնը, երիտասարդը դնում է հարսնացուի աջ ձեռի մատնամատը բերած մատանին և ապա քահանան մի պահպանիչ—ով օրհնում է սրանց: Ի վերջոյ հանդիսականները մի մի բաժակ օղի են խմում, շնորհաւորում, բարեմախտութիւններ անում ու ցըրւում: Ամենից ուշ գնում են խնամիները, մի մի զոյգ գուլպայ նուէր ստանալով:

Այրի կնոջ նշանադրութիւն.— Այրի կնոջը նշանադրելիս, նախապէս առնում են նրա համաձայնութիւնը և ապա պաշտօնապէս խնդրում նրա ձեռքը նրա սկեսուրից կամ սկեսրայրից: Սրանք էլ պատասխանում են հարցնելով նրա կամքը: Այս ձևականութիւնը կատարում է մինչև անդամ և այն դէպքում, երբ այրի կինը այլ ևս չի ապրում իւր սկեսրանց տանը, այլ իւր ծնողների և կամ մի ազգականի մօտ: Համաձայնութիւնն ստանալուց յետոյ նոր փեսացուն գալիս է այրի կնոջ սկեսրանց տուն, համբուրում սկեսուրի և սկեսրայրի ձեռքերը, և նրանց մայրիկ ու հայրիկ կոչում: Սկեսուրը յիշելով իւր մեռած որդին, լայ է լինում, համբուրում է նոր փեսացուն, նրան որդի կոչում և իւր մեռած որդու զգեստներից նուիրում նրան, որ հազնի: Դրանից յետոյ նոր փեսացուն մի թաշկինակ և կամ մի դանակ է նուիրում հարսնացուին և նրանից ստանում մի այլպիսի նուէր, որով և նշանադրութիւնը կատարուած է համարում:

Թաս խմել.— Նշանադրութիւնից յետոյ փեսացուն մի քանի անդամ գնում է իւր հարսնացուին տեսնելու և ամէն անգամ տանում է զանազան ընծաներ, ինչպէս դանակ, թել, ասեղ, փոքրիկ հայելի, մրգեղէններ, և այլն: Զոնքանչն էլ դրանց փոխարէն ամէն անդամ մի մի զոյգ գուլպայ կամ չառազ է նուիրում նրան:

Մի օր էլ փեսացուն իւր ընկերների հետ է գալիս հարսին տեսութեան: Այս ժամանակ ընկերներից աւագագոյնը մի

շիշ օղի է բերում իւր հետ և սովորական հարց ու բարեկց յետով, ածում է մի բաժակ օղի, վերան հաց ու աղ դնում և տալիս փեսացուին, որ զոքանչի կենացը խմի: Փեսացուն բարեմախտութիւններ անելով խմում է և աղ ու հացը ուտում, որով և նա երդում է հաւատարիմ մնալ իւր ուխտին: Յետոյ ընկերներն են խմում օղի, բարեմախտութիւններ անելով և յօգուտ հարսի 20—25 կոպէկ նուիրում: Լաւ հիւրասիրուելուց և լնիւթելուց յետոյ փեսացուի ընկերները գնում են, ստանալով մի մի զոյտ գուլպայ նուէր, իսկ փեսացուն մնում է այլտեղ և գիշերում: Այս հանդէսը «Ժամա-խմել» է կոչւում:

Խոնչաներ.—Նշանադրութիւնից մինչեւ պատկան շատ անգամ տևում է մի և երեխն մի քանի տարիներ: Այս երկար միջոցում խնամիները հիւրասիրում են միմեանց և նշանաւոր տօներին ընծաներ ուղարկում: Այս ընծաները, որ խռնչում են կոչւում, ուղարկում են փեսացուի տանից, որի փոխարէն ստացում են հարսնացուի տանից աւելի էժանագին ընծաներ: Այս խոնչաները պարտաւորական են ու որոշ, և եթէ չուղարկուին, մեծ անբաւականութիւնների տեղիք կուտան:

Նշանաւորները ուղարկում են հետևեալ տօներին.

Մեծ պասին.—Այս պասի առաջին օրում ուղարկում է Դ հատ ձիթով եփած զաթայ, եփած կարտոֆիլ, լոբի, փլաւ, թթու դրած շուշան, սոխ, մի թունգի զինի և մի շիշ օղի: Սրա շիշի բերանին հարսնացուն ուղարկուվ զարդարում և շորից մի գեղեցիկ խցան է շինած լինում: Այս խոնչան կոչւում է «պաս շնորհաւորէքի» և տանում է տան հարսներից կամ երեխաներից մինը: Բերողին մի թաշկինակ, կամ մի զոյտ գուլպայ և կամ 10—15 կոպէկ նուէր են տալիս:

Միջունին. — Մեծ պասի առաջին շաբաթում ցորենը լցնում են տաք ջրի մէջ, յետոյ լցնում մի տաք պուտուկի մէջ, բերանը ծածկում. հետևեալ օրելը կրկին տաք ջուր են շաղ տալիս պուտուկի մէջ և յետոյ ջուրը քամում, պուտուկի բերանը ծածկում: Մի քանի օրից, երբ ցորենը ծլում է, լցնում են մի խոնչի մէջ և շարունակում ամէն օր տաք ջուր շաղ տալ և սաւանով ծածկել: Միջունքին, երբ արդէն բաւակա-

նաչակի ծլած է լինում, մօտը դնելով ձիթով եփած փլաւ, լոբի, խնձոր և ալին, զինի, օղի, ուղարկում են հարսնացուի տուն: Սրանք էլ դանակով կտրում են ծիլերը, լցնում տաք ջրի մէջ, մի քանի անգամ ձեռքով ճմլում, յետոյ քամում, մաղի միջով, և ապա նորից կաթսայի մէջ լցնելով՝ մի քիչ ալիւր են մաղում վերան և դնում կրակին եփելու: Թիւլ հիւթը գուրս է գալիս և մի տեսակ թանձր, քաղցր հեղանիւթ կազմում, որ յետոյ հացի վրայ քսելով ուտում են:

Զատկին. — Ուղարկում են՝ մօտաւորապէս 15—20 հատ կարմիր ներկած ձու, մի շիշ օղի, և տան մեծի համար մի զոյտ գուլպայ: Երբեմն սրանց փոխարէն ուղարկում են միայն մի թաշկինակ, ծայրին 50—60 կոպէկ կապած: Քաղաքում ուղարկում են հարսի և նրա քոլը երի ու մօր համար զանազան ընծաներ, մի զառ՝ կանանչ կարմիր մետաքսեայ թելը պողերին կապած:

Վարդավառին. — Մի քանի զոյտ զաթայ, կաթնաւ (կաթով եփած բըինձ), մի տապակուծ հաւ, երկու ապսէ ձուածեղ, որոնցից մինը պատկանում է առանձնապէս փեսացուին, պանիր և ալին:

Նոյն օրը հարսնացուն իւր ձեռքով փնջած ծաղիկներից մի փունչ գնելով մի ապսէի մէջ և շուրջը խնձորներ դարսելով ուղարկում է փեսացուին:

Նաւասարդ. — Առաւոտեան շատ վաղ, արևը դեռ ևս չծագած, հարսնացուի տանից մինը տանում փեսացուի տան հերթիկից, ընկոյզ, խնձորներ և զանազան, չորացրած մրգեր է վայր ածում, և հերթիկից «ճլուանք» — խնձորի կամ տանձի շարան — կախում:

Խոնչաներ է ուղարկում նաև խոտի քաղը վերջացնելիս, ցորենի կալսելն սկսելիս և ալին:

Խաչեղբայր կամ պէլ. — Գանձակի գաւառում ևս խաչեղբայրը տոհմական է լինում, մի քանի սերունդ շարունակ միւնոյն տոհմի սերունդներից են հրաւիրում իրենց խաչեղբայրներին: Անհրաժեշտ չէ, որ միշտ միւնոյն անձը լինի խաչեղբայր, բաւական է, որ միւնոյն տոհմից լինի: Խաչեղբայրները շատ

մեծ յարգանք են վայելում սանամօրանց կողմից, ամէն ուրախութեան և տիսրութեան դէպքերում լսաչեղբարը ներկայ է դտնւում և առաջնակարգ պատիւ ստանում։ Սահամարը մինչեւ մահ երբէք չի խօսում նրա հետ, ի նշան իւր յարգանքի, մինչեւ անգամ նրան տեսնելիս թաք է կենում և նրանց տան դռնից երբէք չի անցկենում։

Խնամիու. — Պսակադրութիւնից մի քանի շաբաթ առաջ փեսացուի հայրը մի քանի բարեկամների և քահանայի, տանուտիրոջ, երեցփոխանի և ուրիշ մի քանի մարդկանց հետ մի երեկոյ գնում է հարսնացուի յունը, ուր հաւաքուած են լինում նաև նրանց մօտ աղդականներից մի քանիսը։ Ընթրիքեց յետոյ ընտրում են երկու խնամիների կողմից էլ մի մի մարդ, որոնք տեղական բարբառով կոչում են «խնամիու» և որոնց պաշտօնն է վկայ և ապագային պահանջող լինել, որ այդ երեկոյեան թէ փեսացուի և թէ հարսնացուի ծնողների կողմից տուած խոստումները ճշտութեամբ կատարուին։ Քահանան մի մի բաժակ գինի տալով նրանց, օրհնում է, որ իրենց գործի մէջ արդար և անշահախնդիր լինին։

Ապա այս երկու խնամիսները խնամիների հետ որոշում են հարսանիքի օրը և այն գումարը, որ փեսացուի հայրը պիտի տայ հարսնացուի հօրը։ Այս գումարը, որ տատանում է 15—100 ր. մէջ, այս գաւառում կոչում է «պետինքի փող», որովհետեւ այս գումարի մի մասը ծախսում է հարսնացուի օժիտի վրայ, կամ «երեսջուր»։

Բացի այս գումարից, որոշում է, որ տղայի հայրը տայնաւ 5—5 կուժ գինի, 16—20 ֆունտ պանիր, $1\frac{1}{2}$ —2 բաթման օղի, մի խոյ, մսացու եղան կէսը (և նոյն խոյ եղան կաշուի կէսը) և մի մի նուէր հարսնամօր, եղբօր ու քրոջ համար։

Երբ խնամիսները մի որևէ բանում չեն կարողանում համաձայնութեան գալ, քահանան և միւս հրաւիրեալները միշամտում են։ Ի վերջոյ փեսացուի հայրը վճարում է որոշուած «պետինքի փողը», և ցրում են։

Ճռ ձեւել. — Խնամախօսից մի քանի օր յետոյ փեսացուի բարեկամ կանայք հրաւիրում են փեսացուի տուն, ուր հան-

դիսաւոր կերպով մի կին նախապէս նուէրներ ստանալով գրէթէ բոլոր հանդիսական կանանցից, ձևում է փեսացուի և հարսնացուի հարսնաներան շորերը և վերմակի ու ներքնակի աստառը։ Այս վերջինը ուղարկում են հարսնացուի տուն, որպէսզի նրանք բրդով լցնեն և երես քաշեն և ապա օժիտի հետ բերեն։

Տաւորէֆ. — Հարսանեաց շաբթի հինգշաբթի օրը փեսացուի մայրը հրաւիրում է աղգական և հրաւեան կանանց՝ հարսանիքի տաշդրէք ծիսին ներկայ գտնուելու։ Երբ հաւաքւում են, իմորի տաշտը գնում են սան մէջ տեղը, ծայրին մի մի մոմ վառում, մետաքսի կանաչ կարմիր թելեր ձգում աջ կողմում և յետոյ մի փոքրիկ աղջիկ չոքում է տաշտի առաջ և բռնում ձեռին մաղը, մի ուրիշ փոքրիկ արու երեխայ ալիւր է ածում մաղի մէջ և աղջիկը մաղում է։ Այս միջոցին նրանց շրջապատող հրաւիրեալները «Աստուած շնորհաւոր անէ» ասելով՝ 10—20-ական կոպէկ են դնում տաշտի ափին. այս նուէրները պատկանում են հարսնացուին։ Երբ բոլորը տալիս են նուէրներ, հացթուխի կարգադրութեամբ երեխաները դադարում են ալիւր մաղելուց և պահանջում են փեսացուի հօրն ու մօրը, որոնք գալով՝ մի թաշկինակ են նուիրում ալիւր մաղողին և մի զոյգ գուլպայ ալիւր ածողին։ Երեխաները շարունակում են մաղել, բայց քիչ յետոյ կրկին ընդհատում են և պահանջում փեսացուին, որ գալիս է և մի թաշկինակ նուիրում հացթուխին։ Այս ժամանակ արդէն հացթուխը ինքն սկսում է մաղել ալիւրը։

Անմիջապէս ճաշ են տալիս բոլոր հրաւիրեալներին, որից յետոյ աւելի մօտ աղգականներից ընտրում են մէկին՝ «խմորը պիւլող», երկրորդին՝ «պիւլը տուող», երրորդին՝ «լոշը տանող», և չորրորդին՝ «թխած հացը դարսող», որոնց խմեցներով մի մի բաժակ օղի, խնդրում են հետեւեալ օրը շատ վաղ գալ, իրենց պաշտօնները կատարելու։ Եւ երբ միւս օրը, հացթուխը շրջապատուած իւր չորս օգնականներով սկսում է հաց թխել, հարսնացուի տանից հինգ թաշկինակ է նուէր գալիս, մինը, ամենալաւը, հացթուխին, իսկ միւս չորսը՝ միւս կանանց։

Ստանալով նուէրը՝ հացթուխը մի քիչ ալիւր և գինի է

ածում թոնրի մէջ, խաչակնքում է երեսը, բարեմախտութիւններ անում և սկսում թխել: Առաջին հացը ուղարկում է հարսնացուին, որից և ստացում է նրանց տանը թխած առաջին հացը թագաւորի համար: Միւս հացերից ուղարկում է միւս բարեկամներին, որոնք 5—10 կոպէկ նուէր են տալիս յօդուտ հացթուխի:

Խոկ քաղաքում առաջին եօթ հացը և մի թունզի գինի ուղարկում են հարսնացուի տունը. որանք էլ վեց հաց (անշուշտ զոյգ), փեսացուի համար մի շապիկ, մի զոյլ գուլպայր մի մետաքսեայ թաշկինակ և հացթուխի համար մի քանի գլխի թաշկինակներ են ուղարկում:

Մինչդեռ կանայք հաց կը թխեն, տնեցիներից մի քանի տղամարդ օդու շշերը ձեռքերին շրջում են գիւղը և խնդրում մասնակցել հարսանիքին:

Մսացու մարթելը.— Ուրբաթ օրը, կէսօրից յետոյ փեսացուի հայրը հրաւիրելով խնամխօսներին և մի քանի բարեկամներ, դաւուլ զուռնի առաջնորդութեամբ տանում է մի հրապարակ տեղ մի եղն: Այստեղ հաւաքւում են գիւղի հարսներն ու աղջկներն էլ և սրանցից մի քանիսը երեսները կարմիր չարդաթով ծածկած պարում են: Սյա միջոցին եղի ոտները կապելով վայր են գլորում. իսկոյն թագւորը իւր քաւորի հետ, ձեռներին մի մի վառած մեղրամոմ բոնած մօտենալով եղին, իւր դանակով խաչածե նշան է անում նրա բկի վրայ և յետոյ մի քիչ կտրելով՝ դանակը արիւնաթաթախ դնում է զրապան: Խոկ քաւորը մօտ մի ըուբլի նուէր է տալիս սսավաճառին, որ մորթէ եղը: Թագւորը այս դանակը այդպէս արիւնոտ և փակուած պահում է իւր մօտ մինչեւ առագաստ մտնելը, որով և «բոլոր չարերը կապուած են մնում և ոչ ոք չի կարողանում զրկել նրան առնական զօրութիւնից»:

Քաղաքում դանակի փոխարէն մի կողպէք են թաթախում արեան մէջ, կողպում և արդպէս պահում մինչեւ առագաստի գիշերը:

Մսացուն մորթելուց յետոյ բոլորը ցըւում են, մնում են միայն խնամխօսները, որոնք ընթրում են և դիտում, որ տը-

զալի հայրը, իւր խոստման համաձայն, մորթած եզի կէսը, մի խոյ, որոշեալ չափով գինին, օդին և սպանքը ուղարկէ հարսնացուի տունը: Մի քանի գիւղերում այս բոլորը բարձում են մի ձիւ վրայ և գաւուլ-զուռնի առաջնորդութեամբ տանում:

Թագակապ.— Ճարաթ օրը առաւօտեան հրաւիրում են ազդական և հարսնայք թագուարին թագ կապելու: Արանք բոլորն էլ մի խնձորի մէջ արծաթի գրամներ ցցած և մի քանի մետաքսեայ թել բերում և տալիս են խաչեղբօր կնոջը: Սա ինձորներն ու դրամը յանձնում է թագուարի մօրը, ոտ մի օգնութիւն է, որ գիւղացի կանայք անում են հարսանիքի ծախսերը թեթևացնելու նպատակով: Յետոյ մետաքսեայ թելերից, որ երեք գոյնի՝ կանաչ, կարմիր և սպիտակ են լինում, հիւսում են մի գեղեցիկ պատկ և ամբացնում թագուարի գլխարկի վրայ: Ապա այս գնելով փեսեղբօր գլխին՝ պար են ածում և վերջը յանձնում թագուարին: Այս ծէսը կոյւում է ինչպէս թագակապ, այնպէս և կարմիր-կանաչը կապել: Հրաւիրուածնորին հիւրասիրում են ճաշով:

Քրերօննելք.— Վավորաբար հարսնացուի հարսանեկան շորերը թագուարի հայրն է պատրաստել տալիս իւր հաշուով. սա քաղկանում է մի քուլաչալից, մի միտաքսեայ շապկից, մի նոյնական մետաքսեայ զօտուց, մի կարմիր չարդաթից, մի զոյգ հողաթափներից և զանազան նուէրներից, նայած թագուուրանց կարսողութեան: Նոյն շաբաթ օրը, երեկոյեան քահանան հրաւիրում է թագուարի տունը՝ այս հանգերձը, որ քթիթ է կոչում, օրհնելու: Սյա բոլորը մի սկսակը մէջ գնում են տան օշախի մօտ, թագուարի հայրը վերցնում է թագուուրի գլխարկը և դնում քթիթի վրայ, թագուարը և խաչեղբարը մի մի մոմ ձեռներին՝ կանգնում են քթեթի մօտ: Քահանան օրհնում է քթեթը և աւետարանը զնելով նրա վրայ, բոլորին հրաւիրում խաչամբոյր ձգելու: Թագուարի հայրը խաչամբոյր ձգելով՝ վերցնում է գլխարկը և տալիս թագուարին, իսկ մի ուրիշ կին վերցնում է քթեթը և պահում:

Սամիրելու ծէսը.— Քթեթօրհնէքից յետոյ թագուարը իւր մակարներով շրջապատուած սակրուում է: Սա նստում է

մի աթոռի վրայ, աջ կողմում կանգնում խաչեղբայրը, ձեռին մի մոմ բռնած: Այս միջոցին դալիս է թագուրի մայրը ձեռին մի բաժակ զինի բռնած, թաթախում է մատը դինու մէջ և խաչաձե քսում թագաւորի այտերին և ապա մի քանի կաթիլ էլ ածում տան օջախի մէջ: Սափրիչը մի քանի կոպէկ պոկելով խաչեղբօրից, սկսում է սափրել թագուրի մորուքը և երբ կիսին է հասնում, դադարում է, և ձայն տալիս. «Այ մակարներ, թագաւորը գերի է, ազատեցէք, կը խայտառակուի»: Մակարները համբուրում են թագուրին և մի քանի կոպէկ նուէր տալիս սափրիչին, դնելով թագուրի ձեռքը տուած հայելու վերայ: Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ սովորութիւն է եղել, որ թագուրի գլուխն էլ սափրում էին և միայն ճակատի մօտ մի խաչաձե փունջ թողնում: Մակարները համբուրում էին այս փունջը և նուէրներ տալիս:

Թագաւորից յետոյ սափրում է խաչեղբայրը, և այս ժամանակ թագաւորն է մոմը ձեռին նրա մօտ կանգնում, ապա փեսաղբէրը, մակարբաշին և մակարները, բոլորն առանց բացառութեան, այնպէս որ մորուք չունեցողներին անդամ նստեցնում են և երեք անդամ ածելին քսում նրանց երեսով:

Գետաշէնում և մի քանի այլ գիւղերում նախ սափրում է խաչեղբայրը և ապա թագուրը:

Քաղաքում սափրելու ծէսը կատարում է բաղնիսում, ուր միայն քաւորը վճարում է թէ սափրիչին և թէ բաղնիսպանին, բոլորի լողանալու վարձը: Առաջները սովորութիւն էր, որ դաւուլ դուռնան ածեր բաղանիսի դաւթում:

Հարունառ.—Սափրելու ծէսից յետոյ բաւական պարում են և ապա դաւուլ գուռնան առհարի եղանակը ածելով հրաւիրում է բոլորին գնալ հարսնառ, հարսի տունը: Խոկոյն թագուրի քոյրը կամ հարսը գնում է զլխին հարսնացուի քթեթը մի սկուտեղի մէջ դարսուած, մի ուրիշ սկուտեղ էլ հարսնացուի տնեցիների համար նուէրներով դնում են մի երիտասարդի զլխի, և պարելով, երգելով, հրացան արձակելով թագուրի հետ միասին գնում հարսնացուի տունը: Այստեղ սկուտեղ կրող հարսն ու երիտասարդը պար են դալիս և նուէր ստանալով

հարսնացուի մօրից մի թաշկինակ և մի զոյտ գուլպայ՝ տալիս են սկուտեղները նրան: Յետոյ, երբ բոլորը ներս են մտնում, քահանան այստեղ ևս օրհնում է նշանը և խաչկամբոյը հաւաքում:

Խոկոյն տանում են հարսնացուի համար բերած «թագի տակի» շորերը միւս սենեակը կամ միւնոյն սենեակի կապերտներով առանձնացրած բաժինը, ուր գտնում է հարսնացուն, շրջապատուած մի քանի հարսներով և ընկերուհի աղջիկներով: Այստեղ էլ հարսներից մինը, որ արու առջինեկ զաւակ է ունեցած, ընտրում է զլխաւոր և սկսում է հարսնացուի հարսանեկան շորերը հագցնել: Այս միջոցին ընկերուհիները մեղմ ձայնով երգեր են ասում և հարսնացուին գովում: Հարսնացուն սաստիկ զգացուած լաց է լինում. ընկերուհիները գգում են նրան. զալիս է նաև մայրը, փաթաթւում աղջկան, լաց լինում և ապա նրա արտասուքները կտրելո. յուսով յանդիմանում նրան ասելով. «Խի ես լաց ըլում, ո՞ր աղջիկն ա իր հօրտանը մնացել, որ դու մնաս: Մի բուռը մոխիր ես՝ ուրիշին ենք տալիս, պէտք ա գնաս, ջուրն ենք քցում՝ պէտք ա սուսկենաս, ընկնես. կրակն ենք քցում, պէտք ա աչքերդ խփես, մէջն ընկնես: Վախել մի, քու հէրն ու մէրը անջիգար չեն. քեզ ոչ ջուրը կը քցէն, ոչ կրակը»:

Մինչեռ մայրը այսպէս խրատում է հարսնացուին, զլխաւոր հարսը սանրում է նրա մազերը, հիւսում, կունովը ձգում և մի համբոյր դրոշմում նրա ճակատին.—սա առաջին համբոյրն է, որ այդ հարսը, որպէս բոլորի մէջ զլխաւոր՝ առնում է հարսնացուից: Եւ երբ բոլոր շորերը հագցնում է, կանչում են խաչեղբօրը, որ գոտին կապի: Սա էլ մի խնձոր, մէջը մի քանի կոպէկանոցներ խրած տալիս է հարսնացուին շոր հագցնող հարսին և նրանից ստանալով գոտին, երեք անդամանց է կացնում հարսնացուի վզով և կապում մէջքին, բարեմախտելով, որ նրա առջինեկ որդին արու երեխայ լինի:

Յետոյ զալիս է հարսնացուի հայրը, դրկում նրան, համբուրում և ասում. «Բալա ջան, իմ ամակը (երախտիքը) չմոռանաս, հօրդ չմակին խէթ աչքով չմտիլ տաս: Աստուած քեզ

ու խաչեղբարը, որանց հետևում է հարսնացուն՝ իւր կոնախ-պէրներով, իսկ մակարներն ու հարսներները շրջապատում են որանց։ Կռնադպէրներն աշխատում են թող չտալ, որ թագաւորի և թագուհու միջից մարդիկ անցկենան, որպէսզի թագուրը «չկապուլ»—չլորցնի իւր առնական գօրութիւնը և այս նպատակով էլ նրանք, հարսնազբէրները, երբեմն բռնում են թագուրի և խաչեղբօր փէշերից։ Երբ մօտենում են եկեղեցուն, խաչեղբարը մի քանի կոպէկ է նուիրում ժամկոչին, որ բաց անի եկեղեցու դուռը. Խոկոն մակարբաշին հանում է իւր գըրչատը և բաց արած պահում, որպէսզի թագուրը եկեղեցի մտնելուն պէս խոկոն փտկի, որով և ազատի նրան «կապ ընկնելուց», որով հետեւ եթէ այդ միւսնոյնը մի թշնամի անի, թագուրը կը կորցնի իւր առնական գօրութիւնը։

Եկեղեցում քահանան նախ խոստովանեցնում է հարս ու թագուրին, ձեռք ձեռքի տալիս և ապա զլուխ գլխի դրած պսակում. խաչեղբարն էլ խաչն աւելուրանի վրայ դրած դնում է սրանց զլխներին։ Եւ մինչեւ քահանան պատկի խորհուրդն է կատարում, թագուրը որոնում է թագուհու մատների մէջ այն մոմի փոքրիկ կտորը, որ վերջինիս ընկերուհիները դրել են, կամ ենալով փոքրձել նրա խելացիութիւնը։ Թագուհը եթէ գտնում է այդ մոմը, տալիս է մակարբաշուն, ոտ էլ ցոյց է տալիս թագուհու ընկերուհիներին և դովում թագաւորի խելքն ու շնորհքը, իսկ եթէ չի կարողանում գտնել, դարձեալ յայտնում է նրան, որ մի ճար անի, ապա թէ ո՞չ նրանց ծաղրին առարկայ կը դառնալ։

Պատկի խորհուրդը կատարելուց յետոյ քահանան տալիս է Աւետարանը թագաւորի ձեռքը, իսկ խաչը՝ թագուհու, և հրաւիրում հարսներին խաչամբոյի ձգելու։

Ապա դառնալ գուռնան նորից ածում են և բոլորը նոյն կարգով ուղղւորւում են գէպի թագուհու տուն, այս անդամ անպատճառ անցնելով խաչեղբօր տան դոնից։ Խաչեղբօր տան առաջ հարսներները անշուշտ կանդ են առնում. խաչեղբօր մայրը ընդ առաջ է գալիս հարս ու փեսին, նրանց շուրջը պարելով մի քանի պտոյտ անում, ապա համբուրում հարսին

ջուխտ ձեռքով քու տիրունջը բաշխի։ Հիմիկանց դէնը քու տէրը առաջ Աստօծն ա, եղնա այս ինչը (փեսացուի հայրը)։

Այս ասելով, հայրը հեռանում է, թողնելով որ այժմս էլ մայրը գրկախառնէ նրան և խրատէ. «Բալա ջան, ուր էլ ըլիս, մօրդ է մտահան չանես։ Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել, թէ տան միջին կտրի տակին, թէ աչքից հեռու թէ աչքիս աղաքին հաղար մի խրատներ եմ տուել, օրհնանք ու անէծք ասել. այս որդի, անէծք ջուրը տանի, օրհնանք գլխիդ գեօլ տայ։—Ղամի ըռելիը տան, որի ծէրովը ծակտեն, զլխիդ մոխիր մաղեն անունդ չկոտրես, միշտ հաւառ չաւառ։»

Մինչ հարսնացուի բաժնում այս է կատարւում, տղամարդկանց բաժնում մի բարձր թաղթի վրայ թագուրը բազմած, իւր մակարներով շրջապատուած հագնում է աներոջից ստացած մի զոյտ զուլպան և վերան կապում դոլազը, իսկ թաշկինակն առնում ձեռքը։ Այս միջոցին զուռնացն մօտենալով թագուրին, ծվծացնում է զուռնով և թագաւորի հին զուլպաները պահանջում, օրէնքով դրանք նրան են պատկանում։

Պատկի գնալ։—Վերջապէս պատրաստում են գնալ նկեղցի. թագուրը, աջ կողմին խաչեղբարը, գնում կանգնում է օջախի մօտ, հարսնացուին երկու հարս կոներն ընկած և միւս ընկերուհիներով շրջապատուած՝ գուրս են բերում և թագուրի յետեւ կանգնեցնում։ Անմիջապէս թագուրի և թագուհու եղբարները, կամ մօտիկ ազգականներից երկու պատանիներ փոխարինում են թագուհու կուռը բունող հարսներին. սրանք կոչւում են կոնաղբերներ։ Եւ սրանցից հարսնազբէրը մի գդակ է նուիր ստանում թագաւորի տնեցիներից։ Այս միջոցին թագուհու մայրը երկու մոմ ձեռին մօտենում է թագուրին, համբուրում նրան և մի մոմը տալիս նրան։ Թագաւորը խոնարհում, համբուրում է զոքանչի ծիծածի կաթողանում գտնել, դարձեալ յայտնում է նրան, որ մի ճար անի, ապա թէ ո՞չ նրանց ծաղրին առարկայ կը դառնալ,

և մի կարմիր չարդաթ նրա գլխին ձգում: Ապա բոլորին հրաւիրում դռան առաջ սարքած սեղանից մի բան ուտելու և մի բաժակ գինի խմելու: Սովորաբար սեղանի վրայ դրուած է լինում դաթայ, հալուայ, եղածու, կարագ, մեղր, տապակած հաւ, խնձոր և այլն: Այսպիսի սեղաններ սարքուած են լինում նաև միւս մօտիկ բարեկամների դռների առաջ:

Ի վերջոյ հարսնեորները հասնում են հարսնացուի տունը, ուր հարս ու փեսին առաջ են բերում մի աման եղածու, մի մի պատառ ուտեցնում նրանց և մսացածը տալիս մակարբաշուն: Կերս մտնելով թագաւորը բազմում է իւր թաղթին, իսկ հարսը գնաւմ է իւր բաժանմունքը. մակարներն ու հարսի ընկերները մնում են, իսկ միւս հարսնեորները ցրում:

Փիփ, Բանանց և այլ զիւղերում այս միջոցին նորահարսենց բակրում մի ձողի ծայրին ցցում են մի խնձոր, իսկ ներքեւից քաշ տալիս նորահարսի ձեռքով դործած մի զորդ զուլպայ, ապա մակարներն սկսում են հրացան արձակել և աշխատել գնդակով խփել խնձորին և թոցնել այն ձողի ծայրից, ում յաջողւում է այդ, նա բոլորից գովաբանում և իբր մրցանակ՝ ստանում այդ գուլպաները *):

Երեկոյին, երբ զուռնան աճում է հարսնետանը, բոլոր հարսնեորները նորից հաւաքում են հարսի տունը, ուր անմիջապէս սուփրաներ են փռում և ընթրիք տալիս: Թաղթի վրայ իւր մակարներով շրջապատուած թագաւորը նստած է լինում և բերանը մի կտոր բան չի դնում, մինչև որ աները մի որևէ բան չի նուիրում նրան իբր «ԷԵՐԱՆՔՄՈՒՀ»: Բայց իրեն այդպէս ծանր ու մեծ պահող թագաւորին սաստիկ սեացնում են թագուհու ընկերուհիները, եթէ նա դտած չի լինում նորահարսի մատների մէջ պահուած մոմը: Աղջիկները ցոյց են տալիս այդ մոմը մակարներին և ծիծագում են թագաւորի անշնորքութեան վրայ և երբ հէնց իրեն են ուղարկում, նա կարմրելով փող է վճարում, որ թագցնեն. եթէ աղջիկները քիչ են համարում այդ՝ վերադառնում են փողը և կրկին ցոյց,

*) Աւետիքեան. Նահատակը. եր. 44.

տալիս մոմը, մինչև որ, վերջապէս, գոհացումն ստանալով թագաւորից, թագցնում են: Ընթրիքից յետոյ հարսնեորները ցրում են, մնում են միայն թագուորը իւր խաչեղօրովլ և մտերիմ մակարներով, որ նորից սեղանին ծառայողների հետ հացի նստելով՝ քէֆ են անում մինչև լոյս:

Հարս տանել. — Կիրակի առաւօտ մակարները և հասնեորները նորից հաւաքում են հարսնացուի տանը, նախաճաշիկ անում և պատրաստում հարսը տանելու փեսալի տունը: Հարսը շրջապատուած իւր ընկերուհիներով դուրս է զալիս իւր առանձնարանից և մտենալով օճախին, ծունը է խոնալինում նրա առաջ և մի քիչ մոխիր վերցնում: ապա դառնալով իւր հօրն ու մօրը, համբուրում է նրանց ձեռքերը և լաց լինում: Այս միջոցին փեսան էլ մտենում է հարսի ծնողներին, համբուրում նրանց ձեռքերը և կանգնում հարսի մօտ: Անմիջապէս հարսի հայրը բունում է հարսի ձեռից և տալով փեսի հօրը ասում. «Քու որդուն տուայ, Աստուած իւէր տայ, Լստուած ամօթալի չանի»:

— Տուածդ բաղդասոր ըլի, խնամի ջան, պատասխանում է փեսի հայրը, ստրան դէնը սա իմ որդին ա, աչքիս լիի պէտ կը պահէմ:

Ապա հայրը համբուրում է աղջկան և օրհնում, չմոռանալով նաև բարեմախտել. կալիդ քամի ըլի, ջաղացիդ նորաթը ըլի, ջրիդ հերթ ըլի և այլն:

Այս ժամանակ խնամախօսները պահանջում են, որ հարսի օժիտը բերեն, որ և կատարում են: Իսկոյն խնամախօսներից մինը բաց է անում ամէն ինչ և մի առ մի բոլորին ցոյց տալով բղսուում.

— Ճէն կենայ, խնամին տուել ա հարսին
Մի տեղաշոր,
Մի խալիչաց,
Մի սանդուղ,
Մի ջեցիմ,
Մի մաֆրաշ,
Մի խուրջին,
Մի ջուալ,

Մի սանդրաման, որի մէջ լինում է մի հայելի, մի սանդր, ամելիներ, քորոցներ:

Գուլպաներ,
Դոլաղներ.
Տրխետաններ,
Թոռթունի ու փողի քիսաներ,
Սմետաններ,
Հասուններ (թոլ),
Սքյան,
Կեարդակ,
Կուժ սրնձ,
Կժի պնդան և այս *).

Այս ամէն մի իբր ցոյց տալիս մակարները իբր պատաշան բղաւում են.

Աստուած շնորհաւոր անի, բարով մաշեն, հազարը մաշեն:
Երբ բոլոր օժիտը ցոյց է տրւում, փեսի հայրը 5—10
լուբլի նուէր է տալիս հարսի մօրը իբր «Ճախահախ» և օժիտը
պատրաստելու վարձ: Եւ ապա բոլորը բարձում են մի ձիու,
տնեցիներից մինին էլ վերան նստեցնում և ուղեկորում դէպի
փեսի տունը: Այս ժամանակ դաւուլ զուռնան ածում է «տա-
րան հայ» եղանակը և չարաճի մակարները հարսի մօրը լա-
ցացնելու նպատակով երգում են.

Մէջքդ կոտրի, հարսնամէր **)
Կուռդ ¹⁾ կոտրի, հարսնամէր,
Ռոտդ կոտրի, հարսնամէր,
Աչքդ դուրս գայ, հարսնամէր.
Է, բէյմուրիվաթ ²⁾, էս ինչ ա,
Ռախմէդ ³⁾ գնում ա, էլ չի դալ...
Եդ հր օր էր, հր սհաթ,
Որ եադը ⁴⁾ կոխեց էս մղակ ⁵⁾.

*) Այժմ վոքքը առ վոքքը սովորութիւնն է դաւնում իբր օժիտ և դրամ տալ, իսկ փեսացուից բացի հարսնեկան հագուստից և միքանի նուէրներից, դրամ (պետինքի փող) չպահանջել: Քաղաքում, ուր արդէն բաւական ըն-դունուած է այս սովորութիւնը, աղքատ լնտանիքները դունէ դուռ են քնկնում և նուէրներ հացում, իրենց աղջկներին օժտելու համար:

**) Այս և միքանի ուրիշ երգեր և նիւթեր մեզ տուեց Պ. Տէր-Աւետիքեան.

1) Ձեռքդ, 2) Անգութ, 3) Երեխադ, 4) Ուրիշը, օտարը, 5) Տան շէմք

Ինչ չառար դազանակ ⁶⁾,
Որ չը կոխեն քու մղակ...
Եկան ու քեզ խաբեցին,
Մի ջիբ չամչով կապեցին ⁷⁾,
Քու դօվլաթը ⁸⁾ խլեցին,
Քու կուլտանը ⁹⁾ պատուեցին. . . .
Էլ լաց միլիբ, սրտամեռ ¹⁰⁾,
Բանն անցել ա, հօրամեռ ¹¹⁾,
Բախիդ թուշէն ¹²⁾ պաչ արա,
Կուլաւն ընկի ¹³⁾, ճիտ արա,
Ճանապա դիր մեզ հրետին ¹⁴⁾,
Թունգին մակարի ձեռքին ¹⁵⁾,
Մանէթը դալի ճակատին ¹⁷⁾. . . .

Մի քանի գիւղերում հարս ու փեսան նախ ուղեկորում
են համբուրելու գիւղի օճախից և ապա դնում տուն: Գիւղի
օճախը, որ Վարանդալի բոլոր գիւղերում գրէթէ առանց բա-
ցառութեան կայ, մի սովորական օճախ է, միայն պատկանե-
լիս է եղել գիւղի հիմնագրին և կամ առաջնակարգ և երկար
ժամանակ գիւղը կառավարող անձին:

Երբ հարս ուրիշ կիւղ է տարւում, մի մարդ ուղարկում
են, որ իմաց տայ: Սա տեղական բարբառով կոչում է աղուէն:

Այս կոչումը դրան տպի իրենք գիւղացները այսպէս են բա-
ցառում: որովհետեւ ճանապարհորդութեան ժամանակ աղուէն
տեսնելը բախտաւորութեան, իսկ գալ տեսնելը դժբախտութեան
գուշակ է համարւում, ուստի և ընդառաջ եկող մակարները
սրան տեսնելիս «աղուէս, աղուէս» են բղաւում, այսպիսով ցան-
կանալով, որ ճանապարհորդութիւնը յաջող և ուրախ անցնի:
Մի քան ևս ուշազրութեան արժանի է. այս գնացքի ժամա-
նակ մակարները առանց ալլեւալլութեան սրով խփում սպա-

6) Հաստ ձեռնափայտ, 7) Լեզուդ կապեցին, 8) Քո ամենաթանգարին երե-
խացին, տան ամենաազիզ անդամին, 9) Գլխի կարմիր թաշկինակը, աղլուխը,
որը զարդարանք է համարւում, 10) Սրակց զուրկ, 11) Հօրից զուրկ, սրա-
մեռ նաև գործ է ածւում իբրև անէծք սիրտդ մեռնի, հօրամեռ-հայրդ մեռ-
նի, 12) Երեխադից այսերից համբուրիր, 13) Կուլաւն ընկի-գրկի, 14) ճիտ
արա—մեղմիր, 15) Ջուտով ճանապարհ դժիր մեզ, 16) Մի թունգի դինի դիր
մակարներից մէկի ձեռքին ճանապարհին խմելու համար, 17) Մի բուբլի նուլ-
րի, դաւալին, կպցրու նրա ճակատից:

նում են պատահած հաւերին և սրանց ոչ մէկի տէրը իրեն իրաւունք չէ համարում պահանջել հաւի արժէքը։ Եթեմն այսպէս են վարւում նաև պատահած գառների և ուլերի հետ, բայց այսպիսի դէպքերում թագուզիր և կամ խաչեղալրը փոքր ի շատէ բաւականութիւն է տալիս գառի կամ ուլի տիրոջը։

Ի վերջոյ հարսնեորները հասնում են փեսի տունը. այսուղ տնեցիներից մին բարձրանում է կտուրը և ընկրց, կաղին և կամ չոր մրգեր շաղ տալիս հարս ու փեսի գլխին։ Խոյն մեծ իրարանցումն է տեղի ունենում, մակարները և երեխաները միմեանց հրկելով սկսում են հաւաքել։ Այս միջոցին գուրս է գալիս փեսի մայրը և կամ տատը, եթէ կենդանի է, մի քանի շրջան անում հարս ու փեսի առաջ, իբր թէ պարում է և յետոյ համբուրում նախ թագուզիրն և ապա հարսին, ու կարմիր չարղաթ ձգում գլխին։ Այս ժամանակ փեսի հայրը կամ մի ուրիշ տղամարդ, մի ափսէի մէջ եղածու և մի ուրիշ ամանով կրակ, վերան խունկ ածած, բերում է առաջ, երեք անդամ շրջում հարս ու փեսի շուրջը և յետոյ մի քիչ եղածու տալիս փեսին ու խաչեղբօրը ուտելու, իսկ մնացածը յանձնում մակարբաշուն՝ մակարներին բաժանելու։ Անմիջապէս մէկ մէկ մօտենում են փեսի կողմի բարեկամ կանաչք և համբուրելով հարսին՝ մի մի թաշկինակ ձգում գլխին։ Խեղճ հարսի գլուխը ամբողջովին ծածկում է 20—40 թաշկինակների տակ, մինչև որ կունեղբայրը վերցնում է բոլորը, մինի մէջ կապում, և քաշ տալիս իւր կողքից։

Միքանի գիւղերում մակարներն այս միջոցում ստիպում են թագաւորի ծնողներին հարսի առաջ պար գալ։ — Նրանք պարում են և երբ մակարները «քոլօլ, քոլօլ» են բղաւում, ամուսինը յարձակում է կնոջ վրայ և ուզում է նրան համբուրել, իսկ նաև ամէն ճիգ թափում է ազատուելու «եաղի տարած զլխամեռի» ճանկերից։ Հարսնեորները բարձրածայն ծիծաղում են և զուարճանում։

Մի քանի գիւղերում էլ, ինչպէս Բանանց, Բրաջուր և ալլն, մի կամ երկու ծաղրածու մուշտակը թարս են հագնում, երեսներին դիմակ դնում, պոչեր շինում և հարսնեորների ա-

ռաջն ընկած հաղար ու մի ծամածութիւններ ու հանաքներ անում և բոլորին ծիծաղեցնում։ Սրանք կոչւում են օյխ և օյտամուտ, այսինքն աւագ և կրտսեր ծաղրածուներ։

Վերջապէս հարսին ներս են տանում և առանձնացնում նրա համար պատրաստուած անկիւնում և կամ առանձին սենեակում։ Այստեղ հոգատար կռնախպէրը և կամ ինքը հարսը նայում են գորգերի տակը, որ տեսնեն թէ հարսի իսելքը փորձելու համար փայտի կտոր, կամ բապուճներ չեն թաքցրած նրա նստելու տեղում։

Ապա հարսնեորները ցլուում են, իսկ թագուորը խաչեղքօր և մակարների հետ դաւուլ դուռնի առաջնորդութեամբ գնում է գերեզմանատուն և օրհնել տալիս իւր հին ու նոր ննջեցեալների գերեզմանները։ Այստեղից վերադառնալիս մակարբաշին հրաւերում է զրանց իւր տուն, որ մինչև երեկոյ քէֆ են անում և ապա վերադառնում թագուորի տունը։

Թագաւորահորս. — Բանանց և միջանի այլ գիւղերում, մակարբաշին իւր հետ մի հաւ է տանում գերեզմանատուն։ Այս տեղ ննջեցեալների գերեզմանները օրհնելուց յետոյ թագուորը քոնում է այդ հաւի գլխից և բոլոր ուժով խփում բունը գերեզմանաքարին, այնպէս որ զլուխը կտրում է։

Այս հաւը նա ուտում է այդ երեկոյ իւր մակարների հետ։ Այս ծէսը կոչւում է լագուդիշուրու։

Քաղաքում հարսին եկեղեցուց ուղղակի փեսայի տունն են տանում. այստեղ դռան առաջ երկու լաւաշ հաց են ձգում նրա ուսերին և երկու յախճապակեալ ափսէ դնում ոտների մօտ։ Նորահարսը ոտով իսփում կոտրում է ափսէները և հացերը կտրտելով դէպի յետ ձգում։ Երեխաները և մակարները խունուում են իրար հացի կտորները հաւաքելու։

Մի քանի գիւղերում էլ պատահում է, որ չարաճճի մակարները փեսայի դռանը մօտենալիս հետևեալ երգիծաբանական երգն են ասում։

Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ հայալ, ինչ ենք բերել.

Գլուխտ քթվող¹⁾ ենք բերել,
Ճորերդ թափող²⁾ ենք բերել,
Ատներդ լուացող ենք բերել,
Մէջքդ քորող ենք բերել. . .
Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Լիլրդ ճազող ենք բերել,
Խմորդ հունցող ենք բերել,
Տեափդ³⁾ բռնող ենք բերել,
Խմորդ պիւող⁴⁾ ենք բերել,
Թորոնդ էրող ենք բերել,
Հացդ թխող ենք բերել. . .
Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Ճուշան քաղզդ ենք բերել,
Փիփերթ հնրող⁵⁾ ենք բերել.
Ճրագ վառող ենք բերել,
Կրակ անող ենք բերել,
Խորակ եփող ենք բերել,
Հաց-ջուր անող ենք բերել. . .
Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Գոմդ քերող ենք բերել,
Մարագդ սրբող ենք բերել.
Կովդ կթող ենք բերել,
Հորթդ կապող ենք բերել,
Ուլդ բռնող ենք բերել,
Ազդդ կթօղ ենք բերել,
Խնէցիդ⁶⁾ հարող ենք բերել,
Մածունդ մէրող ենք բերել,
Թանդ կտրցնող⁷⁾ ենք բերել,
Իւղդ հալող ենք բերել. . .
Թագաւորի մէր տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Տունդ սրբող ենք բերել,
Կուժդ ուսող ենք բերել. . .
Բաղէդ ջրող ենք բերել,

¹⁾ Քորող, ²⁾ Մաքրող, ³⁾ Հաց թխելու գործիք, ⁴⁾ Խմորից գնդեր շինող,
⁵⁾ Մաքրող, ⁶⁾ Խնէցին շարժող, իւղ ութան պատրաստող, ⁷⁾ Եփող
եռացնող:

Լօրիդ քաղող ենք բերել,
Ճորդ կարող ենք բերել,
Գլուխդ լուացող ենք բերել,
Ասեղդ թելող ենք բերել,
Գուլբէդ անող ենք բերել. . .
Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Ճիրեփդ¹⁾ խլող ենք բերել,
Մառանդ մտնող ենք բերել,
Բանալիդ խլող ենք բերել,
Զանչ-կրող²⁾ անող ենք բերել. . .
Թագաւորի մէր, տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Գլուխդ հողող ենք բերել,
Տունդ քանդող ենք բերել,
Գլխիդ բամբող³⁾ ենք բերել,
Ումբրդ⁴⁾ թաղող ենք բերել. . .
Տղիկ խլող ենք բերել,
Պոչդ պոկող ենք բերել,
Ծանչդ քաշող ենք բերել,
Տունդ տիրող ենք բերել. . .
Թագաւորի մէր տանէն դուրս եկ,
Տես քեզ համար ինչ ենք բերել.
Սատանալի ճուտ ենք բերել,
Մութ դժոխից դե ենք բերել. . .
Ինչ որի ա, քու ապանքն ա,
Դու ես միայն սրա տէրը,
Ե'կ բրօվի⁵⁾, կուլաւն ընկի⁶⁾,
Ետնէդ գցի⁷⁾ ու ներս քաշի.
Թէ Տէրն ուզի բաղդ քու օջաղի,
Թամուզ⁸⁾ կը պահի սիրտը հարսի. . .

Կանչ. — Կոյն երեկոցին թագուորի տնեցիները իրենց տան
կորում հնչեցներով դաւուլ-զուռնան՝ հրաւիրում են տղամարդ
հարսնեորներին ընթրիքի: Կարճ միջոցում հաւաքում են և
անմիջապէս նստում ընթրելու: Երկար և նեղ սփռոցների շուր-
ջը ծալապատիկ նստուտում են բուրը, աշխատելով պահպանել

¹⁾ Կերակուր ածելու գործիք, ²⁾ Քիւ անիծող, ³⁾ Խփող, ⁴⁾ Կեանքդ,
⁵⁾ Բարսիր, ⁶⁾ Գրկիր, ⁷⁾ Ետելցդ տար տուն, ⁸⁾ Մաքուր:

աւագութեան կարգը: Այս երեկոյ աշխատում են որքան կտրելի է լաւ հիւրասիրել, որպէսզի դժգոհ մնալով «կանչը» ժամանակ քիչ փող չունան: Սովորաբար մատուցանում են խորոված, բողբաշ, հրաբուռ, փյաւ և ալին:

Հարսանիքի ժամանակ ամենայարդի կերակուրը համար-
ւում է կորկոտը: Երբ նրա կաթսան հանում են թոնիրից և
ներս բերում հարսնեղիների մօտ, ածողների խումբը տեղից վեր
է կենում և սկսում ածել «Տատի-սուին» *) ժողովրդական եղա-
նակը և երբ պնակներն ածած բաժանում են՝ դաւալը մօտենում
է նախ թագւորին, քաւորին և յերոյ հարսնեղին և նրանց
առաջ ածում, մինչև որ միքանի կոպէկ նուէր է ստանում:

Ընթրիքից յետու սկսում է հանչը: Մի ափսէ դնում են քահանայի կամ գիւղի տանուտէրի առջև. զուռնաշխն, որ որպէս ամենալեզուանի և պնդերես մարդ, յանձն է առնում նուէրներ հաւաքել, դառնում է դէպի հարսնեռոնեռո.

«ԱՌ Խալիսը, ցնծացէք, շատ գիշեր ա անցկացել. ով ինչ-քան ուղում ա, թագաւորի սիրուն տայ: Դուք էլ տուն էք, աղջիկ ու տղայ ունէք. Էս հայափոխ ա, էսօր էս տանը՝ է-քուց ձեր տանը»:

Ամենից առաջ տալիս է խաչեղբարը՝ 2-10 ր.: Զուռ-նաչին ցոյց է տալիս Բոլորին և բղաւում.

«Փագաւորի մակարներ»:

— Հրամմէ. պատասխանում են մակարներու;

«Ըստուած խէրն ու բարին ձեզ կամէ։ Սուրբ Սարգիսը խաչեղօրը մուրազը տայ... մեր թագաւորի սիրուն բաշխեց (այսքան) մանէթ։ Խէլով սեղան, ոտով ոտիսար... ուն եւսը»։

— Ճէն կենայ, շէն, կրկնում են մակասիկը:

Ապա նուէր է տալիս հարսի հայրը, հօրեղբայրը և ազն,
մինչև վերջին հալ սնկորը։ Ի վերջոյ տանուտէոր հաշում է

*) Հայ զուռնաշիները (դաւալները) զանազան եղանակներ են հնապում և նրանց մի որ և է տեղի, ձորի, սարի անուն դնում, որովհետև ինչպէս իրենք են ասում, իրենց այդ եղանակը Նկարագրում, պատկերացնում է այդ վայրք: Ազաբէս բանանցեցի դաւալ Թիւնի որդիի դաւալ Աւագը հետեւալ անուններն է դրել իր հնարած եղանակներին: Զկնի-ձորին, Լալուկ-քարին, Գեօլի-դրաղին, Պաքերի-աղբիւրին և այլն:

բոլորը, մի կամ երկու բուբլի տալիս դուռնաշնուն, իսկ մնացածը յանձնում թագաւորի հօրը։ Այս կանչըց հաւաքում է 50—200 բուբլի, մի գումար, որչափ հազիւ ծախսուած լինէր հարսանիքի բնթացքում։

Կանչից յետոյ տեղի է ունենում պար, որի ընթացքում
մակարները և հարս ու աղջկի ամենայն կերպ աշխատում են
իրենց շնորհքները ցոյց տալ: Եւ երբ հարսներները ցրում են,
սեղանին ծառայողներն են նստում ընթրելու. սրանց միանում
են մակարները թագաւորի և խաչեղբօր հետ: Քէֆը վերսկսում
է, այս միջոցին հարսի տանից թագաւորին խոնչա է զալիս.-
մի մեծ սկուտեղի մէջ դրուած է լինում երկու ափսէ վլաւ,
մի եփած հաւ, եօթը դաթայ, կարմիր ներկած հաւկիթներ,
մի ափսէ եղածու, մի քանի լոշ հացեր և այն: Խաչեղբայրը
մի քանի կոպէկ նուէր տալով խոնչա բերողին՝ առնում է այն
և յանձնում մակարբաշուն, սա էլ պահ է տալիս տնեցիներին,
որ միւս օրը մակարների հետ ուտեն: Ուտել խմելուց և երկար
պարելուց յետոյ մակարները ցրում են, իսկ խաչեղբայրը քը-
նում է թագուորի հետ:

Իրանց գիւղացիների բայցարառութեամբ սուրբ նշան է, լուսական միայն մահկը կարող է բաժանել ամուսնացած զոյգին, իսկ հացը պահպան առ անխոր նշանակ է:

Բախտաւոր լիսպիտ ու քաղաքում, նախքան
Միքանի զիւղերում ինչպէս և քաղաքում, «որպէսզի
թագվերացումը մի քիչ կտրում են հարսի մազերից, «որպէսզի

նրա սիրտը սկեսրանց տան վրայ լինի», այսինքն իւր հայրական տանից աւելի սկեսրանց տունը սիրէ:

Թագ վերացումից յետոյ մակարները թագաւորի հետ գընում են խաչեղբօր տունը զուարձանալու: Այստեղ մակարբաշին պահանջում է թագուորից նրա համար նախընթաց երեկոցին աներանց տնից ուղարկուած խոնչան, իսկ միւս մակարներից մի մի հաւ: Ով անմիջապէս չի բերում հաւը, մակարբաշին հրամայում է կտուրից թոկ ձգել և դրա մի ոտը կապել: Այսպէս մի ոտի վրայ կանգնած պիտի սպասէ մակարը, մինչեւ որ նրա զոքանչը մի հաւ ուղարկէ և աղատէ նրան: Մակարբաշին սրանով էլ չբաւականանալով, աւելի պահանջներ է անում և կապում է մակարների երկու ձեռքերը, երկու ոտքը և այն: Այս երեկոյ ծայրագոյն իշխանութիւնը նրան է պատկանում և նա ամէն միջոց գործ է դնում կարելոցն չափ ուրախ անցկացնելու և սեղանին շատ բան ունենալու:

Գիշերը մակարները ցրում են, իսկ թագուորը մակարբաշու հետ գնում է չոր մրգեր նորահարսի համար և գալիս առագաստ մտնելու: Այդ երեկոյ հարսի մայրը նորահարսի համար խոնչաց է ուղարկած լինում, որ նորապահները առանձին ուտում են:

Կուսութեան ապացոյց սաւանը խստութեամբ պահանջում է: Զեղած դէպքում շատ անախորժ դէպքեր են տեղի ունենում:

Թագակապ.—Երեքշարթի առաւօտեան հարսնեոր կանայք են հաւաքում թագուորի տանը: Երբ բոլորը հաւաքուած են լինում՝ խաչեղբօր կինը կամ մայրը դնում է մի առաջամատոյցի վրայ հարսի թագը, սրա վրայ մի հաց և ապա՝ մի ափսէ: Յետոյ հրաւիրում է հարսնեորներին, որ յօգուտ հարսի նուէլներ տան: Ամէնքը 10 կ.—օ բուբլի ձգում են ափսէի մէջ, ոմանք էլ դրամը խնձորի մէջ խրած դնում են առաջամատոյցի վրայ: Այս նուիրաբերութիւնից յետոյ հարսի թագը մի երիտասարդի, իսկ թագուորինը մի աղջկայ գլխի դրած պար են ածում և սպա նստում ճաշում ու ցրում:

Թախսը.—Սովորաբար աղջկայ կողմից շատ քիչ ծախս

է լինում, իսկ տղամի կողմից լինում է մօտաւորապէս հետեւեալը.

Ա. Դեանդրեկին

Մի ոչխար	2—3 ր.
Գինի և օղի	2—3
Վանիլի	1—2
Հաց	2—3
Բւղ	1—2
Հաւ	1—2
Չամիչ և չոր մրգեր	1—1
Մատանի	1—2
Մի արձաթ մանէթ շղթաներով	4—4

Բոլորը՝ 15-22

Բ. Տարնւայ ընթացեում

Հարսնացուին նուէլներ	25—30 ր.
--------------------------------	----------

Գ. Հարսանիեկին

Գինի	48 — 60.
Օղի	30 — 40.
Մի եղ	15 — 25.
Պչխար	2 — 3.
Մի մոթալ պանիր	12 — 13.
Հացի	13 — 15.
Բաժինքի փող	15 — 200.
Հարմին զգեստ	20 — 45.
Քահանային	3 — 3.
Եկեղեցուն	1 — 1.
Աթոռահան	6 — 6.
Զտունաչուն	5 — 10.
Մանր ծախսեր	10 — 25.

Բոլորը՝ 180 — 447

Ընդամենը՝ 220 — 499

ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Դաշտան.—Սովորաբար դաշտանը (լուսնի) երեսում է 14-15 տարեկան հասակում, երբ շատերն արդէն ամուսնացած են լինում:

Դաշտանը ընդհանրապէս տևում է 3—5 օր, իսկ երբեմն նաև 4—6 օր: Ակտուելիս տաք մոխրի վրայ նստեցնում են, որ շարունակուի, իսկ երբ երկար է տևում, գետից սառը աւազ են հանում և կապում դաշտան ունեցողի փորին և դնում նստատեղին տակը, որ ընդհատուի:

Դաշտանի միջոցին շոր են կապում և օրական գոնէ մի անգամ փոխում: Ջատ քչերը սովորութիւն ունին գոլ ջրով լուանալու սեռական անդամը, մինչև որ բոլորովին չի կտրում:

Ծնդհանրապէս դաշտանի ժամանակ չեն զգուշանում ոչ կերակրներից և ոչ խմիչքներից: Միայն մի քանիսը սառը ջրի փոխարէն տաք ջուր են խմում և թէլի փոխարէն լորենիի ծաղկից պատրաստած թէլի գործածում: Միենոյն ժամանակ զգուշանում են թթուեղէններից:

Իւրաքանչիւր կին գիտէ իւր դաշտանի ժամանակը և եթէ սպասած միջոցին չի սկսում, դիմում են հետևեալ միջոցների.

- 1) Ոտները տաք ջուրն են դնում:
- 2) Փորին տաք շոր են կապում:
- 3) Տատմօրը փորը տրորել են տալիս:
- 4) Սոխի կճեպը ջուրն են դնում և առաւօտները թէլի փոխարէն ընդունում և ման դալիս:
- 5) Պուլիկի (փոքրիկ, կաւէ աման) մէջ թուղթ են վառում և դնում փորին:
- 6) Եակու են դնում փորին: Եախուն պատրաստում են այսպէս. մի սկստեղի մէջ օղի են ածում և դնում կրակին, ապա մի կտոր հաստ թուղթ դնում վերան և երբ սա թռչւում է, փոշիացած խունկ են ածում վերան և տաք տաք վերցնում դնում փորին, երբեմն և մէջքին և շորով կապում:

Դաշտան ունեցող կանանց յարաբերութիւնը գերդաստանիւ

միւս անդամների հետ չի փոխում. նրանք դարձեալ քնում են իրենց ամուսինների հետ, նստում, կանգնում միւսների հետ միասին, միայն սրանց վաղեմի սովորութեամբ արգելում է եկեղեցի գնալ, հաղորդութիւն առնել, սրբերի առաջ մոմ վառել, հաց թխել, կերակուր եփել, կով կթել և այլն:

Ամլութիւն.—Այս գաւառում ևս ամլութիւնը աստուածային պատիժ է համարւում, ամուլ կինը չի սիրում ամուսնուց և շարունակ նախատուում է սկեսուրից: Ջատ յաճախ է պատահում, որ ամուլ կնոջ ամուսինը մի երկրորդ կին է բերում, յատկապէս երեխայ ունենալու նպատակով և հասարակական կարծեքը, որ ընդհանրապէս դատապարտում է ապօրինի կնապահութիւնը, այս դէպքում շատ ներողամիտ է գտնում:

Կանայք էլ, իրենց հերթին, սաստիկ նախատում են առնական զօրութիւնից զուրկ ամուսիններին և ամլութեան նախատինքը իրենցից վերացնելու համար, «փոխում են բարձերը»: Այսպիսի դէպքերում սկեսուրները ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում են Աստուց, որ եթէ երեխան իրենց որդուցն է՝ ապրի, իսկ եթէ ուրիշից՝ մեռնի: Եւ շատ դառն է լինում կնոջ դրութիւնը, եթէ երեխան մեռնում է:

Երեխայ ունենալու համար դիմում են հետևեալ միջոցների.

1) Որպէսզի որոշեն թէ ումից է ամլութիւնը, կնոջ և ամուսնու մէջը առանձնապէս ածում են ամանների մէջ, հող աւելացնում և գարի ցանում: Եւ նա է համարւում ամուլ, որի միզի միջից գարին չէ ծլում:

Իսկ եթէ երկուսի գարին էլ ծլում է, այն ժամանակ կինը ծեծում է մի քանի ընկոյզ, մեղրի հետ խառնում, կապում մի բարակ շորի մէջ և դնում իւր սեռական անդամի մէջ և մօտ մի ժամ այդպէս պահում: Այս միջոցը երեք անգամ կրկնելուց յետով, ամուսինը մի շամալի ձուկ է ուտում և յարաբերութիւն ունենում:

2) Ամենից աւելի դիմում են սրբերի միջամտութեան և ուխտ գնում Պահ, Եղնասար, Գետաշէնի սուրբ Նշան, Ոսկան Նահատակ, անցնում սուրբ համարուած քարերի միջի անցքով և ծառերի ճիւղերի միջով: Ուիսու գնալիս կինը չոքում է քա-

Հանայի առաջ և խնդրում գլխին Աւետարան կարգալ: Եթի
աւարտում է Աւետարանի ընթերցումը, կինը քանդում է՝ իւր
գօտին և ղնում Աւետարանի վրայ. այդպէս մնում է մի գի-
շեր. հետևեալ օրը քահանան նորից կարդում է Աւետարանը
և իւր ձեռքով կապում գօտին կնոջ մէջքին: Կինը խոստումն
է տալիս մի նուէր բերելու ուխտատեղիին, եթէ որ որդի ու-
նենայ: Երբեմն գօտին կապել են տալիս իրենց տոհմական
քատրին:

Եթէ այսպիսի ուխտագնացութիւնից յետով որդի են ունենում, 5—7 տարի կտրել չեն տալիս երեխայի մազերը, և ապա մի գառի հետ բերում «սրբի տակը», զառը մատղում և երեխայի մազերը հանգիսաւոր կերպով կտրում սրբի գերեզմանի վրայ:

Յ) Մի գլշեր ամուլ կնոջը սաւանի մէջ փաթաթած բերում պարզեցնում են զանգակատան մէջ, զանգակների տակ. մի բակեղաթ բռնում գլխին և մի կոժ ջուր ածում վերան: Այս միջոցին կինը զանգահարում է մի անգամ և փախչում դէպի տուն:

4) Հարախաղացի, լնչպէս և ուղտի, տակից երեք անդամ տնզնում են:

5) Գիմում են գանձակեցի մի յայտնի կնոջ, որը նստեց-
նում է մի կաթսալ տաք ջրի վրայ, նախապէս մէջը ձգելով
մծխլիր, աղ, դարչն, ժանճափիլ, պղսեղ և մի քանի տեսակ
ծաղիկներ: Այսպէս 1—2 ժամ պահելով կնոջը՝ լաւ քրտնեցնում
է և ապա պառկեցնում անկողնի մէջ և դարչինից ու ժանճա-
փիլց պատրաստած թէյտ տալիս: Այս կրկնում է 3—4 օր և
երբեմն աւելի:

6) Մի կիրակի օր, առաւտեան շատ վաղ ամուլ կինը գնում է գերեզմանատուն և եծթը «անժամը» (առանց հաղորդութիւն ոտանալու) մեռածների վրայ անխօս լուանում ձեռքելն ու ոտները և մի մի քիչ ջուր խմում. ապա գնում է «պոյաճառ» կարասի վրայ մոմ վառում, խաչակնքում և կարասի մէջ նայում:

7) Քրիստոնի ծննդեան տօնի երեկոյին գետի մէջ երեք
անդամ սուզում, ելնում են:

Յղաւթիւն.—Երբ դաշտանի ընդհատուելուց կինը առաջին անգամ իմանում է, որ լղիացել է, յանուն 12 դաս հրեշտակ-ների 12 անգամ խաչակնքում է և յանուն 40 մանկանց՝ 40 անգամ ծունը դնում։ Եւ այնուհետև զրեթէ ամէն կիրակինա ուխտ է գնում գլւողի շրջակայ ուխտատեղիները, տանելով իւր հատ կաթնահունց, մրգեր, որ բաժանում է բացառապէս առաջ հուեսաներին, որպէս զի իւր օրդին էլ արու լինի։

Ճատ քիչ գերզատաններում լղի կնոջ դրութիւնը փոքր ինչ բարելաւում է առաջուանից. շատ քիչ սկսուրներ արգելում են իրենց հարսներին առաջուայ չափ աշխատելու, խճոր հունցելու, ծանր աշխատանքները կատարելու: Ծնորհիւ իրենց երկաթի առողջութեան, լղի կանայք հեշտութեամբ կարողանում են տանել ամեն տեսակ նեղութիւն, և աշխատանքի, քեռի տակ, դուրսը, անտառում և կամ դէզի ետևը ծնել: Այս պատճառով էլ սովորական մականուն է դարձած «քոլում (անտառում) ծնուած» խօսքը: Սյապէս՝ օրինակ, Գետաշէնում հայաց հարսը դնացել է Գէօգ-գէօլ զկեռ քաղելու և վերաբոշանց հարսը դնացել է Գէօգ-գէօլ զկեռ շալափին, առանձնանալով անտառի խորքում՝ ծնել է և զկեռի հետ երեխային էլ շալափած եկել տուն:

Մի բան միայն նպաստաւոր է լղի կողջ հասար, այս ո՛նը՝ ուտեստի վերաբերութեամբ ունեցած բոլոր քմահաճոյք-ներն անպայման կատարում են, որպէսզի երեխան պակասաւոր չլինի: Կողջ այս քմահաճոյքը «մտափոխութիւն» են կոչում ոչ միայն տնեցիները, այլ և օտարները պարտք են համարում կատարել:

Յղի կինը ցանկանալով առողջապահ և փոխցր ունենալ, զգուշանում է խմբներ գործածելուց, բացի մի քիչ օղիից, որպէսզի երեխայի աչքերը խարտեաշ լինին: Նա չի ուտում հաւի միս, որպէսզի երեխան «Հաւի պէս քցըցող» (նեղացնող) ըլինի, հարևանի տնից ձու է գողանում, որպէսզի երեխան ծիծաղելիս այտերի մէջ փոսկներ գոյանան: Ուխտ գնա-

լիս աշխատում է խող պատահած միջոցին քորել իւր կուրծքը և կամ մի ուրիշ տեղ, որպէսզի երեխան այդ տեղում նշան ունենայ: Նա զգուշանում է ցորենի ջուալի վրայ նատելուց, որպէսզի երկունքը սաստիկ չլինի. Հինայ կամ այլ կարմիր դոյնի բան չի գործածում, որպէսզի երեխան այդ գոյնի հիւանդութիւն, օրինակ կարմրուկ, չհանի: Նա պատի վրայ ցեխ չի ծեփում, որպէսզի երեխան արգանդում չծեփուի: Հաց եփելիս իւր ձեռքով հաց է բաժանում հարևաններին, որպէսզի չլիմի իւր երեխան:

Յղի կնոջ պահապան համարում են այն երկու հրեշտակները, որոնք Քրիստոսի ծնունդը յայտնեցին «ալամ» (բոլոր) աշխարհին», և Աստուածածնի հրեշտակները, որոնք երկընքում ծառայում են նրան: Տիրամայրը ամիսը մի երկու անգամ ուղարկում է այդ հրեշտակներին լոյն կանանց մօտ քաջակերելու նրանց. բացի սրանցից, իւրաքանչիւր դերժաստան մի որևէ սրբի «ղուկ» է, այսինքն նրան համարում է իւր գերգաստանական, օջախի սուրբ և ծանր բոպէներին նախ նըրան է դիմում: Ուստի և ծննդաբերութեան ժամանակ յատուկ նրա համար մոմեր են վառում և տան երեխաներից մին 12 անգամ նրա առաջ ծունը է դնում:

Սրանք են լոյն կնոջ պաշտպանները, իսկ թշնամին՝ չար ոգին, ալը և սատանան, որոնք ամէն կերպ աշխատում են վնասել նրան: Սրանց հալածելու նպատակն լոյն կինը իւր ուսին մի պողպատի կտոր է ամրացնում, կամ մատը պողպատէ մատանի դնում. Երբ զիշերը տնից գուրս է դնում, ամուսնու դանակը դնում է ծծերի մէջ. Երբ զիշերը ջուր է կամենում գործածել, նախ մի պողպատի կտոր և կամ կացինը դնում է ոտների տակ և ապա ջրին ձեռք տալիս. զգուշանում է ջուր թափելուց և ալին:

Սակայն երբեմն ոչ միայն անտես են առնում վերտիշեալ նախազգուշաները, այլ և զանազան միջոցների են դիմում իրենց արգանդի պտուղը վիճելու համար: Եւ այս առաւելապէտ երբ երեխան ապօրինի է լինում; Այդ միջոցներից նշանաւոր են:

1) Տրորում են փորը:

2). Երկանք են դնում փորին և աղում:

3) Հունի ծաղիկը եփում, ջուրը խմում են:

4) Զորու սմբակը (դունաղ) ջրի մէջ են ձգում և լեռոյ խմում, զգում և վիժում:

5) Դիտմամբ վախեցնում են:

Ծնունդ. — Երբ մօտենում են երկունքի օրերը, աւելի շատ են հետաքրքրում իմանալու թէ արգանդի պտուղը արու է, թէ էզ: Այս իմանալու համար սովորաբար դիմում են տատմէրներին և սրանք նայում են կնոջ փորին. «թէ երեխան ձկի պէս լոյն է տալիս» արու է, թէ դորտի պէս պըպըզած է՝ աղջիկ»:

Երբ սկսում է երկունքը՝ անմիջապէս հրաւիրում են քահանային և հաղորդութիւն տալիս, նախ որ հրեշտութեամբ ծնի և երկրորդ՝ ծննդաբերութիւնը մահառիթ համարելով՝ նախազգուշանում են անմասն մեռնելուց:

Երկունքի ժամանակ հրաւիրում են տատմէր կանանց, որոնք գիւղի մէջ բաւական յարգանք են վայելում: Իսկ ամենածնը դէպերում հրաւիրում են մանկաբարձներ—յայտնի կովիներ, որոնք անասունների վրայ երկար ժամանակ փորձեր անելով բաւական հասկանում են մանկաբարձական արուեստից: Այս նախնական մանկաբարձները զգալի օգուտներ են տալիս, և սրանցից մի քանիսը, ինչպէս օր. գետաշէնցի «Զորան Սաքին», բանանցեցի նախքը Ռաքելանց Սահակը, գաւառում բաւական մեծ հռչակ ունին:

Ժատմէրը և մի երկու կին առանձնացնելով լոյն կնոջը մի սենեակում, աշխատում են հրեշտացնել ծնունդը և այս նըրպատակով դիմում են հետևեալ միջոցների.

1) Տնեցիները մի սկսուեղի մէջ ալիւր կամ հաց, վերան մի քիչ աղ գրած բերում պտուղնում են ծննդականի գլխով և ասում. «Մայրամ Աստուածածին, դու աղատես»: Ծննդից լիտոյ այս ալիւրն ու աղը առաջներն աղքատի էին տալիս, իսկ այժմ՝ տատմօրը:

2) Մի կին բարձրանուս է կտուրը և հերթիկից յանկարծ մի ձու վայր ձգում, բարձր բղուելով. «Եա պէր (բեր, ծնիր),

եա ես պերում եմ»։ Ապա իջնում է ներքև և բարձր ձայնով տալով երկնողի (ծննդկանի) անունը, ասում է, «Աշխարքս քոչեց (չուեց), շուտ արա, մենք էլ ենք քոչում»։ Յետոյ անմիջապէս հրացան են արձակում, որի ձայնին հետևում է երեխաների աղաղակը. «Դնացինք, մնաք պարև»։

3) Հրաւիրում են իւր վերնազգեստի ափով ծննդկանին ջուր տալու այն անձին, որ աղատել է մի որև. է կենդանի օձի բերանից։

4) Կանչում են խաչեղօրը և նրա զգակը դնում ծննդկանի ղլխին, յուսալով խարել սատանաներին, թէ նա տղամարդ է։

5) Հրաւիրում են քահանային ծննդկանի ղլխին Աւետարան կարդալու։

6) Գրբացներին, մոլլաներին զիր են անել տալիս։

7) Եթէ ծննդկանը ժամտ է («պինդ», «քար ու կէս» է), ծնունդն էլ դժուարութեամբ է լինում. հեշտացներու համար՝ ծածուկ մի քար են դնում հացի տաշտի մէջ։

Եւ կամ՝

8) Տաք մոխիրը մի շորի մէջ ածած կապում են մէջքին։

9) Լիսնահողը, —կարմիր կամ ղեղին հողը —շաղախում են և քաշում ծննդկանի փորին։

10) Ջշի մէջ փչել են տալիս։

Ֆննդկանը ուշագնաց լինելիս մի, ձու և խողի մազ են թաղում նրա մօտ։ Զիւթ են տալիս որ ծամի, համրիչ և կամ կծիկ են տալիս ձեռքը որ զբաղուի, ճիւմնի¹⁾ ներքին երեսի վրայ նստեցնում են։

Երբ երեխան ծնուած է լինում, տատմէրը ծննդկանի սաները դնում է իւր ուսերին, գրկում ծննդկանին և թափ տալիս, որ ուղղուի. և կամ տրորում է փորը։

Ֆննդկը կատարւում է տան օջախի մօտ, ծննդկանի երեսը դէպի արևելք դարձրած. իսկ զիշեր ժամանակ, երբ տան անդամներին չի կարելի հեռացնել, տան մի անկիւնում, որ կապերտներով առանձնացնում են։ Այստեղ անշուշտ դնում

¹⁾ Կանաչոտ հողի քառակուսի կտրուածքը։

են օջախի մոխրից, որպէսզի «օջախի հրեշտակներն էլ դան ծննդկանին օգնելու»։

Ֆննդկանը կատարւում է խոտի վրայ, որի տակ հող է փռուած լինում։

Ֆննդկանը սովորաբար չոքում է և ձեռքերը ձգում իւր երկու կողմը կանգնած կանանց գոտիներին. իսկ սրանք բըռնում են նրա թեւերից։ Պատահում է, որ կողքի վրայ պառկած կամ պըպղած են աղատում։

Տատմալը առնում է երեխալին, դանակով կտրում է պորտը, ընկերքը թաղում տան շէմքի առաջ, իսկ պորտը տղայինը ձգում են շինամէջ, որ տղան շուռ եկող լինի, իսկ տղջկանը տան մի անկիւնը, որ աղջիկը տանը նոտող լինի։ աղջկանը՝ տան մի անկիւնը, որ աղջիկը ինչ ման ածում կից սլատրաստած թէյ են խմացնում և փոքր ինչ ման ածում կից ընկերքը շուտով չի ընկնում, ծննդկանի մէջքին

Եթէ ընկերքը շուտով չի ընկնում, ապա սենեակում։ Զգուշանում են որ ընկերքը շները չուտեն, ապա լողացնում են, յուսալով որ կառողշանալ։ թէ ոչ երեխան պակասամիտ կը լինի. ախտեղից լառաջացել է «Ընկերքդ շունն ա կերել» դարձուածքը, որ կընշանակի, թէ պակասամիտ ես։

Երեխան հիւանդանալիս իւր ընկերքի թաղած տեղի վրայ լողացնում են, յուսալով որ կառողշանալ։

Ֆննդկանը լողացնում է նորածնին, աղում ամբողջ մարմինը և նոյնիսկ մատը թաթախելով աղի մէջ քսում նրա մարմինը և նոյնիսկ մատը թաթախելով աղի մէջ քսում նրա կատիկին, որ բերանից հոտ չգայ. ապա փաթաթում շորերի կատիկին, որ բերանից հոտ չգայ. ապա փաթաթում շորերի մէջ և դնում մօր առջև։ Մի օր շարունակ ծննդկանին թողմէջ և դնում մօր առջև։ Նրան ամենից առաջ դանձանում են խոտի վրայ պառկած։ Նրան ամենից առաջ դանձանում են տալիս, յետոյ խաւիծ, հալուայ ֆիլով թէյ և պումած²⁾ են տալիս, յետոյ խաւիծ, հալուայ

Յրախառն դինի։

Յետոյ տատմէրը լողացնում է նորածնին, աղում ամբողջ մարմինը և նոյնիսկ մատը թաթախելով աղի մէջ քսում նրա մարմինը և նոյնիսկ մատը թաթախելով աղի մէջ քսում նրա կատիկին, որ բերանից հոտ չգայ. ապա փաթաթում շորերի կատիկին, որ բերանից հոտ չգայ. ապա փաթաթում շորերի մէջ և դնում մօր առջև։ Մի օր շարունակ ծննդկանին թողմէջ և դնում մօր առջև։ Նրան ամենից առաջ դանձանում են խոտի վրայ պառկած։ Նրան ամենից առաջ դանձանում են տալիս, յետոյ խաւիծ, հալուայ ֆիլով թէյ և պումած²⁾ են տալիս, յետոյ խաւիծ, հալուայ

²⁾ Ալիւրը կարագով և մեղքով շաղախած։

Տան երեխանսերը և յետոյ տատմէրը գնում են ծննդկանի մօտիկ աղջականներին «աչքիլուս» տալու, —աւետելու երեխալի ծնունդը։ Ազգականներն ել նուէրներ են տալիս տատմէրին և ասում։ «Կուռդ կանաչ կինայ», եթէ միայն նորածինը տղայ է, իսկ եթէ աղջիկ՝ «Կուռդ չորսայ, աղջիկ ես վաթշաթել», որտվշետև ընդհանրապէս ոչ միայն ծնողներին, այլև աղջականներին տղայի ծնունդը շատ աւելի ուրախութեամբ է ընդունւում, քան աղջկանը։

Ծննդեան հետևեալ օրը տատմէրը լողացնում է նախ նորածնին և ապա ծննդկանսին և այժմ միայն պառկեցնում նըւզան անկորդնու մէջ: Հատ կանալք հէնց իրենք իրենց են լողանաւմ և պառկում:

Այս ժամանակ բարեկամ կանաչը «խոնչա» կամ «ծննդղաւթ» են բերում, — ձու, վլաւ, եղբձու, խնձոր և աղն: Բերտին հիւրասիրում են թէյով, ճաշով, լսկ սրտակից բարեկամին փոխադարձաբար մի «եազող» կամ մի աղ բան են նուիրում:

Սրանց և առհասարակ հիւր գալիս տատմէրը վերջնում է երեխան և դնում նրանց գիրկը՝ ասելով. «Հօրաւ թի, մօրաւ ըլի, դէ «պըրտըլտիլ» (պորտ կտրելու վարձ) տուէք»։ Սրանք էլ տալիս են մի քանի կոպէկ։

Ծննդկանը առ առաւելը եօթ օր շարունակ պառկած է մնում անկողնում և այս միջոցին տնեցիները ամէն կերպ աշխատում են պաշտպանել նրան չարերից, որովհետեւ նա այդ միջոցին պիղծ է համարում և աւելի մատչելի չարերին։ Նոյն իսկ տնեցիները իրենց հեռու են պահում նրանից, նրա հետ հաց չեն ուտում, նրա գործածած ամանները առանձնացնում են, արդելում են նրան մի որևէ է ուտելիքի ձեռք տալ, այլ միայն սպասել, մինչև որ նրան կըտան։ Նրան, ինչպէս և նորածնին չարերից պաշտպանելու համար թէ նրա բարձի տակ և թէ օրորոցում դնում են սուր, սոխ՝ մի երկաթի ծայր անցկացրած։ Խոզի մազ, նարեկ, համայիլ և այլն։ Վիենոյն ժամանակ աշխատում են նրան երբէք միայնակ չժողնել։ և երբ ստիսլուած են լինում բոլորը հեռանալու, աւելը բերում տնկում

օղիւ և այլն։ Զատկին՝ սեր, կարագ, ձու, հալուայ, փլաւ, քա-
ւարի համար մի գլխարկ, կամ մի թաշկինակ, տան բոլոր երե-
խաների համար մի մի զոյտ զուլպայ։ Վարդեսրին՝ վինջեր, գա-
թալ, հալուայ, փլաւ, հաւ։ Քաւորն էլ ամէն անգամ իւր
կողմից նուէրներ է ուզարկում թէ սանամօրը և թէ մանաւանդ
սանիկին։

Եթէ երեխան առջինեկ է, ծննդկանի մայրը կնունքի նախորդ օրը նուէր է ուղարկում նորածնի համար շապիկ, բալուլի շորեր, օրօրոցի ներքնակ, վերմակ, փաքրիկ բարձ, մի ձեռք զգեստ և այլն: Մօտիկ ազգականներն էլ երբեմն կրկին խոնչա են ուղարկում ծննդկանին, առաւելապէս կերակրեղէնից բաղկացած:

Մկրտութեան օրը տատմէրը լողացնում է թէ երմսայր և թէ ծնդկանին: Յետոյ երեխային բալուլած առնում է թեւերին և տանսւմ եկեղեցի: Երբեմն տան անդամներից մի քանիսը գնում են հետը, բայց հայրը իրաւունք չունի մկրտութեան խորհրդին ներկայ գտնուելու:

թեան լորիպիլը ալրդ-է ։ Դա առաջ է առաջ գոյաց մաս և մի արշին
Գալիս է եկեղեցի և քաւորը՝ մի զոյտ մոմ և մի արշին
սպիտակ միտկալ առած։ Այստեղ քահանան, որին 4 հաց ու-
ղարկելով խնդրել էին մկրտել երեխալին, կատարում է մկրտ-
ութեան խորհուրդը, երեխան դնում քաւորի զիրկը, մի մի
մամ տալիս քաւորի ձեռքերը և ինքը շուրջառը ձգած, շարա-
կան ասելով գալիս ձննդկանի տուն։

Երբ քահանան աւարտում է Աւետարանի ընթերցմանը՝
առաջարկում է համբուրել, ուսն մեծը նախ առաջ է գալիս

են նրա մօտ: Գիշերները հոգատար սկեսուրները նախ քան քնելը խաչակնքում են ծննդկաններին և հետևեալ աղօժքը շանջում.

Ճրագ ճրագ ճշմարտահատիկ,
Ճշմահատիկ մարզպարիտ.

Պանամ պղնձայ դուռը,
Քաղեմ անթառամ ծաղիկը.
Փնջեմ դնեմ զլխուս.

Քուն ըլլիմ արազս պարի,
Աստուած մուրազս կատարի.
Տէր մեր Յիսուս Քրիստոս.

Այ Մարիամ, քուն ես թէ զարթուն.
Հազար քուն, հազար զարթուն.

Երկու երկու եկին հերթը,
Երկու երկու եկին դուռը,

Ով դուռը կեայ ետ դառնայ,
Ով հերթը կեայ քար դառնայ.

Տէր մեր Յիսուս Քրիստոս.
Էս տունը տրտրատուն ա,

Քրիստոսայ ժամատուն ա.
Քրիստոսը հերթաւ շուռ զայ

Փիլոնը քրցինք հըրուրօցաւը
Քրցինք հիւանդի պարձեաւը,
Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Մի քանի բարեպաշտ սկեսուրներ էլ ծննդից յետոյ հրաւիրում են քահանաին իրենց բնակարանը չարերից «փարատելու»

Կնունի. — Ծննդից Յ— Օր յետոյ կատարում են կնունքը:
Տատմէրի ձեռքով ուղարկելով քաւորին «խոնչա» (հալուայ, հաւ, փլաւ), երբեմն էլ ոչխար՝ եղջւրներին կանանչ կարմիր թել կապած և կամ մի փոքրիկ զլուխ շաքար, հրաւիրում են զալ երեխան կնքելու:

Սովորաբար ամէն զերդաստան ունի իւր զերդաստանական քաւորը, որ սերնդից սերունդ է անցնում: Քաւորին ընդհանրապէս սաստիկ պատում են, նշանաւոր տօներին խոնչաներ են ուղարկում, այսպէս օրինակ՝ Նաւասարդին ուղարկում են քիշի, հալուայ, զինի, օղի: Բարեկենդանին՝ վլաւ, հաւ, դինի,

և համբուրեկով՝ մինչև մի րուբլի խաչամբոյք տալիս, յետոյ միւսներն են համբուրում: Այսուղ խմբուած են լինում բաւական թուռվ հիւրեր, յատկապէս կնունքի պատճառով հրաւիրուած: Անմիջապէս նախ տղամարդիկ և ապա կանալք առանձրուած: Անմիջապէս նախ տղամարդիկ և ապա կանալք առանձրուած: Անմիջապէս հաջի են նստում և ուտում են իուխուփ, փլաւ և նապէս հացի են նստում և ուտում են իուխուփ, փլաւ և խորված:

Երեխայի անունը սովորաբար տան մեծն է ընտրում, առաւելապէս զերդաստանի նախնիների և կամ քահանան, մկրտութեան կամ ծննդեան օրը լիշտակուած սրբերի անուններից: Ահա միքանի անուններ իրենց կրճատուած ձւերով:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ.

Աբրահամ. Ապրհամ. Աբրի. Աբրամ. Կարապետ. Կաբէդ. Կարօ. Գարաս-	սիմ. Գրասիմ-
Աղէքսանդր. Ալէք. Ալեքսան. Սանթրի. Սանթրօ. Սաշա.	Կոստանդին. Կոստի.
Անդրէաս. Անդրի. Առաքել. Առաքել. Անդրէաս. Անդրի. Համբարձուած. Համբարձ.	Հայկազ. Հայկ. Հայկօ.
Առաքել. Առաքել. Աստուածուր. Աստուածուր. Ֆա-	Ղևոնդ. Ղևանդ.
տուր.	Մամիկոն. Մամիկ.

Արգուման. Արգման.

Արտաշէս. Արտաշ. Արտուշ.

Աւետիս. Աւետ. Աւտիս.

Բաղդասար. Բղդօ. Բըղդասար.

Գաբրիէլ. Կափուել. Կեափի.

Գասպար. Գեասպար.

Գարեգին. Գարօ.

Գէորգ. Կւէլ. Կւերք.

Գրիգոր. Գոքոր. Գիւքի. Գրիշա.

Դանիէլ. Տանել.

Երեմիա. Եմի. Եմօ.

Զարմացր. Զօրիկ. Զօրօ.

Զաքարիա. Զաքի. Զաքար.

Էմանուէլ. Մանուէլ.

Թովմաս. Թումաս. Թումաս.

Իսահակ. Իսակ. Սահակ.

Լևոն. Լևան.

Խաչատր. Խաչի. Խաչօ. Խէչօ.

Զառի. Զառի.

Կարապետ. Կաբէդ. Կարօ. Գարաս-

սիմ. Գրասիմ-

Կոստանդին. Կոստի.

Համբարձուած. Համբարձ.

Հայկազ. Հայկ. Հայկօ.

Ղևոնդ. Ղևանդ.

Մամիկոն. Մամիկ.

Մարտիրոս. Մարտի.

Մելիքսէլ. Մելխաչէլ. Մելխակ. Մու-

լի. Միշո.

Մկրտիչ. Մակիչ. Մակի. Մակում.

Նիկիտ.

Պնացական. Յական.

Պովսէս. Պովսէս. Պովսի.

Յակոբ. Ակուփ. Ակոփ.

Յակոբ. Ակուփ. Ակոփ.

Յարութիւն. Թիւնի. Սրթիւն. Ար-

տեմ.

Յովհաննէս. Յանէս. Վանօ. Իվան.

Վանեայ.

Յովսէփ. Ուսէփ. Օսիկ. Եօսիփ.

Նիկողայոս. Նիկոլ. Նիկալայ. Կոլեա-

նոլի.

Գետրոս. Գետի. Գետօ.

Պողոս. Պուղոս. Պուղի. Պաւլի.

Ռուբէն. Ռուբիկ.

Սարգիս, Սաքո, Սերգի,
Սիմէօն, Սիմօն, Սիոմկա, Սեօմա,
Տիգրան, Տիգօ.

ԿԱՆԱՆՅ ԱՆՌԻՆՆԵՐ.

Աննա, Աննիկ, Անինդայ, Անիչկա,
Անիւտա.

Անթառամ, Թառան.

Գիլլիկար, Գիլիկ, Արիկ,
Եղիսաբէթ, Սաբէթ, Լիզա,
Զարղարամ, Զառի.

Լուսաբեր, Լուսիկ.

Հերիքնազ, Հերիկ.

Մկրտութիւնից երեք օր յետոյ «մեռոնը վեր են անդում». Հացի տաշտը դնում են թոնրի վրայ, մի քիչ իւղ կամ մի ձուի գեղնուց քսում երեխայի այն մասերի վրայ, ուր մեռոն է քսուած և կնունքի ժամանակ գործածուած երկու մոմը վարելով տաշտի երկու կողմը, լողացնում են երեխային ասեղով.

Հօրաւ ըլես,

Մօրաւ ըլես,

Կարմիր օրաւ ըլես,

Ռւմրդ էրկան ըլի.

Քու հօրն ու մօրը

Հնազանդ ըլես:

Ապա բոլոր մազերը ձախ ձեռում հաւաքելով՝ աջ ձեռքով երեք անդամ խիռում է մազերին և ասում.

Քու հէրը բան ա ուզում.

Քու մէրը բալա ա ուզում.

Քու եարն էլ ծամ ա ուզում:

Եւ այս այն նպատակով, որ մազերը երկարին, ի հարկէ, եթէ միայն աղջիկ է:

Կնունքից մի կամ մի քանի շաբաթ յետոյ ծննդկանի տանից քաւորին՝ նրա քաշած նեղութեան համար նուէր են ուղարկում մի ափսէով փլաւ, մի աման ձուածեղ, երկու եփած հաւ, մի քանի գաթայ, մի քանի կարմիր ձու, մի շիշ գինի, մի զոլտ գուլպայ և երբեմն՝ եթէ միայն հարուստ են՝ մի դառն

Հեղինէ. Հեղուղ. Ելօ. Ելենա. Ելի.
Լէօլա.
Հոլիփսիմէ. Հուռումսին, Հուռի.
Հոլիփսիկ.

Մանուշակ. Մնիշակ.

Մարգարիտ. Միքեարիտ. Քեարիտ.

Մարիամ. Մարօ. Մայան. Մարան.

Մաշօ. Մանեայ.

Ջողակաթ. Ջողեր. Ջուղի.

Ջուշանիկ. Ջուշան. Ջիւշի. Ջու-
րիչկա.

Մաթենիկ. Մաթօ. Թենիկ.

Վարսենիկ, Վարօ. Վարինկա.

Վարսենիկ, Վարօ. Վարինկա.

և օձիքը ասեղսագործուած մի շապիկ՝ յատկապէս կնքաւորի համար:

Մանկան հոգատարութիւն.—Մալրերը 3—4 ամիս շարունակ ամենայն օր լողացնում են երեխային, օրը երկու անգամ բալուլում, տակի շորերը փոխում, ամէն լաց լինելիս ծիծ տալիս, օրօրում, նանիկ ասում և քնեցնում:

Սովորաբար ծիծ են տալիս մինչեւ կրկին լղանալը, որ երբեմն տանում է 4—5 տարի: Եթէ սակաւակաթ են, կամ շատ շուտ են լղացել, երեխային կովի կամ իծի կաթով են կերակրում, հետո միքիչ ջուր և շաքար խառնելով: Փոքր ինչ մեծ երեխային տալիս են ջրախառն կաթով եփուած աղած բրինձ: Ֆծից կտրելիս մեղր ու պղպեղը շաղախում և քսում են ծծերին:

Մօր գլխաւոր հոգսը լինում է ազատ պահել երեխային «կոխից»—հետզհետէ նիհարիլ և մեռնիլ:

Խոկ «կոխւում» է, երբ քառասունքը դեռ ըլրացած՝ մի քառասունքոտ կին է գալիս երեխայի մօտ, երբ հայրը և կամ մի մարդ եկած միջոցին երեխային չեն բարձրացնում տեղից, երբ առաջին անգամ օրօրոցը տաւն բերելիս երեխային չեն տանում առաջ և դռան մօտ չեն դնում մէջը և այնպէս ներս բերում:

«Կոխից» բժշկելու նպատակով դիմում են հետևեալ միշոյների:

1) Գիտաշէնի մօտ դտնուած «Քաջքաճորում կայ մի ահագին ժայռ, մէջը մի ծակ՝ «Քաջքարուն» անունով. երեխային երեք անդամ անց են կացնում այս ծակով և ասում. «Իմը քե, քունը ինձ տուք»: Յետոյ յատկապէս պատրաստուած մի տիկին թաղում այդ ժայռի տակ:

2) Առանց հաղորդութեան մեռածների գերեզմանի վրայ քռնելով երեխային՝ ձեռների և ոտների վրայ ջուր են ածում և միքիչ խմեցնում:

3) Լողացնում են մի կտոր մսի և կամ այն մարդու գուլպայի վրայ, որից կոխուի է:

Գուշակելու համար, թէ երեխան արդեօք կառողջանայ, քաքրորով կշռում են և 3 կամ 8 օրից կրկին կշռում: Եթէ

ծանրանում է՝ հաւատում են թէ առողջանալու է, իսկ եթէ թեթևանում՝ յոյսերը կտրում են:

Եթէ երեխան մեռելից վախնում և հիւանդանում է, մի առաւօտ շատ վաղ անխօս, առանց յետ նայելու տանում են մի առանց հաղորդութիւն ստանալու մեռածի զերեզմանի վրայ և ոտներին ու ձեռներին ջուր ածում, ջրի ամանը կոտրում և յատկապէս խմորից պատրաստուած մեռելը այնտեղ թաղում:

Նոյն նպատակով նոյնպիսի ննջեցեալի զերեզմանի վրայ մի կտոր կտաւ են դնում, և միքիչ ջուր ածելով վերան, երեխային երեք անգամ խմեցնում են, զերեզմանի վրայ կուացնելով:

Եթէ ընդհանրապէս մի ծնողների որդիները չեն ապրում, նորածնին մահից ազտտելու յուսով երբ կնքած տուն են վերապառնում, մի թուրքի գիրկ են տալիս, իբր թէ նա է եղել քաւորը:

Նոյն յուսով նորածնին ծախում են միքանի կոպէկով մի որևէ մարդու և ապա իբր օտարի որդի իրենք պահում:

Երեխայի առաջին, կաթնատամները դուրս գալիս էճախոշ (զարդուղալի) և ընկուղի հետ և ածում երեխայի գլխին, նախապէս մի թաշկինակ ձգելով: Գուշակութիւններ անել չգիտեն, ինչպէս անում են Վարանդայում:

Տարեկան երեխային ծննդեան օրը դնում են ծնուած տեղում և երեք անգամ «թուլ են տամ»—շուռ ին տալիս, որպէսզի բան գտնող լինի:

Երեխային կանգնել սովորեցնելու համար բունում են երկու ձեռքեց և կանգնեցնելով ասում:

Ցուտա.

Կանանց կարմիր խոտ ա, Փունչ մանիշակ կոխել ա:

Կայծակի հարուածից երեխային ազատ պահելու համար ուրբաթարուր են կապում նրա աջ թէկին:

Չար աչքից ազատելու նպատակով՝ աչքահլունքը եօթ անգամ աղօթում են և կարում երեխայի վրայից:

Օրօրոցադողից *) մանկանը ազատ պահելու նպատակով խոզի գունչը քաշ են տալիս օրօրոցից:

Երեխան ծաղիկ կամ կարմրուկ հանելիս կրկոտ հաց են եփում և բաժանում. ընկոյզի իւղով ճրագ են վառում:

Ման-դալ սովորեցնելու համար զետնին մի վայտ են ցըցում և նրա ծալրին մի կիսաթողոր փայտ անցկացնում այնպէս՝ որ պտըտուի: Երեխան լենուելով այս կիսաթողոր փայտին՝ պտտում է՝ կամաց-կամաց ոտները փոխելով:

Նոյն նպատակով «ոտանի» են դնում: — Այս մի քառակուսի տախտակ է, մէջ տեղը շրջանակածէ ծակուած և չորս կուսի տախտակ է, մէջ տեղը ուղղագործ ծակուած: Ոմանց ոտների վրայ անիւներ կան ոտների վրայ ամրացրած: Ոմանց ոտների վրայ անիւներ կան անցկացրած, այնպէս որ երեխան առաջ հրելով կարողանում է քայլել:

ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈՌԹՈՎԱՆՔ

1. Հայր—պապի
 2. Մայր—նեանահ(հարցական նշան ունեցող աերը՝ ֆր. a)
 3. Հաց—տատուած
 4. Ջուր—մեռ կամ բռ *
 5. Ջոր, զգեստ—չիւչիւ (ֆր. II)
 6. Գնալ—նեալ
 7. Կերակուր—փօփօ
 8. Ջուն—տուտին
 9. Կատու—ափիշ
 10. Ուտել—մամել
 11. Խմել—միմել
 12. Գնել—նենել
 13. Օրօրոց—տօտօն
 14. Սպանել, խեղել—փօթել
 15. Կոտրել—կիտել
 16. Նստել—տիտել
 17. Քեռի—դադաց
 18. Երեխայի—կուկուն
 19. Ծաղիկ—ծածաղ
 20. Վէրք—վավի
- Խառնութեան. —1) ա նեանահ ափիշը տանտէն մամեց—նշ՝ մայրիկ, կատուն հայրը կերաւ. 2) ա պապի, տուտին աբուն միմեց — հայրիկ, շունը ջուրը խմեց. 3) ա նեանահ, տօտօնը նենեմ — մայրիկ, օրօրոցումը քնում եմ. 4) ա նեանահ, պապին դադացը տիտեց — մայրիկ, հայրիկը ձին նստեց. 5) թաթս վավի աձեռքս վիրաւորուած է. և այն և այն:

*) Տես հաւատքի բաժնուս.

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Գանձակի գաւառում այժմ միաժամանակ գոյութիւն ունին թէ հին. նահապետական գերդաստանը և թէ նոր, առանձնացած ընտանիքը: Առաջինը հետզետէ քայլայում է, նախնի նահապետական սովորութիւններն անհետանում են, տանմեծի իրաւունքները սահմանափակում են, անդամների պարագմունքները տարբերում են, միմեանցից, ժամանակակից գաղափարներ և սովորութիւններ թափանցում են նրա մէջ և արագացնում նրա անդամալուծուիլը:

Երկրորդը անմիջապէս դուրս գալով առաջնից և դեռ նորնոր կազմակերպուելով՝ պահպանում է իւր մէջ առաջնին յատուկ շատ սովորութիւններ և զաղափարներ, այսուեղ էլ տիրում է տան մեծի բռնութիւնը, միահեծան կառավարութիւնը, միայն փոքր ի՞նչ աւելի մեղմացած և ձևականապէս յդկուած կերպով, թէ առաջնում և թէ երկրորդում կինը ստրուկ է, միայն առաջնում միքանի տէր ունի, մինչդեռ երկրորդում միայն մինը:

Եւ որովհետեւ կինը հանդիսանում է որպէս ընտանեկան կեանքի բովը, ուստի և վերջինիս մասին փոքր ի շատէ ամփոփ գաղափար տալու յուսով՝ կը նկարագրենք կնոջ դրութիւնը մանկութիւնից մինչեւ պառաւութեան շրջանը, ներփակաբար: Ինչպէս միւս բոլոր հարցերում, այսուեղ էլ մենք ի նկատի ունինք գիւղացուն-ժողովրդի արմատն ու կեցուցիչը:

Մանկութիւն. Աղջկայ ծնունդը ոչ թէ ուրախութիւն, այլ տիրութիւն է պատճառում թէ ծնողներին և թէ աղքականներին: Մայրը կարծես մի յանցանք գործած կուչ է գալիս, ամուսինը երբեմն բարիւանում է կնոջ վրայ, երբեմն էլ ամենակրպիտ խօսքերով հայհոյում նրան: Սկեսուրը անիծում է նրան սսելով. «Զահիլ տղիս օրը սեւացըիր, աղջկերք բերելով, ջինսդ (սերունդ) կտրուի»: Ազգական կանայք գալիս են ոչ թէ աչքիլու տալու, այլ մինիթարելու. «Բասն չկայ, աղջիկ բերողը տղայ էլ կը բերի. հերն ու մէրը սաղ ըլին. հըլը ով ա գի-

տում, գրա բաջին շատ չար ու բարի կայ, ծաղիկ, կարմրուկ... ասած ա, պէտք ա կալովը պիրես, խախալով (մեծ մաղ) վեր օնես»:

Նոյն իսկ մանկաբարձին էլ հայհոյում են, անիծում. «Զեռքդ կոտրուի մէկ էլ մեր տանը աղջիկ երեխայ չփաթութես: Ի հարկէ, այս դժգոհութիւնը այնքան աւելի է լինում, որքան շատ աղջիկ երեխաներ ծնուած են այդ գերդաստանում: Պատահել են դէպքեր, որ նորածին աղջկան տաշտի տակ են դրել և սպանել:

Այսպէս վերաբերուելու պատճառն այն է, որ աղջկան «ուրիշի ապրանք, դսի պատ են» համարում, 10—15 տարի հայերենական տան մէջ ապրելուց, ծախսերի ենթարկելուց յետոց թողնել գնալու է: Եթէ ծնողները նեղութեան, խղճութեան մէջ լինեն, նա հակառակ նոյն իսկ իւր սատովիկ ցանկութեան և ունեցած կարողութեան, չպիտի կարողանայ օդնել. իրենց գերեզմանը օրհնել տալ: Այն ինչ արու երեխան «տան սիւն է»: «Ճերութեան նեցուկ» է, «օջախի վառ պահող», «ծնողաց լիշտակը պահպանող», նրանց գերեզմանը օրհնել տուող է:

Ուստի և սրա ծնունդը մեծ ուրախութիւն է պատճառում բոլորին և ցնծութեամբ ընդունում:

Որդոց դաստիարակութեան մէջ անդամ ծնողները անհամեմատ աւելի խնամք, գութի, հոգատարութիւն տածում են դէպի արու երեխաները, քան թէ աղջիկները. կաթի սերը, կերակրի լաւ և մեծ բաժինը, լաւ հանդերձը միշտ արու երեխային է բաժին ընկնում. աղջիկը «հնով մնով», յաւելցուկներով էլ կարող է մի կերպ քաշգալ:

Երբ աղջիկն ու տղան միմեանց հետ կռւում են, մայրը գրեթէ միշտ տղի կողմն է բռնում, աղջիկը մեղաւոր, թէ արդար՝ նախատինքի, պատժի է ենթարկելում: Այս տեսակ կողմնապահութիւնից տղան երես է առնում և սովորում է քրոջ հեա վատ վարուել, նրան թակել:

Երբ աղջիկը 4—5 տարեկան է դառնում՝ ուղարկում են նրան գառներ արածացնելու և նա այստեղ ուրիշ երեխաների հետ աղատ իւաղում է ու գուարմանում. բայց երբ 6—7 տա-

բեկան է դառնում, մարը այլև թոյլ չի տալիս տղաների հետ ազատ խաղալու, նա նրան իւր մօտ է պահում և իւր հետ տանում հարեւանների տունը, ուր տեղի ունեցած բամբասանքները, անվայել խօսակցութիւնները աղջիկը լսում է և սովորում:

Գլուղերում ծնողները բոլորովին կարիք չեն համարում աղջիկներին ուսման տալ, «վարպետ, կոյս չի դառնալու». ամբողջ գաւառում օրիորդաց ոչ մի դպրոց չկայ. միայն տղաների հետ միքանի աղջիկներ, այն էլ գիւղի ամենաառաջնակարգ տներից սովորում են երկու-երեք տարի և դուրս գայիս պսակուելու:

Գեղջկուհի մօր բոլոր խնամքը կայսում է նրանում, որ
աղջկանը տուն աւելել, սրբել, աման լուանալ, գուշպայ զործել
և կար կարել սովորեցնի:

Երիտասարդութիւն. Գիւղերում աղջիկ երիտասարդութիւն չկայ, որովհետև հէնց որ իննը-տաս տարեկան են դառնում, իսկոյն նշանում են և պակում: 14—15 տարեկան աղջիկը արդէն տանը մնացած, «զոդալ» է համարւում: Եւ պէտք է ասել, որ սրանց թիւը շատ փոքր է և հասարակութեան մէջ համարւում չունենալով, մի որ և է հասարակական դեր չեն կարողանում խաղալ:

Գիւղական աղջիկներն ընդհանրապէս բաւական ազատութիւն են վայելում. նրանք միջոց ունին շփուելու երիտասարդների հետ, նրանց ճանաչելու, «սեր կապելու», բայց սրանց ծնողները թոյլ չեն տալիս նրանց «աչքերը բացուելու», շուտով նշանում, պսակում են, առանց նոյն խակ նրանց կամքը հարցնելու, որովհետև գիտեն, որ «ղոտալները» արդպիսի կոլրհագանդութիւն ցոյց չեն տալիս և փախչում են իրենց սիրած երիտասարդների հետ:

Առ հասարակ տղաներն ու աղջիկները միմեանց տեսնում են հետևեալ տեղերում:

ա. Աղքիւրի մօս. Քուր բերելու պարտականութիւնը աղ-
ջիկների և նորահարսերի վրայ լինելով՝ սրանք տուաւուր շատ
վաղ, արշալուսին և երեկոյեան իշխում են աղքիւրը, ուր երի-
տասարդները բերում են անասուններին ջուր տալու, այստեղ՝

խօսում են միմեանց հետ, կատակներ անում, սրախօսում։ Երիտասարդներն իրենց սիրած աղջիկներին միրգ են տալիս և նրանցից կարած «քիսայ», գուլպայ և այլ ընծաներ ստանում։
Բ.—Հարսանիքներին, երբ աղջիկներն ու տղաները միմեանդ հետ մրցում են պարով։

զ. Ուխտատեղիներում, ուր ազատ օդի և ընդարձակ զաշ-
տի մէջ ամէնքը զբօսնում, պարում, ուրախանում են:

Դ. Եկեղեցիներում. ուր մասնաւանդ ծաղկազարդին և սուրբ Սարգսին բոլոր աղջիկները անպատճառ եկեղեցի են գնում:

Ե. Արտը գնալիս և գալիս:

զ. Համբարձմանը անտառում ծաղկներ ժողովելիս և յետոյ վիճակ հանելիս:

է. Վարդավառին և միւս տօներին, երբ պարեր են սարք-
ում:

Գիւղերում ջերմ սիրահարութիւն շատ հազիւ է պատահում, այլ թեթև համանկրանք, որովհետև դեռ կատարեալ արբունքի չհասած, աղջիկներին պատկում են: Եւ այս թեթև համակրանքն էլ, որ ծնողների հալածանքի ժամանակ անմիջապէս անհետանում է և մի առանձին վիշտ կամ ուրախութիւն չի պատճառում, սիրոյ երգերի հիւսուելու էլ չի նպաստում:

Այս պատճառով և սիրոյ երգելի մեծագոյն մասը ոչ թէ
աղջիկների, այլ «դոտալ»-ների և հարսների սոնեղագործու-
թիւններն են:

Նշանադրութիւն. — Մեծ մասամբ 9—11 տարեկաս հա-
սակում գեղջկուհուն նշանադրում են, ում հետ որ ծնողները
կամենան: Այսպիսի մի ծանր խնդրում նրա կամքը բոլորվին
չեն հարցնում, և եթէ մի որևէ համակրանք էլ ծագած է
նրա մէջ դէպի մի երիտասարդ, ծնողները, եթէ այդ հաճոյ
չէ իրենց, խստութեամբ ճնշում են և ոչնչացնում:

Նշանադրութեան քողի հետ ստրկութեան քողս էլ ձգուս
են նրա գլխին: Այնուհետև նա այլ ևս իրաւունք չունի ոչ մի
տղամարդի և կամ չափահան կնոջ հետ խօսելու, մենակ տա-
նից դուրս դալու, սկիսրանց ունովն անցկենալու: Այլ մեշտ եր-

սկեսրանցից մինին պատահում է՝ անմիջապէս ծածկում է երեսը և փախչում. փողոցում մի որևէ մարդի պատահելիս շուռ է զալիս դէպի հակառակ կողմը և սպասում, մինչև որ անցնում է: Նա չի տեսնում իւր նշանաձի հետ, որովհետու այդ մեծ ամօթ է համարում. և նշանաւոր տօներին, երբ սկեսրանք գալիս են տեսութեան ու ընծաներ բերում, փեսան նրանց հետ երբէք չի լինում: Նշանած աղջիկը սկեսրանցից ոչ մինի, նոյն իսկ 6—7 տարեկան երեխաների հետ էլ չի խօսում. այլ լուռ ու մունջ կանգնում է նրանց մօտ և կամ ծառայում: Խեղճ աղջիկը սկեսրանց ներկայութեամբ նոյն խոլ նստելու էլ իրաւունք չունի. նա մի լուռ արձան է՝ կանգնած սկեսուրի մօտ: Միայն փոքրահասակ տալերը, որոնք շատ անգամ ընկերուհիներ են եղած նշանած աղջկան, ստիպում են նրան խօսել իրենց հետ, միասին շրջակայքը ծաղիկներ, զմի և այլ կանաչելներ քաղեյու գնալ: Եւ այսպէս՝ ամբողջ սկեսրանց տնից միակ փոքրահասակ տալերն են, որ խօսում են նշանած աղջկայ հետ և փոքրիշատէ մտերմանում հետը: Միւսները, նոյն իսկ նշանածը, մնում են օտար նրան: Ամբարդ նշանագրութեան ընթացքում, որ սովորաբար մինչև մի և երբեմն միքանի տարի է տեսում, նշանածը բացարձակ չի այցելում նրան, այլ գիշերը, երբ տան մեծերը քնած են լինում, նա գաղտագողի ներս է մտնում և զոնքանչի հետ խօսում, նրանից հիւրասիրում: Նշանած աղջիկը լուռ ու մունջ, երեսը չարդաթով ծածկած նստում է մի քիչ հեռու. և նոյն իսկ այն դէպում, երբ նրանց միքանի ըոսկէ առանձին են թողնում, աղջիկը շարունակում է լուռութիւն պահպանել և ամէն կերպ ընդումարդիկ նշանածի գգուանք:

Հաւսնութիւն.—Ամուսնանալով՝ աղջիկը աւելի ևս կորցնում է իւր ազատութիւնը և ենթարկում է բաւական ծանր աշխատանքների: Նրա եղեսը այժմ աւելի թանձը քողով (կարմիր չարդաթ) են ծածկում և մտցնում մի գերդաստանի մէջ, որի բոլոր անդամների հետ նա օտար է, որոնցից ոչ մինի հետ էլ փոքր և շատէ մտերմացած չէ և որոնց հետ նոյն իսկ իրաւունք էլ չունի խօսելու: Այդ ճնշիչ դրութիւնը ինքը, նահա-

պետական կեանքն էլ է զգացել, ուստի և սահմանել է, որ հարսնեղբայրները և կամ մօտիկ ազգականներից երկու պատանիներ ընկերակցում են հարսին և մնում նրա մօտ երեք օր, մինչև որ նա փոքր ինչ ընտելանում է սկեսրանց, սկսում է խօսել ամուսնու հետ: Բայց նա հեշտութեամբ չի վճռում բանալ իւր բերանը և խօսել մի այլ սեռի, մի այլ խմբի անդամի հետ, որովհետեւ նսկապետական կեանքը զերդաստանի անդամներին ըստ աեռի բաժանել է երկու խմբի, որոնց մէջ շատ քիչ հոգեկան կամ մտաւոր կապ, յարաբերութիւն կայ: Տղամարդիկ առանձին են նստում, առանձին, կանանցից զատ և նրանցից առաջ են ուտում խմում, իրենց տպաւորութիւններն ոչ թէ իրենց կանանց, այլ իրենց եղբայրներին, հօրը պատմում, գործի վերաբերութեամբ զարձեալ տղամարդիկ միմեանց հետ են խորհուրդ անում: Ամուսինը մի տղամարդի ներկայութեամբ ամօթ է համարում մի որևէ նիւթի մասին խօսել իւր կնոջ հետ, գգուել իւր երեխային: Բացի դրանցից տղամարդիկ կարծում են, թէ կանանց մազերը երկար են, խելքերը կարճ, և այս պատճառով էլ նրանց կարծիքներին նշանակութիւն չեն տալիս, հետները չեն խորհրդակցում, իրենց դրութիւնը նրանց չեն պարզում: Կանայք շատ անգամ անտեղեակ իրենց ամուսինների նիւթական դրութեան, այնպիսի պահանջներ են անում, որ նրանք չեն կարող կատարել, և փոխանակ պարզ խոստովանելու՝ զանազան պատճառներով մերժում են և շատ անգամ անբաւականութիւնների տեղիք տալիս:

Այսպէս միմեանցից անջատուած և առանձնացած լինելով՝ նորահարսը՝ նոյն իսկ իւր ամուսնու հետ դժուարանում է խօսել և երբ նա ստիպում է՝ նորահարսի նրան ուղղած առաջի քառը «ախչի» (այս աղջիկ) կոչականն է լինում: Նա գեռ ամուսնին իրեն համասեռի տեղ է դնում և ապա թէ հետը խօսում, որովհետեւ նրա գլխի մէջ պինդ նստեցրել են, թէ տղամարդի հետ չի կարելի խօսել, հէնց որ նշանադրութեան քողը գլխին ձգուեց: Սակայն զերդաստանի միսա անդամների հետ էլ նա անխօս է մնում մինչև մի որոշ ժամանակ. այսպէս՝ սկեսրայի և մեծ տեղերի հետ մինչև իւր մահը: Սակայն մի

դէպքում, երբ սկեսուրը մեռնում է և սկեսրալրը զառամելով առանձին խնամքի է կարօտում, միայն մեծ հարսը, որ ստանձնում է սկեսրոջ պաշտօնը, խօսում է նրա հետ։ Սկեսրոջ հետ առաջին հարսը խօսում է անդրանիկ որդին ունենալուց, իսկ միւս հարսերը՝ 5—7 տարուց լետոյի։ Աւագ հարսերի հետ 3—4 տարի, իսկ կրտսերների հետ թէպէտ ինքը խօսում է, բայց նրանք՝ ոչ։ Այսպէս դատապարտուած մշտատև լրութեան՝ հարսը պարտաւոր է զրեթէ ամբողջ օրը աշխատել, երբ նորահարս է՝ պարտաւոր է առաւտաները շատ վաղ վերկենալ տունդրուու աւելել, աղբիւրից թարմ ջուր բերել, օգնել սկեսուրին և սկեսրալրին հագնուելու, բոլորի անկողինները հաւաքել, թէյածել *), հաց ձգել, հաւաքել, տղամարդկանց, բացի իւրա ամուսնու **), ոտները լուանալ, անկողինները ձգել, հանուեցնել սկեսրալրին և սկեսուրին, սրանց մէջքերը և ոտները տրոբել, մինչև որ կը հանդստանան և կը քննեն։

Երբ երկրորդ հարս է՝ կով է կթում, թոնիր վառում, կարում կարկատում. երբ երրորդն է դառնում՝ երբեմնապէս կերակուր է եփում, շարունակ ճախարակ մանում, գորդ և կարպետ գործում, ալիւր մաղում, խմոր շաղում, գնդում: Իսկ երբ ինքը դառնում է սկեսուր՝ կերակուր է եփում, հաց թխում, ճախարակ մանում:

Այս աշխատանքները նա կատարում է տանը, առաւելապէս ձմեռը, տարուայ միւս եղանակներին նրա աշխատանքը կրկնապատկում է:

Այս ժամանակ նա կատարեալ ընկեր է հանդիսանում ամուսնուն և ամենալին եռանդով աշխարհում է.

Նա հաց է տանում, արտը, նա, միքանի գիւղերում, ամուսնու հետ միասին նոյն իսկ հունձ է անում, իսկ շատ տեղերում, իսուրձեր կապտմ, կրում, կալը կալսում, թեղում, ցորենը շուատում, ջրաղաց տանում, աղում, ալդին ջրում, քաղ-

**) Այս նոր է մտել:*

**) Գերդաստանի

ամօթէ համարում ծառայել իւր ամուսնուն և կամ նրան մի որևէ միբգ, քաղցրեղէն տալ:

Հան անում, խաղողը քաղում, թութը հաւաքում, սարում կովերը կժում, իւղ ու պանիր պատրաստում, և այն և այն նրա աշխատասիրութիւնն այն աստիճանի է հասնում, որ կալը կալսելիս կանգնած կամի վրայ, ճիպոտը կռնատակին, և եզներն էքշում, և՛ գուլպայ գործում: 80—90 տարեկան պառաւ կանալք, որոնց մէջքերը ծերութիւնից ընկնուել, ծռուել են, նոյն խոկ գուղոցներում գուլպայ գործելով են ման գալիս: Հարեւանի տունը, մի ազգականի մօտ մի որևէ գործի կամ տեսութեան դնալիս գեղջկուհին տանում է իւր հետ գուլպան կամ մի որևէ կար և այնտեղ աշխատում ու խօսում:

Պատրաստի դրամը, վաճառելի բերքերը գտնուում են
ամուսնու անմիջական իրաւունքի տակ, կինը, առանց ամուս-
նու թողտութեան չի կարող ոչ պատրաստի գումարից ծախ-
սել և ոչ վաճառելի նիւթերից ծախսել, նրան թողլ է տրւալ
միայն, մի մի անդամ միքանի կոպէկի կաթ, մածուն, ձու
ծախսել և դրամը պահել իրեն, այն էլ եթէ միայն ինքն է սկե-
սուրը, որովհետեւ հարսերին խստիւ արգելուած է այդ ևս:
Տան համար հարկաւորուած բարիքները տան-մեծն է հողում,
նա առնում և յանձնում է գերգաստանի մօրը, որի միակ ար-
տօնէութիւնն է ամէն բարիքի և նոյն իսկ տան բանալիները
պահել: Առանց նրա թողտութեան ոչ որդիները և ոչ հար-
սերը իրաւունք ունին մի բան վերցնելու: Նա ինքն էլ բոլո-
րովին ինքնիշխան չէ. անսովորական բաներում նա ստիպուած
է իւր ամուսնու հաճութիւնն ստանալ: Այսպէս օր, եթէ իւր
մօտիկ ազգականը վերին աստիճանի նեղութեան մէջ է և նա
սրտանց ցանկանում է 1—2 ր. բան ուղարկել նրան, իրա-
ւունք չունի, պէտք է տան մեծի հաճութիւնն ստանալ, որը
և բաւական դժուար է: Իսկ եթէ հարսերից մինն է ցանկա-
նում օդնել իւր մօրը, հօրը, եղբօրը, նա պարտաւոր է նախ

մինի միջոցով սկեսրոջը խնդրել, իսկ սա՝ եթէ հաճի՝ կը հարցում են, իսկ եթէ ոչ՝ կը մերժի:

Այս հանգամանքը պատճառ է լինում, որ հարսերը չկարողանալով յայտնի կերպով օդնել իրենց ծնողներին՝ ծածուկ են օդնում, գողանալով տանից *): Ճատ անդամ գողութիւնը բացւում է և մեծ անբաւականութիւնների տեղիք տալիս:

Ծնողներն էլ զիտենալով, որ իրենց աղջիկը ամենանեղ հանգամանքներումն անդամ չպիտի կարողանայ օդնել իրենց, իրենք էլ նրանից կարծես օտարանում են և շատ հազիւ է պատահում, որ հայրը օդնէր իւր պսակուած աղջկան:

Պառաւութիւն.—Կինը միայն պառաւած միջոցին է սկսում ազատութիւն և յարգանք վայելել: Նա ստանձնելով տան ներքին կառավարութիւնը՝ սորկութիւնից իշխանութեան է բարձրանում, և որքան ծանր է եղել նրա ստրկական դրութիւնը, այնքան աւելի դաժան և բռնի է լինում նրա իշխանութիւնը: Նա հրամայում է հարսներին, աղջիկներին, թռոներին և մասամբ որդիներին, և երբ նրանց կողմից մի գժգոհութիւն է լսում, իսկոյն առաջադրում է նրանց իւր անցեալը, երբ աւելի բռնութիւն էր տիրում: Նա կարծում է, թէ ինչպիսի բռնութիւններ որ գործել է իւր սկեսուրը իրեն վրայ, ինքն էլ գործելու է իւր հարսերի վրայ: Ընդհանրապէս՝ որքան գերդաստանը նահապետական է, այնքան աւելի հարսերը հնադանդ և սկեսուրները բռնակալ են: Եւ որքան աւելի գերդաստանը ժամանակակից գաղափարներով խմորում է, այնքան աւելի հարսը ինքնակամ, ազատ և սկեսուրը՝ իւր նախկին իրաւունքներից զրկուած է հանդիսանում: Հարսը ձգտում է անկախութեան, սկեսուրը՝ աշխատում է իւր բռի մէջ պահել նրան. սրանից ծագում են անվերջ կուիւներ, որոնք տանում են գերդաստանի անդամալուծման: Միւս կողմից էլ կրօնական հայեացքները փոխուելով՝ խախտում են այս նահապետական.

*) Հարսը կժի մէջ ցորեն է ածում և ուսին դրած՝ դէպի աղբիւրնուղիւրում. ապա ճանապարհը փոխելով մտնում է հերանց տուն, այնտեղ դատարկում ցորենը և շտապով դէպի աղբիւրը իշխում: Երբեմն մի ուրիշ հարսի մատնութեամբ սկեսուրը հետեւում է նրան, կուժը ուսից վերցնում և քաղմութեան առաջ թքում-մրում, հայոցում, անիժում խեղճ հարսի հերանց:

կազմակերպութիւնը. այսպէս՝ կրօնասէր հարսերը հաւատում են, թէ ինչպէս որ իրենք վարուին իրենց սկեսուրների հետ, այնպէս էլ վարուելու են իրենց հարսերը իրենց հետ. և այս կրօնական համոզունքից դրդուած զսպում են իրենց *):

Ասացինք, որ պառաւ կինը վայելում է բաւական ազատութիւն. այսպէս մինչդեռ նորահարսը կամ միւս հարսերը հարևանի, իրենց հօրանց տունն անդամ գնալու համար իրաւունք պիտի խնդրեն սկեսրոջից **), պառաւ կինը համարձակ դուրս է գալիս տանից առանց մինից իրաւունք խնդրելու, գնում ուր որ կամենում է. խօսում է ամենի, նոյն իսկ անձանօթների հետ, թէև, պէտք է ասած, դարձեալ ամաչելով, ու շալը երեսին քաշած: Նրան ամեն տեղ յարգանքով են վերաբերուում, նրա անցնելիս հարսերը ոտի են կանգնում, կանայք համբուրում են նրա ձեռքը, տղամարդիկ ակնածութեամբ են վերաբերուում. եկեղեցում, ննջեցեալների տներում, հարսանիքներին առաջնակարգ տեղը, առաջին պատիւը նրանց են տալիս:

Պառաւ կանայք հասարակական դեր էլ են կատարում. նշանաւոր տօներին ժողովարարութիւն են անում և մատադ

*) Պատմում են, թէ մի հարս չկամենալով նոյնութեամբ կատարել իւր սկեսրօջ խնդրիը, հաւել փոխարէն մի շանլակոտ է մորթել, եփել և տուել նրան ուտելու: Եւ երբ ինքն էլ է դարձել սկեսուր, մի օր խնդրել է իւր հարսին մի հաւ մորթել եփելը Սա մորթում է մի հաւ, բայց երբ ձգում է կաթսան եփելու, տեսնում է, որ հաւը շանլակոտ է դարձել: Այդ թափում է և մի ուրիշն մորթում, բայց այս անգամն էլ նոյն կերպարանափոխութիւնն է կատարուում: Միամտօրէն նա գնում այս պատմում է սկեսրօջը և աս մտաբերելով իւր արածը՝ պատախանում է. „Ոչինչ, բեր, իմ բրդածն է, պլատի ուտեմ”:

**) Պատմում են, թէ մի հարս սաստիկ ցանկացել է գնալ իւր ծնողներին տեսութեան, որ ապրելիս են եղել մօտակաց գիւղում: Սկեսուրը նրան պատախանել է. թէ երբ շորերդ մաշես, թուզ կըտամ, որ քեզ տանեն: Հարսը տանում շորերը փշերի, ծառերի է քցում, շուտով մաշում և կրկին թուղթութիւն խնդրում: Սկեսուրը պատախանում է, թէ սպասիր, երբ որ քոշերդ մաշես, կըտանենք. Սա էլ վերցնում է ծածուկ քոշերը գնում դռան տակը և այնքան տանում-քերում, որ մաշւում են: Եւ երբ երբորդ անգամ թուղթութիւն է խնդրում, սկեսուրը բարկանում է գերան և ասում. երբ որ գնէ մաշուես, այն ժամանակ կըտանենք: Խեղճ հարսն առանձնացել է լաց լինելու հակիծել է սկեսրօջը. „Հունց որ դու ինձ հօրանց տան հարսաթ (կարօտ) թողի, դու էլ արքայութեանը հարսաթ մնաս”:

կտրում. Երաշտ ժամանակ լծում են արօրի մէջ և գետը հակառակ կողմից վարում, որ անձրև գայ. որբ երեխաներին որդեգրում և խնամում են, քժշկութեամբ են պարապում, տատմէրութիւն են անում. աչք տուածներին ազօթում, վախ բըռնում, կուռ չափում, չոփ հանում, և այլն:

Որբ աղջկայ դրութիւնը.—Գիւղերում որբ աղջկայ դրութիւնը ծնող ունեցողներից շատ չէ տարբերում. սովորաբար մի մօտիկ կամ հեռաւոր աղջական և կամ մի կողմնակի մարդուրախութեամբ վերցնում է նրան իւր մօտ պահելու, որովհետև աղջկայ աշխատանքը աւելի է արժենում, քան նրա ապրուստը, մանաւանդ որ նահապետական մեծ գերդաստանի մէջ մի աղջկայ կերածը երբէք նկատելի չլի լինում, բայց այդպիսի գերդաստանները միշտ աշխատող ձեռքերի պէտք են ունենում: Եւ երբ աղջիկը արբունքի է հասնում, փեսայացուից ստացած դրամով մի երկու ձեռք հանդերձներ են կարում և պսակում, առանց մի որևէ ծախսի տակ ընկնելու: Եւ որովհետև գերդաստանի մէջ առանձին խնամք, առանձին դաստիարակութիւն չի տրում աղջիկներին, ուստի և որբ աղջկան հարագատներից տարբերելու մի առանձին հանգամանք չկայ: Միայն մի բան նկատելի է, որ որբ աղջկան միւսներից աւելի են աշխատեցնում, նրա կարիքներին աւելի պակաս կերպով են բաւականութիւն տալիս: Եւ այսպէս՝ կարող ենք ասել, որ այս դաւառում չկայ մի գիւղ, ուր որբ աղջիկը քաղցից և անհոգատարութիւնից մեռնէր:

Պատահում է նաև, որ որբ աղջկան գիւղից բերում են քաղաք և մինի մօտ ծառայութեան տալիս այն պայմանով, որ նա առանց ոռոճկի, «մի փոր հացով» ծառացի, և երբ նա արբունքի հասնի, նրան իր այնքան տարիների ծառայութեան վարձ՝ մի թեթև օժիտ պատրաստեն և հարսանիքի ծախսը հոգան: Այսպիսի դեպքերում աշխատում են որքան կարելի է յետաձել ամուսնութիւնը, աւելի երկար նրան ծառայեցնելու նպատակով:

Այրի կնոջ դրութիւնը.—Եթէ դեռ ևս պսակի խորհուրդը չկատարած նշանած աղջիկը կորցնում է իւր փեսայացուին,

նրան սովորաբար պսակում են այդ մեռած փեսացուի եղբայրներից, իսկ եթէ եղբայրներ չունի, մօտիկ աղջականներից մէկի հետ:

Երբ դեռ ևս որդի չունեցած է այրիանում, մեծ մասաւիք հաւաքում է իւր տարած օժիտը և վերագառնում հօրանց տուն, պսակում մի ուրիշի հետ: Աւելի պարկեցտ և գովելի են համարւում այն այրիները, որոնք մնում են սկեսրանց տանը մինչև ամուսնանալը: Առհասարակ հօրանց տուն վերագառնալը սկեսրանց համար ամօթալի է համարւում:

Եթէ երեխաներ ունին, անշուշտ ապրում են սկեսրանց տանը. ոմանք թողնում որդիներին և կրկին ամուսնանում, ոմանք էլ մնում և իրենց երեխաներին խնամում: Առհասարակ այրի կնոջ գրութիւնը գերդաստանի մէջ բաւական ծանր է. թէ միւս հարսերը և թէ տեղբերը փոքր ինչ խէթ աչքով են նայում նրա և մանաւանդ որդիների վրայ: Երբեմն լեվիրատ է ծածկաբար տեղի ունենում, կասկածանք, նախանձ յառաջ գալիս և վրդովում գերդաստանի խաղաղութիւնը:

Այրի կինը վերստին ամուսնանալիս թէկւ ձեւականապէս ենթարկում է սկեսրոջ իշխանութեան, թէկւ նրանից են խնդրում նրա ձեռքը, բայց իսկապէս նա միանդամայն ազատ է ընտրելու ում որ կամենայ:

Այսպէս ուրեմն նահապետական գերդաստանը այնուամենայիւ որոշ չափով ապահովում և պաշտպանում է այրի կնոջը, մինչդեռ ընտանիքը շատ անմիտիթար դրութեան մէջ է թողնում նրան: Ամուսնու մահից յետոյ իւր երեխաներով միայնակ մնացած այրին չի կարող որդիներին թողնել և վերստին ամուսնանալ, այստեղ, ոչ մի բաժան եղբայր, հայր լանձն չի առնում պահել պահանել նրա երեխաներին. նա անճարացած պիտի խնամելու իւր երեխաներին և կամ աշխատի մի այնպիսի ամուսին գտնել, որը համաձայնէր ընդունել և՛ իւր երեխաներին, իսկ այսպիսին շատ դժուար է ճարւում:

Գերդաստանի մէջ այրի կինը պարտաւորուած չէ կանացի աշխատանքների սահմանից դուրս գալ, ինչ որ իւր ամուսինը պիտի անէրայիժմ անում է ուղըրը. իոկ ընտանիքի մէջ ամէն

բան ծանրանում է կնոջ վզին. նա պէտք է մշակներ վարձէ ալգին մշակելու, արտը ցանելու, հնձելու. նա ինքն է գնալու նրանց վրայ հսկելու համար. արտին, կամ այդուն մի վնաս հասնելիս նա ինքը պիտի գնայ տանուտէրին գանգատուելու. պարտապանից նա ինքը փողը պիտի պահանջի և եթէ չտայ, ինքը պիտի գնայ դատաստան գանգատուելու, և որովհետեւ պարտապանները գիտեն, որ այդ ծանր է կնոջ համար, ուստի և ձգձգում են և չեն վճարում: Հարկահաւաքը գիտենալով, որ նա մի անպաշտպան կին է, մի քիչ աւելի է պահանջում, այն բաներում, ուր առաջ ամուսնու միջամտութեամբ կամ նրա պատուի համար զիջողութիւն էր արւում, այժմ այլես չեն անում: Այրի կինը ինքը ստիպուած է միջամտել, ինդրել, պահանջել, բայց նրա պահանջները մնում են անկատար և դեռ նրան նախատում էլ են և անզգամ կոչում:

Երբ ահազին դժուարութեամբ, դառն արցունքներով մեծացնում է այրի կինը իւր որդիներին և հարսեր բերում, նրա դրութիւնը դարձեալ ոչնչով չի լաւանում. «անզլուխ» պառաւին նոյն իսկ որդիները շատ չեն պատում, նրան շատ չեն լուս. չափահաս, աւագ որդին դառնում է տան մեծ, և ձըգտում է տան իշխանութիւնը մօրը ձեռքից խլել և նոյն իսկ նրան էլ իրեն ստորագրել: Մայրը, որ մանկութիւնից արդէն վարժուած է ենթարկուելու, հպատակուելու, հեշտութեամբ ստորագրում է նրան և կամաց կամաց յետ քաշում: Հարսերը, իրենց ամուսինների բարձրանալով գոռողացած՝ իրենք էլ միւս կողմից աշխատում են տան ներքին կառավարութիւնը իրենց ձեռքը ամփոփել. այստեղ այրի կինը աւելի խստութեամբ է ընդդիմադրում, սակայն զրկուած լինելով իւր իշխանութեան նեցուկից—ամուսնուց—չի կարողանում ընդդիմադրել և երկար անբաւականութիւններից և կռիւներից յետոյ, յառաջ են գալիս բաժանումներ, ամուսնացածները առանձնանում են, իսկ մայրայրին մնում է իւր չամուսնացած որդիների մօտ կամ մի հարսի մօտից միւսի մօտ անցնում, երբ նդանք ծննդկան կամ հիւանդ են լինում: Այս ցաւալի զրութիւնը ի նկատ առնելով կանալք ցանկանում և խնդրում են Աստծուց, որ իրենք իրենց ամու-

սիններից առաջ մեռնեն, նրանց ձեռքերով «առօք փառօք հողը դրուին»¹⁾:

Բայց կնոջ վրութիւնը հակիրճ և շատ լաւ աւելի լաւ որոշում է ժողովրդական բանաստեղծութիւնը՝ այսպէս.

Հօրն ընկայ՝ խոր հորն ընկայ.

Մօրն ընկայ՝ դռնեղուո մհրն²⁾ ընկայ.

Աղօրն ընկայ՝ աղբահոբն ընկայ.

Քուրն ընկայ՝ ջուրն ընկայ.

Մարդն ընկայ, մարդն ընկայ

Շղթաթակի³⁾ վարդն ընկայ:

Ա Զ Գ Ա Կ Յ Ա Կ Ա Ն Բ Ա Ռ Ե Բ .

ՄԵԾ հօրը ասում են պապի

ՄԵԾ մօրը՝ տատի

Հօրը՝ անէր, ապէր. ամի.

Հօրեղօրը՝ ամի, ապէր.

Հօրեղօր կնոջը՝ մեծ աղիզ, աղի.

Մօրեղօրը՝ դայի.

Մօրեղօր կնոջը՝ քռակին.

Հօրաքրոջը՝ հրաքիր. բիբի

Մօրաքրոջը՝ մրաքիր. բիբի.

Քրոջը՝ աքեր, պաճի.

Եղբօրը՝ ախպէր, ապէր.

Կնքահօրը՝ պելի,

Կնքաւորը՝ լրջախպէր.

Կնքամօրը՝ սնամէր.

Կնքահօր հօրը՝ սանէէր

Կնքահօր կնոջը՝ պելակին.

Խ Ն Ա Մ Ո Ւ Ն Ք

Ամուսնու հօրը՝ պատրոն.

” մօրը՝ սկեսուր.

” եղբօրը՝ տեգր.

” քրոջը՝ տալ.

” եղբօր կնոջը՝ տէգերակին.

Կնոջ հօրը՝ հաներ.

” մօրը՝ զանքունչ, հետը խօ-

սելիս անէր, զիզի՝ զիզի՝ աղի.

” եղբօրը՝ հանօր տղայ.

” քրոջը՝ քենի.

” քրոջ մարդուն՝ քնակալ.

¹⁾ Երկու հարս իրենց ացրի սկեսոջը դնում են մի կարպետի մէջ և ծայրերից բռնած աչնքան պատկատ տալիս, որ խեղճ կնոջ ուշքը գնում է և ձայնը կտրում: Այս միջոցին հարսերը պառկեցնում են նրան անկողնում մէջ և կանչում իրենց ամուսնուներին, սկարագրելով նրանց, իբր թէ նաշնկարծակի հրւանդացել է: Երբ որդիները մի քիչ ուշքի են բերում մօրը և հարցում նրան, թէ ի՞նչ է եղել նա, չկարողանալով խօսել շարժում է գլուխը դէպի իւր երկու կողմը կանգնած հարսերը և ը, ը՝ անում: Արդիս ները բան չնասկանալով՝ հաւաքին են դիմում բացատրելու. և սրանք ասում են, թէ նա իւր ունեցած զարդերը երկու հարսերին է կտակում:

²⁾ Պուրալ.

³⁾ Ցողալլուց:

Բ Ա Ղ Ա Ն Ի Ա.

Գիւղերում բոլորովին բաղանիսներ չկան, իսկ քաղաքում՝ կան մի քանիսը, որոնցից ամենալաւը՝ եկեղեցապատկաննէ։ Սրանց ջուրը հանքալին չէ. այլ տաքացնում են։

Գիւղերում լողանում են ձմեռ՝ տանը, իսկ ամառ՝ բակում, կապերտներով և սաւաններով մի անկիւն առանձնացնելով։

Սովորաբար կանալք լողանում են ամէն շաբաթ օր և կամ գլխներն ու ոտներն են լուանում, իսկ տղամարդիկ և պառաւները տարին միայն միքանի անգամ, մէկ մէկ էլ զլուխներն և ոտները լուանալ տալիս։ Թէ լողանալիս և թէ լուացուելիս առաւելապէս զործ են ածում ճարպի (փիթ) սապոն, իսկ աղքատները՝ չողան (salicornia). սակայն այս չողանը աւելի զործ են ածում լուացքի մէջ։

Լողանալիս սպիտակեղէնները փոխում են և հանածը անմիջապէս լուանում։

Առհասարակ երեխաներին լողացնում են մալրերը և տատերը, հարսերին՝ աղջիկները և կրտսեր հարսերը աւագութեան կարգով, այսպէս՝ առաջին հարսին լողացնում է երկրորդ հարսը, երկրորդին՝ երրորդը և այն, իսկ նորահարսին՝ տան աղջիկը։ Սկեսուրին լողացնում են հարսերը, իսկ սկեսուրը երբէք չի լողացնում հարսին, ամօթ համարելով այդ։

Լողացնողը իսկոցն լողացողի շորերն էլ լուանում է նրա լողացած ջրի մէջ և ապա ինքը լողանում, կանչելով իրեն լողացնողին։

Կանալք լողանալիս նախ մի մեծ կաթսայով ջուր են տաքացնում, ապա տաշտը և սրա մօտ մի երկրորդ կաթսայ դնում, առաջին կաթսայից ջուրը վերցնում, լցնում երկրորդ կաթսան, սառն ջար աւելացնում, այնպէս որ բարեխառն լինի, ապա զլուխը քանդում, երեսին խաչ հանում, «Յիսուս Քրիստոս Աստուած, զու չար աչքէ թափեն» ասում և սկսում զլուխը լուալ։ Միքանի անգամ սապնելուց յետոյ զլիսին քսում են կամ քացախ, մէջը մի քիչ իւղ հարած, կամ մածուն, և

կամ ձուի լաւ հարած դիղնուց։ Յետոյ հանում են հանդերձները, նստում տաշտի մէջ և լողանում։ Լողացնողը ջուր է ածում, սապնում, լփում, և օգնում հագնուելու։

Քաղաքում ստորին և աղքատ գասակարգը նոյնպէս տանն է լողանում, իսկ փոքր ինչ հարուստները երկու շաբաթը մի անգամ կամ աւելի ուշ գնում են բաղանիս։ Գանձակում, ինչպէս և ուրիշ գաւառական քաղաքներում, բաղանիսը կանանց կլուբ կարելի է համարել։ Այստեղ հաւաքւում է կանանց ահազին բազմութիւն և միենուն, ընդհանուր բաժնում լողանում 4—5 ժամ շարունակ։ Այս միջոցում միմեանց տեսնում են, միմեանց կողք նստում, երկար խօսակցում, նորութիւնները միմեանց հաղորդում, սրան նրան բամբասում։ Բայց բաղանիսը մի ուրիշ դեր էլ է կատարում. մեծ մասամբ այստեղ են ընտրում հարսնացուները. երիտասարդների մալրերը շուտ շուտ դնում են բաղանիս, դիտում, քննում այս և այն աղջկան, որ տեսնին, թէ մարմնական մի որևէ պակասութիւն չունին։ Բաղանիսում ծառայող լողացնող կանալքը առաջինն են, որոնց զիմում են երիտասարդների մալրերը տեղեկութիւններ առնելու աղջիկների կազմուածքի և բնաւորութեան մասին։

Կ Ե Բ Ա Կ Ո Ւ Ր Ե Ւ Խ Մ Ի 2 Ք.

Այս գաւառի հայ գիւղացիների սնունդը կազմում են գլխաւորապէս բուսեղինն ու կաթնեղինը. մսեղինը շատ փոքր մասն է բռնում. Բացի միքանի մեծ և կենդրուական գիւղերից, ոչ մի գիւղում ցատուկ մսավաճառ չկայ, և ցատկապէս ծախելու համար կենդանիներ չեն մորթում. Երբեմն միայն, երբ մինի եղը կամ ոչխարը վնասում և կամ մի որևէ հիւանդութիւն ստանալով՝ անպէտքանում կամ սատկելու վտանգին է ենթարկում, գիւղացին մորմոքած սրտով մորթում է և մի ծառի ճիւղից քաշ տալով՝ ձայն տալիս գիւղին, որ դան միս առնեն։ Այս ժամանակ ամբողջ գիւղը ցնծում է և մի տեսակ կենդանութիւն, շարժում ստանում։ Ամէն կողմից խմբւում են մսավաճառի շուրջը և հերթի շապասնելով՝ ահազին աղմուկ բարձրացնում. Թռչուններ, ինչպէս հաւ, բադ, հնդկահաւ, թէկ պահում են, և այն էլ բաւական մեծ քանակութեամբ, բայց հազիւ է պատահում,

որ մորթէին և ուտէին: Մինչև մարդը չհիւանդանաց և կամ հաւը սատկելու չինի, հաւով չարպաց չի եփուել: Ձկներ ևս քիչ են գործածում, որովհետև գաւառում մեծ լճեր և գետեր չինելով շատ չկան:

Գիւղացին մսով կշտանում է առաւելապէս մատաղ անելիս. Ճանըր աշխատանքներից ազատուած նա բարձրանում է մի որևէ ուխտատեղի, և ազատ, թարմ օդում մորթում մի գառը կամ մի ոյլար և կամ գոնէ մի աքաղաղ, եփում, խորովում, կուշտ ուտում, մի քիչ էլ զինի խմում և ապա կրկին հետի վերադառնում, մի գեղեցիկ զբօսանք կատարելով: Երկար, ճանըր աշխատանքներից և վատ սննդառութիւններից յետոյ այսպիսի մի զբօսանք և մանաւանդ այսպիսի մի սննդարար սեղան, միացած յուսոյ և երախտագիտութեան հաւատքի հետ՝ միանգամայն շատ լաւ ազգեցութիւն են անում գիւղացու թէ հոգեկան և թէ օրգանական կեանքի վրաւ:

Բուսեղէններից ամենից աւելի և անհամեմատ մեծ քանակութեամբ գործ են ածում հացը, որ պատրաստում են ցորենից, դարուց, կարտոֆիլից և եղիպտացորենից: Բանջարեղէնը այնքան շատ չի գործածում, որովհետև ընդհանրացած սովորութիւնն չէ դարձած բանջարանոցներ պահել: Ընդհակառակը մրգեղէնը շատ մեծ քանակութեամբ է սպառում: Ամառուայ սննդի մեծագոյն մասը՝ մրգեղէնն է կազմում: Մի կտոր հաց դնելով թեկի տակ՝ կանացք և տղաներ առաւու շատ փաղ գնում են այզի և երեկոյցեան վերադառնում: Թութ, կեռաս, խնձոր, տանձ, և մանաւանդ խաղող միւնոցն ցամաք հացի հետ զանազանակերպում են սրանց պարզուկ սեղանը:

Կաթնեղէնից պահում պարզուկ սեղանը:
Ավանիրը ունեսում տներում անբաժան է հացից,
միշտ պանիր հացով սկսում, պանիր հացով վերջացնում են: Մի ամ-
բողջ կամ կէս լաւաշի մէջ պանիր շարելով՝ ոլորում են և մի ահաղին
բրդուճ շինելով՝ երկու ձեռքով բռնում և այտերը ուռեցրած՝ ուտե-
լով գործերին գնում: Ո՛չ պակաս գործածական է նաև մածունը, որ
ոչ միայն կշտացնում, այլ և տապից հոփացնում է, երբ ցինուած են
(ջրով խառնում) և խմում: Կարագը, միացած մեղրի հետ՝ հիւրի կամ
հարսնելուն է ընկնում: Խսկ իւղը մեծ մասամբ վաճառ է
հանուում և մեծ խնացով եամբ գործածում:

Մեղքը պաս օրերին գալիս. Ե քաղցրացնելու սովոր ահազին կտորներով համեմուած լոբու թողած համու:

Գիւղացիներն ընդհանրապէս շատակեր են, իսկ սրանց մէջ քահանաներն անկուշտ: Փողովրդական առակն առում է, թէ մի գիւղացու այզի երկու քահանայ և եօթը գոմէշ էին մտել և ուտում էին: Եթէ հարցրին գիւղացուն, թէ հրոնց գուրս հանեն այզուց, քահանաներին, թէ գոմէշներին: Նա պատասխանեց. «Եթէ ուզում էք, որ

առունս չափի, հեռացրէք քահանաներին, որովհետև գոմէշները կը-
կշտանան և կըդադարեն ուտելուց, իսկ քահանաները անվերջ պիտի
ուտեն»:

Գիւղացիները օրական չորս անգամ են հաց ուստիւմ: առաջ
տեան, սովորաբար հաց ու պանիր կամ միայն ցամաք հաց. կէս օրին՝
մի, երբեմն և երկու տեսակ կերակուր, երեկոյեան մօտ, ժամը 4 ին՝
դարձեալ պանիր հաց, և երեկոյեան՝ ժամը 7-ին նոյն ճաշուաց կե-
րակիները: Տղամարդիկ ճաշում են առանձին, կանացք առանձին և
մինչև որ տղամարդիկ ճաշից վեր ըկենան, կանացք չեն նստիլ հաց
ուտելու: Սակայն այս միայն նահապետական տներում, մի սներում
ամէն կերպ էլ պատահում է: Կերակուրը մատուցանում են մի ամանի
մէջ ածած և բոլորը սկսում են նրա միջից ուտել: Սակայն այժմ շատ
տներ սկսել են իւրաքանչիւրին առանձին ամանով մատուցանել: Ճաշի
ժամանակ շատ քիչ են խօսում, որովհետեւ ամէն մինը աշխատում է
մի քանի պատառ միւսից աւելի ուտել: Եթի միս է լինում կերակրի
մէջ, աւելի ճարպիկները մինը միւսի ցետևից վերցնում են կորիները
և միքանի տեղից կրծելուց ցետոց վայր դնում իրենց առաջը, և երբ
վերջանում է միսը, կրկին մէկ մէկ վերցնում են այդ միւսնոյն կտոր-
ները և կարգին կոծում, հաստատ համոզուած լինելով որ այս անգամ
մօտինը չի խլիլ նրա պատառները, որովհետեւ ինքը արդէն մի ան-
գամ կոծել է

Հիւր եկած միջոցին չորս, կիսգ, սրբությունը են հիւրին, որ շատ ներ են պատրաստում և ամէն կերպ ստիպում են հիւրին, որ պուտի:

Պատառաքաղի և ասծուցոյն է Ունկոր տները
մտնում է։

ԽՄԻՀՔԵԵՐԻՑ թէցը հետզհետման լորդական միայն կծովի: Պաս օրերին արդէն առաւտա երեկոյ խմում են թէց, միայն կծովի: Պաս օրերին միայն թող են տալիս իրենց, այն էլ ոչ տան բոլոր անդամներին, քցած խմել՝ հացի հետ: Զքաւոր տներում թէցը պատրաստում է հիւր եկած միջոցին, մի շանհին մէջ ջուր եռացնելով: Խոկ ունեոր տները ինքնաեռ ունենում են: Զքաւոր ընտանիքները թէցի փոխարէն գործ ինքնաեռ ունենում են: Զքաւոր ընտանիքները թէցի փոխարէն գործ են ածում աւելի բոյսի տերևները, ոմանք էլ ուրիշ խոտեր:

Կաթ սովորաբար շատ չեն գործառնում.
Ողելից խճիչքներից սաստիկ գործանւում է զինին, որ գաւառի
արդիւնաբերութեան գլխաւոր բերքերից պինն է, և օղին: Ո՞չ մի ու-
րախութիւն, հարսանիք, կնունք, ո՞չ մի տիրութիւն, թաղում, չե-
անցնում առանց զինու և օ:ի: Սովորաբար առաջի բաժակը տան-
տէրն է խճում, երկար բարենմախութիւններ անելով: Միւնոյն բա-

ժակը կամ բաժակները ձեռքից ձեռք անցնելով քսում են համարեա
բոլորի շրթունքներին; Եթի խմիչքը մատուցանում են, վերցնող նախ
թեթևութեամբ խփում է մատուցանողի ձեռին և «լաւ ձեռքէ է»
ասելով վերցնում, երկար բարեմախտութիւններ անում և խմում; Ան-
միջապէս՝ զանազան կողմերից «Անուշ» են ասում և սա գլուխ տալով
«Անուշ կենաք» է պատասխանում:

Սովորաբար կերակուրները պատրաստում են իրենք, տանտիկին-ները, սկիսուրը կամ աւագ հարսը և խոհարար կամ խոհարարուհի ջեռ վարձում գիւղական ամենահարուստ տներումն անդամ։ Նոյնն է գրեթե և քաղաքում ստորին և միջին դասակարգներում, Միայն շատ հարուստ տներում երկում են առանձին խոհարարներ կամ հոգաց բուհիներ։

Հարսանիքի և թաղման ժամանակ տրուած ճաշերի համար կանչ-
ւում են գիւղում յացտնի կերակուր եփող կանացք որոնք թուրքերէն
բառով «Քէցվանի»—խոհարար են կոչւում։ Հացն էլ իրենք տանտի-
կիններն են թխում, միայն վերոցիշեալ միջոցներին կանչում են կամ
բարեկամ և կամ աղքատ կանանց իրենց օգնելու։ Ահա գիւղացիների
ամենազդործածական ուտելիքները։

β n t u b η ξ u u b p

Կարտոֆիլով հայ, Կարտոֆիլը լուանում են և լցնում ջրով լի կաթսավի մէջ եփում, ապա քաւկիրով հանում, դնում մի թէաքնի (փայտէ խոր սկուտեղ) մէջ և «կարտոֆլս թաքի» կոչուած փայտով,— որի մի ծացրը գունտ է, իսկ միւսը երկար,— թակում, ապա վերցնում են և ածում մի ուրիշ կաթսացով եռացրած ջրի մէջ. շերեփով խառնում, փլաւքամիով քամում և շերեփով աշնքան ճմլում, որ կարտոֆիլի մասերն անցնում են փլաւքամու ծալկերով, իսկ կեղեւը մնում է փլաւքամու վրայ, որը և գէն են ածում, իսկ կարտոֆիլի անցկացրած մասի հետ ալիւր են խառնում, շաղախում և հաց թխում:

Սիմինտոյ հաց.—Սիմինոր գույնը կազմութեալ ասցզացած մասին լաւագուստ, շաղախում և հաց թխում:

Ծաղկացում.—**Արքայի հիմքում աղութ է առաջնում են, խախալով մաղում,**
չաղացում աղում, և ալիրի հացի նման թխում պետք հաց, այսինքն
կլոր հաստ հացեր, որովհետև շատ բարակ չի բացում:

Կապահակ չի բացւում:
Կապահակ չի բացւում:

Քաղաքակ երեսը նախշում, երեսին ձու
թիստում թիստում և ապա երեսին մեղր կամ շաքարածում

Հարա կամ պլիքը՝ Ավետիքը հունցում են մի որևէ թիւն-է»).

— իւղը առանց տաքաջնելու ձգում էն ուսումնական պարագաների մէջ պատրաստում էն

– Քաղսելու ձգում են դաւաթիւ

մէջ և ձեռքով այնքան հարում, որ փրփրում է. այս ժամանակ մազած ալիւր և ծեծած շաքար քիչ քիչ ցանելով շաղախում են, մինչև դած ալիւր և ծեծած շաքար քիչ քիչ ցանելով շաղախում են, մինչև որ ստացըում է փիսրուն գանգուած. Սրանից յետոց պատրաստուած խմորը գնդում են, գրտնակով բարակ բանում, սա կուլում է կոլոր լոշ.—ապա այս լոշի վրաց դնում են հետ, մի նոր լոշ դնում վերան, կրկին հետ փռում, կրկին լոշ փռում, և ապա մի անգամ էլ հետ փռում, ճութեալով, Յետոց երկու կամ երեք կոտր անում, իւ- և լոշերը կլորում, ճութեալով. Յետոց երկու կամ երեք կոտր անում, բաքանչիւրի ծացրերը ոլորում, դնում խոհից վրաց, տափակացնում, բաքանչիւրի ծացրերը ոլորում, դնում խոհից վրաց, տափակացնում, երեսը պատառաքաղով նախշում, ձու քսում և թխում; Թոնրից հա- երեսին մեղր կամ շաքարաջուր են քսում:

Ձերով պիտք. — Պատրաստում սև պատ էր թուշը
ՔԱՐՄԵՐ, հետը՝ ձերով և շաքարով:
Կարօն. — Միքանի ֆունտ շաքար լուծելով եռացրած ջրի մէջ և
շարմաղով քամելուց յետոյ լցնում են կաթի մէջ և պանով շաղախում
ալիւրը՝ միքանի տասնեակ ձու, թթվամոր, աղ, պղպեղ և աղփա *)
աւելացնելով: Երբ խմորը թթվում է, գնդում են և բանում եռան-
կիւնաձեւ, քառակիւնի, քառակուսի և այ ձևերով, ապա խմորի երեսին
իւղ քսելով՝ փայտէ տիպով զանտպան նախշեր են անում և ապա ձու
քսում, խաշխաշ ցանում, պատրաստագորով ծակոտում դնում «տափր»-ի
(հացառ.) վրայ և խփում թունի կողին, թխում, թոնիցից հանելիս
մերո կամ շաքարաջուր են քսում երեսին:

Հայուայ. - Եւզը դաղում են, վերան սաղած ալլով լց-
նում, և երբ կարմրում է, մի քիչ էլ մեղք են աւելացնում և կրփին
խառնում, մինչև որ պնդում է: Ցետոց լցնում են փոքրիկ սկսութեղ-
ների մէջ, երեսը հարթում, գդալի ծայրով կամ պատառաքաղով զա-
շազան նշխեր անում, մի կտոր շաքար խրում մէջ տեղում և խա-
շաձեւ շամիչ շարում:

Առաջ ուստի հանդիպ, կոճից և զի-

խառնում, և երբ կարմրում է, մի գդալ էլ մեղք են ածում և մատուցանում:

Ծնեբակ.—Ծնեբակը ընտրում են, մաքրում, լուանում, խաշում, հանում ձգում իւղի մէջ և մի քանի հարած ձու լցնում վերան:

Կարկած, Դդումը, կարկած, դնում են կրակին, երբ քիչ խանձում է, կպչում են, ապա լուանում, կըտըրտում, կրկին լուանում, լցնում կաթսայի մէջ, մի քիչ ջուր ածում և եփում: Եթէ պասուակ՝ մանրած ընկոյզ, թթու հուն կամ դամբուլ աւելացնում, իսկ եթէ ուտիսուց՝ ջրի փոխարէն կաթ են ածում:

Զկուամածուն.—Հասած զիեռը ածում են ջրի մէջ, եփ տալիս, մաղով քամում, կորիզները և կեղեք դէն ածում. փուշի տնում—մի. քիչ ալիւր ջրի մէջ խփում—ածում զիեռաջրի վրայ, աղ աւելացնում. Ուտելիս՝ ծեծած սխտոր են աւելացնում իրենց բաժինների վրայ:

Ջլաճաւ.—Զուրբը եռացնում են, բրինձը հանգամ լուանում, ածում են ջրի մէջ, աղ ցկում (բրինձը ջրից 4 անգամ քիչ պիտի լինի) և թողնում եփ դալու. Վի ուրիշ կաթսայի մէջ ձէթ են ածում, սոխ ջարդում, և երբ կարմրում է, ածում են բրնձի վրայ, մի քիչ խառնում, կաթսայի բերանը ծածկում և թողնում բոլորովին եփ դալու. վերցնելիս ցկում են պղպեղ և կոտորած գինն:

Փրոք.—Առաւելապէս ուտում են, ծերունիները.

Եռացրած ջրի մէջ կոտորած սոխ և աղ են ածում, ալիւրը մաղում են մի սկուտեղի վրայ, մի քիչ սառը ջուր շաղ տալիս, ապա մատներով ալիւրը շաղախում, բրնձի մեծութեան գնտակիններ պատրաստում, ածում առաջին կաթսայի մէջ և խառնում:

Ուտիսին իւղ են աւելացնում, պասին՝ ձէթ, մանրած ընկոյզ: **Կոնչոլ.**—Իւղով կամ ձէթով սոխուած են անում, մի քիչ ջուր աւելացնում, մի քիչ հաց բրդում, միքանի ձու էլ հարում, ածում կաթսայի մէջ:

Պէննար.—Ձեռներին շորեր կապած քաղում են պէննարը, որ վէտի, յետոյ ընտրում են, մաքրում, դանակով կտրտում, խաշում, ջուրը քամում, աղ ցանում, իւղով կամ ձէթով տապակում: Ուտիսին ձու էլ են կոտրում վերան: Ունանք էլ սխտորը մածնի մէջ խառներով ածում են վերան:

Աւելուկ.—(միզուկ) հիւսում չորացնում են և պահում: Սրանից եփում են թթուաւ միզուկ, աղցան և աղն:

Թթուաւ միզուկ.—Աւելուկը լուանում և խաշում են, յետոյ քեաւկիրով հանում, դնում են խոնչի մէջ, աղ ցանում և ծհանով (թաթակիշ) ծեծում, մի քիչ թթու լաւաշ ձգում են աւելուկի ջրի մէջ, յետոյ ալու լաւաշը հանում, դնում են մի ամանի մէջ, ցուրտ ջուր ածում, տրորում, յետոյ ածում աւելուկի ջրի մէջ, ապա մի բուռ-

ալիւր մի քիչ ջրի մէջ տրորում, ածում են նոյն աւելուկի ջրի մէջ, թակած աւելուկը լցնում այս կաթսայի մէջ, թողնում եփ գալու. վերջը մի քիչ էլ ծեծած ընկոյզ լցնում:

Ուտելիս աւելացնում են ծեծած սխտոր:

Ախցան.—Ձէթով սոխուած են անում և խաշած ու ծհանով ծեծած աւելուկը լցնում վերան ապա տապակում. ուտելիս ծեծած սխտոր են աւելացնում:

Խաչիլ.—Ցորենը սաճու վրայ աղանձում են, փոխինդ դարձնում, յետոյ երկանքով աղում, ապա մաղում, մաղի մէջ մնացած խոշոր մասը ածում են ջրով լի կաթսայի մէջ, աղ ածում, եփում. երբ ջուրը քաշում է, մաղուած մանր փոխինձից մի քիչ էլ շաղ տալիս վերան, խառնում, վերցնում կրակից: Յետոյ թան կամ հարած չորաթան են ածում ամանի մէջ, խաշիլից ածում վերան, մէջ տեղում փոքրիկ փոս անում և հալած իւղ ածում, ուտում:

Կորկոփի խաչիլ.—Կորկոտը սանդում թակում են, փուռմ արեւել տակ չորացնում, քամուն տալիս, որ թեփը գնաց, մաքրուի: Ապա երկանքում աղում, մաղում, լցնում ջրով լի կաթսան, եփում, երբ ջուրը քաշում է՝ աղ են ցանում և վերցնում են կրակից: Վի քիչ ալիւր մաղում և շաղ տալիս կաթսայի մէջ, նորից եփ տալիս, մինչև որ նա պնդում է: Նորից վերցնում, ածում ափսէները, մէջ տեղ փոս անում, հալած իւղ ածում և ուտում:

Մոխտիս.—Կորկոտը մաղում են, ածում ջրով լի կաթսան, քիչ եփ տալիս, թթիսմորը տաք ջրում ճրմրտում, ածում կաթսայի մէջ, խառնում, յետոյ լցնում են մի ամանի մէջ, 3—4 օր պահում, որ թթուի: Ապա քիչ քիչ ածում են կաթսայի մէջ, մի քիչ տաք ջուր աւելացնում, կրկին եփում, հաց բրդում, մխտոր խառնում և ուտում:

Կարտոֆիլաւ նաւ.—Կարտոֆիլը խաշում են, երբ հովանում է, կպչում են, ճմրտում, ապա մի ուրիշ կաթսայի մէջ իւղ ածում, կոտորած սոխ աւելացնում, «սրղլէնուին» անում, յետոյ սառը կամ տաք ջուր ածում, և ճմած կարտոֆիլը լցնում մէջը, աղ և պղպեղ ձգում, գինձ կոտորում: Երբեմն էլ մի կամ միքանի ձու հարում, ածում են մէջը:

Եթէ պատուաչ է, իւղի փոխարէն ձէթ են գործածում:

Ղուրղուդալի նաւ.—Սիմինդը երկանքով խոշոր աղում են, տեփում, թեփը հանում (ածում են մի սկուտեղի մէջ, մի կողմից բոնած միւս կողմը վեր են շարժում, սիմինտը վեր է թուչում, այս միջոցին բարակ փշում են, թեփը թափւում է դուրս, իսկ սիմինդը՝ սկուտեղի մէջ): Ապա մաղում են, մաղի սէջ մնացած խոշոր մասերը լցնում ջրով լի կաթսայի մէջ, եփում, յետոյ վերցնում են կրակից, մաղուած սիմինդը լցնում մէջը և խառնում, ապա նորից կրակին դնում, աղ

ածում եփում, մինչև որ թանձրանում է: Այս ժամանակ լցնում են ափսէները, մէջ տեղերը փոս անում, հալած իւղ լցնում և ուտում:

Լոբի ճառ.—Լոբին նախ լրտանում են, յետոյ ածում կաթսան, ջուր լցնում և դնում կրակին եփելու, երբ մի քիչ կակղում է, աղ են ցանում, երբ եփում է, քամում են, ձեռքով լրին ճմլում, վերան կտրտած սոխ, ընկոյզ և մի քիչ թթու լաւաշ ձգում, քամած ջուրը կրկին մէջն ածում, դնում կրակին կրկին եփում, վերջը պղպեղ և մի քիչ կտրտուած գինն ցանում և վերցնում:

Լոբի-Եախնի.—Լոբին եփելուց յետոյ քամում են, հատիկները վերցնում, վերան աղ, սոխ, պղպեղ ցանում, ուտում:

Լոբու տոլիա.—Լոբին երկանքով աղում են, լուանում, ջուրը քամում, ապա հում կարտոֆիլը կպչում են, լուանում, մանր կտորում, և խառնում լոբու հետ, աւելացնելով կոտորած սոխ, աղ, պղպեղ և գինն: Ապա կաղամբի տերևների մէջ փաթաթում, դարսում կաթսայի մէջ, մի քիչ ջուր ածում և եփում:

Բորանի.—Կանանչ լոբին ծայրերից կտրում են, յետոյ մանր կտորում, լցնում կաթսան, ջուր աւելացնում և դնում եփուելու: Մի քիչ յետոյ ձգում են՝ աղ, պղպեղ, կոտորած սոխ: Ապա վերցնում, փրաւ քամով քամում են, մի քիչ իւղ ածում կաթսայի մէջ, կոտորած սոխ լցնում, և երբ սոխը կարմրում է՝ լցնում են լոբին և կաթսայի բերանը փակում: Յետոյ միքանի ձու կոտրատում են մի ամանի մէջ, հարում, և ածում լոբու երեսին, նորից կաթսան ծածկում և թողնում, որ լաւ եփուի: Ուտելիս մի քիչ թակած սխտոր ածում են մածունի մէջ, լաւ խառնում, և մի մի գդալ աւելացնելով լոբու վրայ ուտում:

Փլաւ.—Զուրը եւացնում են, սրա $\frac{1}{3}$ -ի չափ բրինձ լուանում, ածում են ջրի մէջ, դնում եփի, ապա աղ ցանում, երբ բրինձը հատ հատ որոշում է, փլաւ-քամով քամում են, կաթսան լուանում, մի քիչ արդար իւղ ածում, կամ ձու հարում ածում կամ լաւաշ ձգում, ապա քամած բրինձը լցնում վերան, մի քիչ ցուրտ ջուր շաղ տալիս, պղպեղ ցանում և խուփը ծածկում, դնում մարմանդ կրակի վրայ, որ «դամբ» գայ: յետոյ մի քիչ էլ հալած իւղ շաղ տալիս վերան, ու տանում ուտում:

Չամչով փլաւ.—Չամիչը մաքրում, խուրմի, արիւկի հետ միխասին լցնում են հալած իւղի մէջ, մի քիչ կարմրացնում և ածում են փլաւի վրայ: Այսպիսի փլաւի մէջ ձու կամ լաւաշ դրած չեն լինում:

Թթուաւ փլաւ.—Հունը կորիզից աղատելով չորացնում են, իւղի մէջ կարմրացնում, լցնում փլաւի վրայ:

Հաւով փլաւ.—Սոխ, չամիչ, բրինձ, հաւի կտորած քարձիկը իւղում տապակում են, մի քիչ աղ, պղպեղ ցանում, մաքրած հաւի-

կուրծքը ճղում, լցնում են մէջը, կարում, ասեղով ծակակոտում փորտիքը, ջրով լի կաթսայի մէջ ձգում եփում, և յետոյ հանում, վլաւի վրայ դնում:

Ոմանք էլ չամիչի փոխարէն տիրու են ածում (չորացրած, անկորիզ հուն):

Քառովի փլաւ.—Իւղը հալում, կոտորած սոխ ածում, կարմրացնում, երեք չափ ցուրտ ջուր ածում, եւացնում, մի չափ բրինձ լցնում, աղ ցանում, մի քիչ խառնում, յետոյ վերցնում, դնում մի կողմ, որ դամբ գայ:

Կ ա թ ն ե ղ է ն ն ե ր.

Թան.—Խնոցին հարելուց և կարագը վերցնելուց յետոյ թանը ածում են մի տոպրակ, բերանը պինդ կապում, դնում մի տաշտի մէջ մի քարի տակ: Ջրային մասը հետզհետէ տոպրակից դուրս է թորում և մնում է պինդ մասը, այս ժամանակ միքանի ձու են կոտրում սրա վրայ, աղ ցանում, և փոքրիկ գնդեր արած դնում արևի տակ չորանալու: Այսպէս չորացած պահում են այս «չորաթանները» մինչև մի տարի:

Չորաթանով եփում են հըռածած, քիլինկէօշ, թանաւ.

Հրուածածը.—Եփելիս չորաթանը ձգում են մի գաւաթի մէջ, ջուր ածում, հարում և ջուրը լցնում մի կաթսայի մէջ, յետոյ կրկին ջուր աւելացնում, կրկին հարում, լցնում կաթսան, ապա դնում կրակին, մի քիչ կորկոտ կամ բրինձ աւելացնում, մի բուռ ալիւր էլ հարում, «փուշի» անում, ածում են, մի ձու էլ կոտրում, խառնում և թողնում եպ գալու: Վերցնելիս կոտորած գաղդ են աւելացնում:

Քիլեհօշ.—Չորաթանը ջրով հարում, ածում են կաթսան, դնում կրակին և շերեփով խառնում: Երբ եփը գալիս է՝ կոտորած հաց են լցնում, մի քիչ եփելուց յետոյ վերցնում, ածում ամանները: Թակած սխտոր, մի մի գդալ հալած իւղ աւելացնում, և ուտում:

Կարնաւ-ճառ.—Մի չափ կաթ, երկու չափ ջուր խառնում, եփ են տալիս, մի չափ մաքրած և երեք անգամ լուացած բրինձ ածում, մի քիչ էլ աղ ցանում և թողնում, որ եփ գայ:

Մ ս ե ղ է ն ն ե ր

Բուղլամի բեապասի. —Իւղու միւսը կտրտում, ածում են կաթսայի մէջ, կտրտուած սոխ, աղ, պղպեղս ածում, կաթսայի բերանը ծածկում, դնում թոնիրը կորկոտի կաթսայի վրայ: Սովորաբար եփում են կորկոտի հետ:

Խաւու.—Միսը կտորում են, ուանում և ածում ջրով լի մի կաթսայ,

եփում, քեափը քաշում, յետոյ միսը դուրս տալիս, ջուրը քամում, որպէս զի կեղտոտ մասերը տակը մնայ, ապա ջրի երեսից խոզը քաշում, լցնում կաթսան, կրտորած աղ աւելացնում, քիչ յետոյ մասերը ածում մէջը (շատ անգամ ոսկոռներ էլ են ձգում, որ հիւթը դուրս տայ, յետոյ այս միջոցին դուրս ցկում.), ջուրը նորից քամելով ածում մսի վրայ, թողնում մի քիչ եփ գալու. ապա աղած բրինձ են ածում կաթսան և խառնում: Յետոյ առանձնապէս չորացրած դամբուկ կամ շոր կամ թթու լաւաշ ճմլում, եփում են և լցնում խաշի վրայ, որ փոքր ինչ թթուաշ լինի: Երբ եփում սրծնում է, միքանի ձու կոտորում են մի ամանի մէջ, գդալով հարում, լցնում խաշուի վրայ և անմիջապէս կրակից վերցնում:

Մաս ժիլա.—Միսը կտորում, ածում են ջրով լի կաթսայի մէջ և դնում կրակին եփում, քեափը քաշում, աղ ձգում, կրկին քեափը քաշում, կոտորած սոխ ածում, մաքրած և լուացած բրինձ աւելացնում և պղպեղ ցանում:

Ոչսարի խառ կամ քեալլա-իաչա.—Ոչսարի ոտները, գլուխը խանձում, քերում, և մի քանի անգամ լուանում են: Ապա մաքրում են ստամոքսը (թափան), լուանում, կտրատում և այս բոլորը լցնում են ջրով լի կաթսայի մէջ. երբեմն էլ միքանի կտոր դմակ աւելացնում և թողնում եփ գալու. Ապա աղ են աւելացնում: Ուտելուց առաջ գլուխը կոտրատում են և ուղեղը առանձին մատուցանում:

Տվարի խառ.—Տաւարի պճեղները կրակի վրայ բռնած խանձում են, քերում, երեք անգամ տաք և մի անգամ ցուրտ ջրով լուանում, ապա կտորում, ձգում ջրով լի կաթսայի մէջ և դնում կրակին երկար եփում, աղ ցանում:

Ուտելիս ծեծած միսուր են աւելացնում:

Խուխուփ.—Եփում են սովորաբար հաւի կամ ոչսարի մսով: Միսը կտրտում են, եթէ ոչսարի է՝ մի քիչ դմակ, եթէ հաւի՝ մի քիչ իւղ ցկում, խուփը ծածկում, թողնում են, որ մի քիչ կարմրի. յետոյ կոտրտած սոխ, աղ և պղպեղ են ածում, թողնում աւելի կարմբելու, ապա մի քիչ տաք ջուր աւելացնում և մաքրած նուան հատիկներ լցնում: Խուփը ծածկում են և թողնում եփուելու:

Կուրկուտ.—Մի շերտ միս, մի շերտ կորկուտ են լցնում կաթսան, աղ ցանում, այսպէս շարունակում են, մինչև որ կաթսայի $\frac{2}{3}$ մասը լցւում է, ապա ջուր են ածում, կաթսայի բերանը ծածկում, լաւ վառուած թոնրի մէջ ջուր շաղ տալիս, որ կրակը անցնի, կսկարաչ դնում, ու կորկուտի կաթսան թոկերով կապած իջեցնում թոնրի մէջ, դնում կասկարի վրայ: Մրա վրայ դնում են երկրորդ կաթսան, ապա երրորդը, վերջինի վրայ մի քար են դնում, որպէս զի շոգուց կաթսայի խուփը չբարձրանայ: Ապա տախտակներով ծածկում են թոնրը

և ցեխով ծեփում, այնպէս որ ոչ մի տեղից շոգին չի դուրս գալիս, ծածկում են նաև սնկուածքը (սիւնգու):

Եթէ կորկուտ քիչ է լինում, կաթսայի խփի շուրջը պատում են խմորով և դնում կրակի վրայ եփ տալիս:

Քիւրա.—Նոր մորթած տաք մսից կակուղ տեղը դնում են քիւթի-քարի վրայ, որ մի տափարակ, ողորկ քար է, և «քիւթիթիթաքի»-ով թակում: Սա փայտէ մուրճ է. զլիսին մեխեր խփած, որ լաւ թակի: Մի քիչ յետոյ աւելացնում են մի քիչ բրինձ, միքանի ձու, մի քիչ արդար իւղ, պղպեղ, աղ, դինձ և շարունակում թակել, մինչև որ միսը փրփրում է: Յետոյ մի կաթսայով ջուր են եռացնում, շերեփով մի քիչ տաք ջուր վերցնում, մի բուռ միս վերցնում, դնում շերեփի վրայ, կլորացնում և ձգում կաթսայի մէջ: Այսպէս բոլոր մսից կոլողակներ են պատրաստում, թողնում եփ գայ: Երբեմն էլ մի ձուի դեղնուց են դնում կոլողակի մէջ, որ հետը եփուի: Երբ քիւթէն եփում է, հանում են և ջրի մէջ մի քիչ բրինձ ածում, աղ և պղպեղ աւելացնում, եփում և քիւթի հետ միասին ուտում:

Քիրս.—Ոչսարի իւղալի միսը ծեծում են սամբուրով, ինչպէս տոլմի համար, միքանի գլուխ ծեծած սոխ, կինձ, ատփա, կորիզլ հանած հուն, մի երկու ձուի գեղնուց աւելացնում, ճմլում, իւղի մէջ բովում այնքան, որ միսը մերօւի՝ առանց կարմրելու: Ապա ջրով, առանց թթվամորի, հունցած խմորը զնդում, բարակ բանում, մանր կտրտում, պատրաստած միսը ածում վերան, խմորի ծայրերը վրայ բռնում, եզրերը իրար կպցնում, ձգում եռացրած ջրի մէջ, եփում, հանում ջրից և կաթկամ իւղ աւելացնելով վերան՝ ուտում:

Բասրրմա.—Միսը կտրտում, սոխ, աղ, պղպեղ լցնում, երբեմն էլ նուռ ճմլում, ածում են պուտուկների մէջ, բերանների «սիրեկում»—անասունների ստամոքսը մաքրում, աղում և չորացնում են, ապա դնում պուտուկների բերանին և պինդ կապում: Եթէ մտադիր են երկար պահելու, պուտուկը բերինքսի վացը են դնում: Ուտելիս խորովում, կամ եփում են: Այսպիսով միար թարմ է մնում:

Խախաչ.—Փափուկ մսերը բարակ և երկար ձեռվ կտրտում են, և արելի տակ կախ տալիս, չորացնում, և ուտում:

Ոմանք էլ այս իբր միս գործ են ածում զանազան կերակրների մէջ:

Զ կ ն ե ղ է ն.

Չուկ. Զկան փորը մաքրում են, լուանում, եռացրած ջրի մէջ աղ լցնում, ապա ձուկը ձգում մէջու, եփում: Ուտելիս քացախ են լըցնում մեռան:

Ձկաւ խառն. Զուկը եփում են, ջրին իւղ, ձու, քացախ աւելացնում, ձուկը առանձին, ջուրը առանձին ուտում:

Ձկերի, ինչպէս և խորովածի հետ իբր գուզոիչ համեմունք գործ են ածում հետեւել տեսակի շրաբներ.

Նառ-շարաբ. — Թթու նորի հատիկները կեղեկից մաքրելով՝ լցնում են մի կաթսացի մէջ, բերանը ամուր ծածկում, դնում կրակին, եռտալիս, ապա լցնում մի տոպրակի մէջ, քամում, և ծորած հիւթը կըր կին եռացնում, մինչեւ թանձրանալը:

Հիմն շարաբ. Պատրաստում են նոյն ձեռվ, միայն մի քիչ ջուր են աւելացնում առաջին անգամ եփ տալիս:

Դորաբբա. (Փուռի՝ կիսահաս խաղողի շարաբ). — Կիսահասուն խաղողը ճմում են, հիւթը եռացնում մինչեւ փոքր ինչ թանձրանալը: Գործ են ածում եփած և խորոված ձկնեղէնի հետ և ջրալի կերակրի մէջ, քացախի փոխարէն:

ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԸԹՈՂՋՈՒԹԻՒՆ

Գանձակի գաւառին առանձնայատուկ են ջերմը և իլեարասին (Bouton d'Alep, ГОДОВИКЪ). — Արիլֆեղալի^{*)} ասելով ջերմը դեռ XIII. դարում այստեղ սաստիկ տարածուած է եղել, և ինչպէս երևում է, հետզետէ թույանում է: Իլ-եարասու սպին կրում է գրեթէ ամէն մի գանձակեցի և կան զերդաստաններ, որոնք չորս հինգ սերունդ յաջորդաբար զբաղուել են այդ հիւանդութեան բժշկութեամբ:

Քաղաքում կան եօթը բժիշկ, բայց ոչ մի հիւանդանոց և կամ բուժաբան: Ամբողջ գաւառում միմիայն Զեղամ և Գետաբէկ գիւղերում կան, գիւղական բուժաբաններ, առաջինը երկու, իսկ երկրորդը միայն մի բժշկով: Թէ որպիսի մեծ ծառայութիւն են մատուցանում ախտիսի բուժաբանները՝ երեսում է նրանից, որ 1896 թուին՝ զիմել են Զեղամի բուժաբանը 5340 հիւանդ, 1897-ին 4114, իսկ 1898-ին՝ 9250.

Գիւղացիները զրկուած լինելով բժշկի դիմելու հնարաւո-

*) D. de Montpréoux. Voyage autour du Caucase. IV. Եր. 11.

րութիւնից, դիմում են գիւղական բժիշկ-կանանց, սափրիչներին, շրջիկ մոլլաների և մանաւանդ զրբացների: Գիւղական կին-բժիշկները դիխաւորապէս տատմէրներն են լինում, սրանք սովորաբար սերնդից սերունդ աւանդում են իրենց արուեստը և անձնական փորձառութեամբ գտած միջոցները: Սրանք շատ սիրալիր են դէպի հիւանդները, նստում են մօտերը երկար զրից անուն, քաջալերում, յուսադրում: Թէև միքանի տեղական, վաղուց գոյութիւն ունեցող հիւանդութիւններ սրանք կարողանում են բժշկել, սակայն շատ անգամ էլ «ունքը շինելու տեղ» աչքը են հանում»: Այսպիսի անյաջող դէպերը նրանց գարկը չեն ձգում, որովհետև ինչպէս իրենք պնդում են և ժողովուրդն էլ հաւատում՝ առողջանալը կամ մեռնելը ճակատագրից է կախուած: Սրանցից ոմանք նաև «պորտը վեր քաղել» զիտեն, — ուս ոչ ազ ինչ է՝ եթէ ոչ մասսաժ իւր նախնական դրութեան մէջ: Այսպիսի կին-բժիշկներից նշանաւոր է զետաշէնցի Թաքուն-բերին, որ ոչ միայն իրենց, այլ և շրջակայ գիւղերում բժշկութիւն, տատմերութիւն և նոյն իսկ մասսաժ է անում:

Գիւղական վիրաբուժները — սնդչիք, — որ նոյնպէս յաջորդում են որդուց որդի՝ բաւական հմտութեամբ ուղղում են կոտրուած ուկրները, զանազան եակուներ ձգում և տախտակներ դնելով՝ փաթաթում, առողջացնում: Սրանցից նշանաւոր է զետաշէնցի Սնդչի Յակոբը, որի եօթը սերունդը վիրաբոյժ է եղել: Սրան մի մի անգամ նոյն իսկ Գանձակ են հրաւիրում կոտրուածներն ուղղելու:

Ափրիչներն առաւելապէս ատամնաբուժութեամբ են պարապում. սովորաբար թելով կապում են ատամը և յանկարծքացում և կամ աւելի հմտութեամբ գործ են ածում ահազին ունելիներ: Հանձարեղ սափրիչները նշանաւած երիտասարդի ատամը քաշելիս տանում նրա զլուխը նշանածի ծնկին են դնում, որ նրանով յափշտակուած՝ զզայ ցաւը: Սափրիչները բժշկութեամբ էլ են պարապում և այս ժամանակ գրեթէ միայն մի միջոց՝ արիւնառութիւն՝ գործ դնում: Նրանք արիւն են առնում կամ ածելիով ծակելով ուսը, կամ տղրուկ դնելով ոտներին և կամ պուլիկ (ճահկա) ամը սցնելով մէջքին:

Պալլաները և գրքացները առաւելապէս համայնքով և «գիր անելով» են բժշկութիւն անում:

Սակայն և այսպէս՝ գիւղացիները բժշկուելու համար ամենից աւելի դիմում են սրբերին, ուխտ գնալով զանազան ուխտատեղիներ։ Հաւատալով, որ հիւանդութիւնը տալիս է մի որևէ սուրբ, որին պատշաճ պաշտօնը չէ մատուցուած, հիւանդները աշխատում են գուշակել, թէ այդ սուրբը ո՞րը պիտի լինի և յատկապէս նրան ուխտ գնալ, որովհետև միւս սրբերը ի պատիւ այդ սրբի, չեն բժշկի նրա տուած պատիժ — հիւանդութիւնը *):

Գրեթէ ամէն գերդաստան մէջ պառաւները և ծերունի-ները գիտեն միքանի սովորական հիւանդութիւնների բժշկութեան միջոցները, և իրենք գործադրում են, և երբ նկատում են, որ իրենց միջոցները չեն օգնում, նոր դիմում են հեքիմներին, սափրիչներին, մոլլաներին և երբ սրանք էլ ոչինչ չեն կարողանում անել և հիւանդը արդէն անբուժելի է դառնում՝ նոր տանում են բժշկի մօտ:

Ոչ մի նախազգուշական միջոցի չեն դիմում, նոյն իսկ երեխաներից շատ շատերը ծաղկից չեն պատուաստում, այսպէս՝ ամբողջ գաւռում, (առանց քաղաքի) տարեկան միջին թուով միմիայն 750, իսկ քաղաքում՝ 550 երեխաներ ^{**)} են պատուաստում։ Բացի սրանից նոյն իսկ վարակիչ հիւանդութիւնների ժամանակ այցելում են հիւանդներին, որոնք տան մէջ էլ առանձնացրած չեն լինում։ Հիւանդի բոլոր քմահաճութիւնները սրբութեամբ կատարում են, տալիս են ուտելու, խմելու ինչ որ էլ ցանկանում է։ Կնջեցեալների շորերը առանց ախտահանութեան ենթարկելու դորձածում են, հիւանդութիւնը մինչև չի ծանրանում, ուշադրութիւն չեն դարձնում և այս։

Այս բոլորի թերի թողածը զալիս է լրացնելու զազրակի մնօտիքապաշտութիւնը. այսպէս օրինակ, երբ միևնույն տահից,

*) Գուշակութեան ձևերը տես Հաւատքի ուսուցչին:

**) Обзоръ Елисаветпольской губерніи за 1894—98 гг. (Приложение къ всеподданѣйшему отчету).

անշուշտ ախտահանական միջոցների չղթմելու պատճառով, միքանի մարդիկ իրար ետևից մեռնում են, կարծում են, թէ առաջին մեռնողը «կենդանի» է թաղուել և նա դալիս տանում է միւսներին: Այսպիսի դէպքերում տեսէք թէ ինչ են անում:

Գետաշէն զիւզում Մարկոսենց Սուլթանը մեռնում է. լո-
ղացնելիս տեսնում են, որ տաք է, խոկոյն «Հասկանում են, որ
չարը սիրտն է մտել բնակուել»: Տանում թագում են: Միքանի
օրից Հարսի եղբայր Սահակը, որ 40 տարեկան կը լինէր, երա-
դումը տեսնում է Սուլթանին, որ իրեն ասել է, թէ «Եկել եմ
քեզ տանեմ»: Սահակը հիւանդանում է, և միքանի օր շա-
բունակ երազում տեսնում Սուլթանին, որ կրկնում էր միւ-
նոյն խօսքը: Ուլժ օրից վախճանում է Սահակը: Հետևեալ
օրը Սահակի բոլորովին առողջ քոյր Մհարը, 30 տարեկան կին,
երազում տեսնում է թէ Սուլթանը եկել է և կամենում է իրեն
էլ տանել: Հետևեալ օրը նա էլ մեռնում է: Մի երկու օրից
մեռնում է նաև մի երեք տարեկան տղայ: Միւնոյն ժամա-
նակ հիւանդանում են Սուլթանի ամուսինը, տեղբերը, եղբօր
աղջկները: Կամենալով հաստատապէս իմանալ, թէ արդեօք
այդքան հոգի Սուլթանի պատճառով մեռան և թէ նա «կեն-
դանի» է, թէ ոչ, մի ձի են տանում Սուլթանի գերեզմանի
վերայ, ննջեցեալի սրտին համապատասխանող տեղում մի թաշ-
կինակ փռում, վերան գարի ածում և ձին մօտեցնում ըր ուտի:
Ձին բոլորովին չի ուտում, փռացնում է, և կամենում է հե-
ռանալ: Արանից հասկանում են, որ «Սուլթանը կենդանի է,
այդքան մեռնողներին նա է տարել»: Ուտի գիշերանց եր-
կու տղամարդ և ընդհանրապէս ննջեցեալ և մասնառապէս
Սուլթանին լողացնող Թաքուն-այանը գնում են, ննջեցեալի
գերեզմանը քանդում: Երբ մօտենում են դիակին, գարշելի հո-
տից զգուած երկու տղամարդը թողնում են կեռանում, իսկ
Թաքուն-այան մտնում է գերեզմանի մէջ, ճղում Սուլթանի
գլուքքը, սիրտը հանում, և մի կտոր կտրում, վերցնում: Յե-
տոյ զուրս է գալիս գերեզմանից, կանչում է տղամարդկանց,
ցախ և նաւթ ածում Սուլթանի սրտի վրայ և կրակ տալիս:

Մի քիչ յետոյ գերեզմանը լցնում են հողով, և սրտի կտորն առաջ գաղտագողի վերադառնում, բերում սիրտը ձգում ջրի մէջ, խառնում և տալիս հիւանդներին խմելու: Թաքուն-այան, որ ինքը ինձ պատմեց այս՝ հաւատացնում էր, թէ անմիջապէս բոլոր հիւանդներն առողջացան, և աւելացրեց, թէ սրտի այդ կտորը չորացրել պահել են, այժմ երբ վախից հիւանդանում են, մի քիչ փոշիացնում, լցնում են ջրի մէջ, տալիս խմելու, և իբր անմիջապէս յաւանում են:

Մի այսպիսի գէպքի մասին պատմեցին ինձ նաև Փիփ գիւղում, ուր Թաքուն-այսնի գերը կատարել էր Տէր Միքայէլը: Միայն սա ամբողջ սիրտը հանել, գերեզմանը ծածկել, վերան կրակ արել, սիրտը, բացի մի փոքրիկ կտորից, վառել և մոխրը փչել, քամուն էր տուել: Յետոյ սրտից աւելացած մասը թաղել էին օգանի մի անկիւնում, իսոր մի նուիրական բան:

Գետաշէնում Նուասարդանց Անալի միակ միամիայ որդին
մեռնում է: Մայրը հիւանդանում է և շարունակ կրկնում, թէ
երեխան դիշերները գալիս է և ուզում է իրեն տանել: Գնում
են բաց անում գերեզմանը, ճղում սիրտը և վառում երեխալին:
Բայց մայրը գարձեալ չի հանգստանում, և այժմս էլ ասում է
թէ մանկան ճկութ մատն է իրեն երեռում և ասում. «Եկել
եմ քեզ տանեմ»: Կրկին գնում են, բաց անում գերեզմանը, մա-
զում երեխալի աճիւնը և միջից զտնում ճկութը, վառում, և
նորից ծածկում: Եւ միայն այժմ մայրը հանգստանում է և
լաւանում:

Բանանցեցի հարիւրամեայ Մուսունց Մնացականը ասում է, թէ մօտ երեսուն տարի առաջ ալդպիսի մեռելին հանում էին գերեզմանից, միքանի անգամ հրացան արձակում վերան, քաշ տալիս այս ու այն կոյժ և նորիդ թաղում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵԼԵՐ.

Ի-Եարասի. — Այս միենյան հիւանդութիւնը պատահում է չալեպում, Բաղդադում, Թէքրանում, Սպահանում և յայտնի է Bouton d'Alep, Հայկա-օբրան, լիլ-օբրան անուններով։ Սա վարակիչ է, և

միւնոցն անձին երկրորդ անգամ չի կարող պատահիլ, Երևում է մեծ մասամբ 2—12 տարեկանների և առաւելապէս իգական սեռի, այն էլ երեսի վրայ և առհասարակ բաց տեղերում՝ ձեռներին, ականջին, ոտներին (գիւղացիները մեծ մասամբ բորիկ են լինում): Տեղացիները դրան երկու տեսակի են բաժանում՝ էգ և արու։ Կդը աւելի արագ է տարածւում և աւելի արիւնու է լինում, իսկ արուն՝ աւելի զանդաղ կերպով է տարածւում և պակաս արիւնու է։ Երկու տեսակն էլ փոքրիկ կարմրախառն կապտագոյն բշտիկներով են սկառում, հետզհետէ տարածւում, չետոյ մեծ վէրք դառնում և թարախակալում։ Մի տարուց յետոց լաւանում է, միայն սպիրն մնում է անհետ *),

Այս վերքը տեղական միջոցներով բժշկում են Ենգիբարեան գերդաստանը երեք-չորս սերնդից ի վեր: Խնձ շատ դժուարութեամբ յաջողութեամբ իմանալ այս միջոցը, որ այդ գերդաստանը մի դարից աւելի իր գաղտնիք պահում է և միայն ինքը գործադրում: Այս միջոցը հետեւայն է:

ՍՊ մսխալ սպիտակ և դեղին, մանրացրած մկնդեղ (Arsenic), 15 մսխալ ձէթ, 10 մսխալ ազծի ճրագու և 5 մսխալ մեղրամում միամին խառնում են և եփում: Յետոյ հովացնում, քսում կտաել վրայ և գնում վէրքին՝ նախապէս սապոնի քարաջրի (**): մէջ թաթախած բամբակը կէս ժամ վէրքի վրայ պահեռուց լետու:

Օրը մի անգամ այս գեղը փոխելով շարունակում են երեք կամ-
չորս օր, երբ վերքը ուռզում է և շուրջը սպիտակում։ Այս ժամանակ
տիստկուռ խոտը սանդի մէջ ծեծում են, հիւմիթ քամում, մի քիչ ա-
լիւր աւելացնելով շաղում և ապա այս խմորը օրեկան երեք անգամ
գնում վերքի փրայ, իւրաքանչիւր անգամին նախապէս բարեխառն
ջրով լուանալուց յետոյ; Իսկ եթէ տիստկուռ խոտը չեն կարգանում
գտնել, մաճնով լուանենում են.

ԶԵՐՄ.—Սառը՝ աղբիւրներում լրջանում են; Լողանալիս չանկարծ սառն ջուր են ածում վերաները:

Ախորժակը բանալու համար չորացրած հունը բրնձով շորուաց են անում և ուտեղնում:

Ըկանչացաւ. Մի երկու կաթ օղի են կաթեցնում ականջի մէջ

*) Годовикъ или церсицкая болѣнь въ Елисаветополѣ. Скорова. Въ Сбор. Кавк. Мед. Общ. 1868 г. *Часть* Прот. Кав. Мед. Об. V. стр. 360. IV. стр. 198.

**) Սապօնի քարածութը, որ գործ են ածում սապօն եփեխս, պատրաստում են աշխատ։ մանրացնում են սապոնաբարը և խառնում կէս ֆունտ կրի հետ, լցնում քամիչի մէջ և ջուր ածում վերան։ Քամիչից հոսած ջուրը կազմում է սապօնի քարածութը:

և խորոված սոխի միջուկը դնում ականջափողի մէջ, բամբակով ծածկում ականջը և միքանի րոպէտ այսպէս պահում:

Այրուելուց յառաջացած վէրքը բուժելու համար ծեծած հում կարտովիլ են դնում վերան. ապա բրինձը աղում են, բովում և ձէթի մէջ թաթախուած շորի վերայ ցանելով դնում վէրքի վրայ:

Մեղրամուը ձէթով եփում և դնում են վէրքի վրայ:

Աչքացաւ. Կնոջ կաթը բամբակի վերայ կաթեցնելով դնում են աչքերին: Զգուշանում են թթուեղէններից:

Օղիով լուանում են աչքերը, ցուրտ ջուր են սրսկում: Արիւն են առնում ցաւող աչքի ներքեկի կոպից կամ ծոճրակից:

Առամբացաւ. Կինամոն, մեխակ, պղպեղ միասին խառնում, ծեծում, քացախոտ բամբակի վրայ ցանում և դնում ցաւող ատամին:

Մի քիչ մեխակ եփում են և ջրով բերանը ողողում:

Դժում են և ծուխը բերանում պահում:

Երեցողութիւն. Յետ կացրցանելու համար հարբած միջոցին նրա մէզը խառնում են զինու հետ և խմացնում, որից զգուելով՝ դադարում են խմելուց:

Բորոտուքիւնը. բուժելու համար փուշտանի կանանչի արմատները թակում, եփում և այս ջրով լողացնում են հիւանդին:

Գլխացաւ. Տաք ջրով լուանում են զլուխը և փաթաթելով աշխատում քրտնցնել:

Գլխի ոչիլը կտրելու համար ձիթապտղի իւղ են քսում զլսին. և մի օրից լուանում:

Գլխի պատառուածքը բուժելու համար նախ լուանում են և վերան մեղը դնում. ապա կաթով եփում են սապոնը և մի շորի վրայ քաշած դնում պատառուածի վրայ:

Գորտնուկ. Լուսնի նորին (նոր լուսնին) ձեռքը թաց են անում, գորտնուկի վրայ աղ ցանում, պարզում դէպի լուսինն ասելով.

Լուսինը նոր,

Գորտնուկը չոր:

Եւ ապա սև էշի լիզել տալիս գորտնուկի վրայի աղը,

Թոյնի դէմ. Թան և մածուն են ուտում:

Լուծելու դէմ. Վառեկի մսով շորուայ են ուտում:

Մուգ թէց խմում: Թթու շորուայ ուտում:

Ծծի ուռոյցք. Կովի կաթի մէջ եփում են ծեծած կթաւատ կամ գարու ալիւր և շորի վրայ քաշելով դնում ծծին. Երբ ուռոյցքը մի տեղ է հաւաքւում, բաքմազով մի քիչ ալիւր են շաղախում, մի քիչ էլ մոխիր ցանում և շորի վրայ քաշած դնում ուռած տեղը, որպէտ զի ծակի և շարաւը հոսէ:

Թթխմորի վրայ մի քիչ քացախ են ածում և դնում ուռոյցքի վրայ:

Կողեացաւը բուժելու համար տաքացրած աղիս են դնում կողքին: Կորեկ են բովում, լցնում մի պարկի մէջ և դնում կողքին:

Կտրուած տեղի արխենհոսուքիւնը դադարեցնելու համար մեղը են դնում վերան:

Հազ. Խննձորի մէջ մի քիչ խունդ են դնում, խորովում, ուտում: Թթուը կաթով եփում և ուտում են:

Ոսպով շորուայ, փիփերտ, ալիւրից պատրաստած կերակուր են ուտեցնում:

Աւելուկի սերմից պատրաստած թէց են խմացնում:

Հարբուխ. Խնչում են մի շորի մէջ, փաթաթում և ձգում փողոց. ով վերցնի՝ նրան կանցնի հարբուխը:

Ձեռքի նախնեոց. Մեղրամում, ձէթ և մի քիչ այծի ճարպ միասին եփում են և քսում ձեռներին:

Մազերը երկարացնելու համար, Եաւշան աւելը եփում, այդ ջրով լուանում են զլինները. Մսի ճիլ են ուտում: Համբարձմանը ցող են հաւաքում և դրանով լուանում զլուխները:

Մազերը բափուելու դէմ. Կանաչք ուրիշ դիւղ գնալիս, իրենց գետից մի քար են տանում իրենց հետ և առաջին անգամ լողանալիս այդ քարը ձգում ջրի մէջ, որպէս զի մազերը չթափուին:

Մատնառւեչ. Մածնի մէջ մի քիչ ալիւր են ածում, տաքացնում, դնում մատնշունչի վրայ:

Մեզը կապուելիս. Բուրդը տաք ջրում թռչում դնում են փորին, իսկ սեռական անդամը՝ դող կաթի մէջ:

Մեղուի խայրածի վրայ մածուն են քսում, որ լաւանայ:

Մկնատամ. Մի թէցի գդալ փոշիացած ծծումբ կերակրի մէջ խառնելով ուտում են երեք շաբաթ շարունակ:

Մողոնոր—(ՎԵՍՈՒՔԱ). Սառը ջրով լողացնում են:

Մրսելուց. Առողջանալու համար ոտները տաք ջուրն են դնում, որ քրտնին:

Վերմակի տակ մի ամանով սառն ջուր են դնում և կիզացրած գարերը մէջը ձգում. բարձրացած գոլորշիները քրտնեցնում են հիւանդին:

Սառուց են ուտեցնում:

Ջան կծած բուժելու համար նախ կծող շան մազն են դնում վէրքի վերայ, ապա ծեծած լրբին իւղով եփում են և շորի վերայ քաշելով զնում վէրքին: Յաճախ լուանում են:

Տղամար կնոջ կարն աւելացնելու համար կարմրախայտ ձուկն անը եփում են և օւրը խմացնում կնոջը:

Օշօշ ծաղիկը եփում են և ջուրը խմացնում տղամօրը:
Յթի տարած. Տաքացրած աղ են կապում ոտներին և շաղախած
հինայ դնում:

Փսխելու դեմ, Թթվու դրուած տանձ և խնձոր են ուտում:
Փորացաւ. Գինին տաքացնում են և մի քիչ պղպեղ ածում մէջը
ու խմում:


Պորտը «քաշում» են—մասսաժ են անում:
Ալրի թէ . և կորեկը բովում են և պարկի մէջ ածած դնում
փորին:

Կինամոնով և բէռ-ն անուանուած բոյսով թէյ են պատրաստում
և խմացնում

Սառ ջուր են ածում մէջքին:
Քաշալ. Նախ մազերը ածելում են. սև ձիւթը հալում են, քա-
շում կտաւի կտորի վրայ, մի քիչ (2 մսխալ) սուլէյմանի (սուլեմա)
փոշիացնելով ածում վերան և տաք տաք կապում գլխին: Երկու օրից
յետոյ այս եախուն վերցնում են, և նոր դուրս եկած մազերը մատ-
ներով մէկ մէկ քաշում հանում են, յետոյ կրկին նոյն կերպ պատ-
րաստուած եախուն ձգում, երկու օրից կրկին դուրս եկած մազերը
պոկում, երրորդ անգամ նոյնպիսի եախու ձգում և երբ նկատում են,
որ ամբողջ զլուխը կակուղ և խիտ մազերով ծածկում է, սկսում են
կարագ իւղով կամ ձուի դեղնուցով օրը մի անգամ երեք օր շարունակ
լուանալ:

Քրից արիւն գալիս. Ջարմացի սանրից քերում են և քացախի
հետ խառնելով քաշում քիթը:

Եթէ կնոջ քթից է արիւն գալիս, հաստ թելով կապում են
ձախ ծիծը, իսկ եթէ տղամարդ՝ ամորձի քը:



ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ.

Գանձակի գաւառի ժողովուրդն էլ հաւատում է ճակատագրին. նրա կարծիքով էլ մարդու օրհասը նախասահմանուած է և ոչ մի բան չի կարող փոփոխել այն: Մահուան հրեշտակը միշտ «Ժըմը ժանքին (երեկոյեան), «Հաւախօսին» (կէս գիշերին), «որրը լսին» (առաւօտ) շրջում է մարդկանց մէջ և ում օրհասը հասած լինի, ձեռի նիզակով խփում է նրան և նա անշուշտ մեռնում է:

Եթե սկսում է հոգեւարքը, մահը դիւրացնելու համար վերցնում են մեռնողի գլխի տակից բարձր, բաց են անում պատուհանները:

Մեռած ըոպէին մինչդեռ տնեցիները լաց են լինում և ողբում, աւելի սրտոտ և անտարբերները դիտում են մեռելին, եթէ աչքը բաց է մնացել, խկոյն միքիչ հող են ածում վերան, տրորում և փակում, հաւատալով, որ նա աշխարհից կշտացած չէ եղել և միայն հողով կարող է կշտանալ: Յետոյ լժաշկինակով կապում են կղակը, ձեռները խաչում կրծքին, ոտները կապում միմեանց հետ բամբակի թելով, փաթաթում մի կարպետի մէջ և վերան մի հաց դնում:

Քիչ յետոյ հրաւիրում են քահանային, որ գալով օրհնում է ննջեցեալին լողացնելու ջուրը, մխիթարում բոլորին և գնում: Խսկոյն՝ եթէ ննջեցեալը կին է՝ հարևան կամ աղքատ կանայք, իսկ եթէ տղամարդ՝ ժամակոչը և կամ մի այլ աղքատ մարդ կղզիացնելով տան կամ բակի մի մասը կապերտներով՝ լողացնում են մեռելին: Նախ վերցնում են նրա կրծքին դըրսուած հացը, չորս կտոր անում և տալիս ուտելու նրանց, ուրոնք ցանկանում են սրտապինդ լինել և ննջեցեալից չվախենալ: Ապա ննջեցեալին պառկեցնում են մի կամ երկու տախտակի վրայ, երեսը գարձնում դէպի արևելք, ոտների մօտ մի փոս փորում, որ ջուրն այնտեղ թափուի, ապա գլխի և ոտների մօտ մի մի վառած մոմ կամ ճրագ դնում և ձեռներին քսակ (քսակ) անցկացրած լողացնու՞ի են ննջեցեալին՝ շշնչալով. Քարդ քաղած ընի,

Հողդ մաղած ընի.

Դատաստանդ քաղցր ընի.

Գնալի ճանապարհութ բարի ընի.

Աղօթքդ տանդ վրայ ընի.

Մնացածները բարի ընեն,

Դու էլ բարի մեռել ընիս,

Չմուանան քե:

Եթէ օրհնուած ջրից աւելանում է, պահում են, որ միւս օրը ննջեցիալի շորերը լուանալուց յետոյ այդ ջրով սրբեն իրենց ձեռքերը:

Թաղման օրը, երբ պատարագն սկսում է, ննջեցեալի մօտ բարեկամները հաւաքում են ննջեցեալի տունը և սգաւորների հետ գնում եկեղեցի:

Պատարագի միջոցին, երբ ողջոյն են տալիս, ննջեցեալին լողացնող, իսկ եթէ նա տղամարդ է՝ նրա պատանքը կարող կինը մօտենում է ննջեցեալին և աջ ձեռքը նրա զինի աջ և ձախ կողմը դնելով ասում.

Աստուած ողորմի քե.

Քինալի հղիդ բարի ըլի.

Փարդ քաղած ըլի.

Հողդ մաղած ըլի.

Դատաստանդ քաղցր ըլի:

Ապա նոյն կինը ստանալով քահանալից մի նշխարհք և վարշամակը, դնում է նշխարհքը ննջեցեալի բերնին, իսկ վարշամակը նրա վերայ և ապա կարում պատանքի կրծքի և գլխի մասում թողած բացուածքը:

Սովորաբար փոքրահասակներին և աղքատներին միևնուն օրը թաղում են, իսկ չափահասներին և հարուստներին պահում են մի օր տանը կամ եկեղեցում և պատարագ մատուցանելուց յետոյ թաղում:

Այսպէս շուտ թաղելու պատճառով պատահում են գէպքեր, երբ ուշագնած եղածներն էլ թաղում են և կամ թաղման ծէսը՝ կատարելիս ուշքի դալիս: Այսպէս՝ գետաշէնում վարթի բրուտեանը եկեղեցում, երբ կանալք վերան փաթա-

թուած լալիս էին, ուշքի է եկել, և դրանից յետոյ հինգ տարի էլ ապլել: Նոյն գիւղում Գեօղալ Դալի-Մակունցը ուշքի է եկել, երբ պատանքել են:

Ննջեցեալին եկեղեցի տանելուց յետոյ ազգական և ծանօթ կանալք գալիս են սգաւորի տունը և տնեցիների հետ թաղման համար պատրաստութիւններ տեսնում: Մի եղ կամ մի ոչխար են մորթում և դրանից պատրաստում շիլամաշ, կորկոտ և խաշու: Իսկ եթէ պաս է՝ լորի ճաշ և ձէթով շիլա *):

Այդ երեկոյին ընթրիք են տալիս քահանալին, նրա տիրացուներին և միքանի մօտիկ ազգականների: Ընթրիքից յետոյ քահանալին չորս մոմ են տալիս, որ գիշերը սաղմոս ասի, իսկ առաւատեան մի քիչ ալիւր, երկու մոմ և մի շիշ գինի են տանում նրա տունը՝ նշխարհք գործելու և պատարագ մատուցանելու համար:

Պատանքած մեռելը փաթաթում են մի կապերտի մէջ և դնում նաժի մէջ, իսկ շորեր հազցրածի համար դագաղ են շինել տալիս և եթէ երիտասարդ է՝ կարմիր կամ ծիրանեգոյն, իսկ եթէ պառաւ սե, կապոյտ կամ կանաչ գոյնի կտոր քաշում վերան:

Տան մէջ թաղման կարգը կատարելուց յետոյ երբ նաժը կամ դագաղը վերցնում են, նրա տեղը քար են դնում, քաղաքում նաև գարի շաղ տալիս, որպէսզի ննջեցեալի լիշտակը այդ տան մէջ հաստատուն մնալ: Ննջեցեալը տղամարդ և կին յուղարկաւորողներով շրջապատուած տարւում է եկեղեցի. այս միջոցին քահանան զգուշանում է յետ նայելուց, «որպէս զի նոյն տնից մի ուրիշն էլ չմեռնի»:

Մեռելին լողացներուց յետոյ նրա ականջների և քթածակերի մէջ և աչքերի վրայ դնում են բամբակով փաթաթած խունկ, իսկ բերանին մի նշխարհք, վերան վարշամակը, որ քահանան է կտրում, և բամբակ: Կանանց կապում են պատանքի կտորից մի քիթկալ *): և մի բշրջանի **): Երեխաների ձեռքը տալիս են մի մոմ, բայց նախ նրանցից մինը

*) Քաղաքում այս արդէն վերացել է:

**) Տես Զդեստ և զարգ գլխում:

վառում են, յետոյ միւսը նրանից վառում, և ձեռքով հանդցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը, և հանդցնում երկրորդը, յետոյ նորից վառում, երկուսը միմեանց մտեցնում և միասին հանդցնում:

Այս բոլորն անելուց յետոյ սպիտակ միտկալով պատանում են և նոյն կտորով մի գօտի և մի ռուկատ կապում: Ուսկապը անց են կացնում պարանոցով, կրծքի վրայ խաչկապում և ծայրերը ամրացնում գօտում:

Պատանքից աւելացած կտորը կապում են սեանը, ասելով. «Աստուած ողորմի քե, քու մնացեալն ա»: Թաղման երկրորդ օրը նորից յետ են անում, դարձեալ «Աստուած ողորմի քե» ասելով և զործ ածում ինչի էլ կամենան:

Փոքր ինչ հարուստները շորեր են հազցնում մեռելին, բայց այս դէպքում էլ պատանքի կտորից սպիտակեղէն են կարում և հազցնում: Վարշամակը պատանքի կտորից է լինում, վերան մոմ քսած. քահանան նրա մէջ տեղից խաչաձեւ կտրում է և հինգ տեղ խնկի կտորներ կացնում:

Եթե պատարագն աւարտում է և սկսում թաղման կարգը, բարեկամ կանալք շրջապատում են ննջեցեալին և լալով ողբեր ասում: Այս գիւղերում ևս կան յալկան կանալք, որոնք նստելով ննջեցեալի սնարի մօտ՝ ողբեր են երգում և լացացնում բոլորին: Ահա մի քանի նմուշներ այդ ողբերից.

Մայր ողբում և որդուն.

Բալասանի ծաղիկ, որդի ջան, Խորասանի ծաղիկ, որդի ջան.
Ըստամները ջաւահիր, որդի ջան, Խմ խունչիկ մունչիկ, որդի ջան.
Մհեկ ետ իմ աչքերը խւարի.. քե տեսնալաւ,
Իմ կոները ջրանայ քե պահելաւ.

Ակեռուր ողբում և հարսին.

Այ իմ լիստիկ (իեր) հարսնը, Այ իմ տղամարդ հարսնը,
Այ իմ թռողեան (գեր) հարսնը, Էն կժին մատաղ, որ լցել ես, բեր.

Իմ տանը վեր դրել,
Իմ տունը կըռ-մըռ ջրջրհանել.
Օրորոցդ վեր ես դրել
Ռեխիս ծիծ տուել,
Տունը սարքել ես,
Խմորի վրայ չոքել,

։ արար ողբում և սկեսրոջը.

Իմ նանի,
Իմ տանը սարգեար (պաշտպան)
Նանի.
Իմ տանը պլանի (բանալի) նանի.
Իմ տաշտի մեզար (ծածկոց) նանի.
Իմ դռան դուփուր (կողպէք) նանի.
Ինձ թռղել ես թռւն ես քինում:
Ես եկել եմ քո ինչը բռնել,
Էսում ես քու տղան ինձ կը պահի
Էն վոնց կը պահի.

Լալկան կանանց ողբերով չբաւականանալով՝ քահանալին էլ ողբեր՝ գանձ են ասել տալիս և յետոյ բոլոր յուղարկաւորողները համբուրում ննջեցեալի կրծքից և նրա վրայ դրուած ափսէի մէջ դրամ ձգում, որը և պատկանում է քահանալին իբր վարձատրութիւն գանձ ասելուն:

Ի վերջոյ ուժով հեռացնելով կանանց, ննջեցեալին վերցնում են և չորս հոգի ձեռներին բռնած կամ ուսերին դրած տանում դէպի գերեզմանատուն:

Կանալք եկեղեցու դռանը միքիչ էլ լաց լինելուց յետոյ վերաբառնում են ննջեցեալի տունը, ուր միքիչ էլ լաց են լինում, ապա լուացւում և սպասում տղամարդ յուղարկաւորողներին:

Սրանք դադաղը վերցրած դնում են դէպի գերեզմանատուն, կէս ճանապարհին վայր դնում, կարգ կատարում, զանձ ասում, խաչհամբոյր ձգում, ապա կրկին վերցնում և տանում գերեզմանի աջ կողմը: Այսեղ մինչդեռ քահանան աղօթքներ է կարդում, երկու մարդ հանում են ննջեցեալին կարպետի միջից և բռնելով նրա ոտներից ու զլխից, իջեցնում

Բախսան նի ես կապել
Անուշ քուն դրել.
Քնացել թորոնը վառել,
Եկել խմորը պիւլել.
Եղ դառել հացը թխել:

են գերեզմանի մէջ և թրխկալով ծգում մէջը: Այս միջոցին ուրիշ երկու հոդի բռնում են գերեզմանի վրայ ննջեցեալի երեսքաշը: Քահանան մօտ աղղականի բռի մէջ օրհնում է մի քիչ հող և ձգել տալիս ննջեցեալի վրայ. միւս յուղարկաւորողներն էլ հետեւում են նրան և մի մի բուռ հող ածելով ասում. «Աստուած ողորմի քե»: Ապա հողը տալիս են վերան, և մի թումբ ձեացնում: Թաղման կարգը վերջացնելուց յետոյ յուղարկաւորողները ձեռք են տալիս ննջեցեալի մօտիկ անձնաւորութիւններին և ասում. «Աստծանից մխիթարուես». յետոյ հրաւիրուելով՝ բոլորը գնում են ննջեցեալի տունը, ուր ձեռքերը լուանում և հացի են նստում: Երբ ուտում պրճնում են, բոլորը կանգնում են «ողորմաթասը» խմելու. նախ քահանան և ապա միւսները աւագութեան կարգով առնում են իրենց ձեռը մի վառած մօմ, և «Աստուած ողորմի ինչ պատարագում իշուել ա» ասելով մի բաժակ զինի խմում: Մոմը և բաժակը անցնում է ձեռքից ձեռք: Երբեմն էլ, մանաւանդ երբ ննջեցեալը կին է եղած, մոմի փոխարէն խնձոր են առնում ձեռքերը: Ողորմաթասը «ճրագով են խմում, որպէս զի հոգին լուսաւորուի»:

Ողորմաթասից յետոյ քահանան հոգեհանգիստ է կատարում և ապա յուղարկաւորողները տան դռան առաջը կանգնած մարդուց մի մի բաժակ զինի ընդունելով և բարեմախուտութիւններ անելով խմում են և ցըւում:

Տղամարդկանցից յետոյ կանաչըն են նստում ճաշելու, որոնք և նոյն կերպ խմում են ողորմաթասը:

Բանանց և միքանի այս զիւղերում, նոյն, թաղման օրը, գերեզմանի վրայ կրակ են վառում, որպէսզի «ննջեցեալի հոգին այն աշխարհում կրակի պէս իւր շուրջը լոյս սփոխ»:

Թաղման յաջորդ օրը աղղական և բարեկամ կանաչը դալիս են ննջեցեալի տուն. սրանցից մի քանիսը «սգըալատառ» են քերում, որ բաղկանում է մի շիշ օղուց, մի շիշ զինուց, հալուից, փլաւից և այլն: Այստեղից սգաւոր տնեցիների հետ գընում են գերեզմանատուն, ուր գալիս են նաև տղամարդ բարեկամներ՝ բերելով իրենց հետ օղի: Հրաւիրում է քահանան,

որ կատարում է «յեքսնահողի» կարգը: Կանաչը շրջապատեզով գերեզմանը լալիս են և բարձր ձախով ողբեր ասում: Յետոյ նախ տղամարդիկ և ապա կանաչը ողորմաթաս են խմում, նախապէս միքիչ օղի լցնելով գերեզմանի վրայ և վերադառնում տուն, ուր և հաց են ուտում:

Ուժ օր շարունակ ննջեցեալի տան մէջ սուգ են պահում. կանաչը գլուխները չեն լուանում, տղամարդիկ չեն սափրում. կար չեն անում, ճախարակ չեն մանում: Այս ուժ օրուայ ընթացքում զիշերները ննջեցեալը լողացրած տեղում ճրագ են վառում: Տղամարդիկ յաճախ գնում են եկեղեցի, ուր քահանան անբիծք է կատարում ննջեցեալի համար. երբեմն էլ քահանային տուն են հրաւիրում ամբիծքը կատարելու և հիւրասիրում են նրան ընթրիքով:

Մահուան եօթներորդ օրը բարեկամ կանաչը իրենց հետ վերցնելով մի մի կտոր սապոն՝ գալիս են ննջեցեալի տունը, լալիս, ողբում, յետոյ ջուր գնում տաքացնում և լողացնում սգաւորներին աւագութեան կարգով՝ մխիթարելով նրանց «թէ ով կենաչ՝ պարծենայ, լոխս էլ մեռնելական ենք»: Յետոյ այդ եկող կանաչը լուանում են միայն իրենց զլուխները, որովհետեւ դրանք էլ սուգ պահելով՝ մինչեւ այդ ժամանակ չուր չեն ածել զլխներին: Տղամարդիկ ևս լուանում են իրենց զլխները, որից յետոյ կանչում են սափրիչին և սափրել տալիս մորուքները: Ապա հաց են ուտում և ցըւում իրենց տները:

Հետեւեալ օրը առաւտեան բարեկամ կանաչը և տղամարդիկ կրկին զալիս են սգաւունը և այստեղից քահանայի հետ գնում գերեզմանատուն, լալիս, ողբեր ասում, կատարում «եօթնէից կարգը» և ապա վերագառնում, հաց ուտում և ցըւում: Այսուհետև սգաւորները սկսում են իրենց զրոծերին գնալ, մինչդեռ մինչեւ այդ օրը իւր սգաւոր անդործ են մնում:

Քառասունքին մի ոչխար են մորթում, առաւտօտ շատ վաղ խաշու, շիլա և կաթնաճաշ եփում, բարձում ձիերի վրայ և տանում գերեզմանատուն: Այստեղ, գերեզմանի վրայ սփռոց են ձղում և հաց, զինի, օղի, պանիր, գալթայ, մեղր, հալուայ և այլն շարում: Փալիս են բարեկամ կանաչը և տղամարդիկ՝

ինչպէս և քահանան: Կանայք չոքում են գերեզմանի շուրջը, լալիս և բարձր ձայնով ողբեր ասում. քահանան կատարում է քառասնէից կարգը. յետոյ սգաւորներից մինը զինի է ածում գերեզմանի վրայ և ապա մի մի բաժակ տալիս նախ տղամարդկանց և յետոյ կանանց, որոնք երկար բարեմախտութիւններ անելով խմում են և գերեզմանի վրայ դրուած ուտելեղէններից մի քիչ ուտում: Ապա նստում են գերեզմանի կողքին և ճաշում, ուտելով տնից բերած ուտելեղէնները: Տղամարդկանցից յետոյ ճաշում են կանայք: Ի վերջոյ ճաշի մնացորդները ժողնելով գերեզմանի վրայ և աւելացած խմիչքները ածելով գերեզմանի վրայ՝ վերապառնում են: Զմեռը կամ վատ եղանակին միքիչ ուտելեղէն և զինի առած գնում են գերեզմանը օրհնել տալիս և ապա վերապառնում տուն ճաշում:

Ննջեցեալի տարելցին «տրիպելորի հաց» են տալիս և պատարագ մատուցանում:

Գլխաւոր մեռելոցներին օրհնել են տալիս ննջեցեալներին:

Աւագ Ռւբաթ օրը զիւղի բոլոր տներից պասուայ կերակրներ են բերում եկեղեցի և կէսաւուր ժամասացութիւնից յետոյ երկար սփոռցներ սփոռում եկեղեցու մէջ, այդ բերած կերակրները դարսոտում և ապա բոլոր տղամարդիկ նստում և ուտում են անխտիր այդ բերածները, որից յետոյ քահանան հոգեհանգիստ է կատարում համայն ննջեցելոց համար:

Գերեզմանատուն.—Գիւղական գերեզմանատները սովորաբար գտնում են գիւղին մօտ, ճանապարհների կշտին, որպէս զի անցուղարձ անողները ողորմիս տան ննջեցեալներին: Սովորաբար միևնոյն գերդաստան անդամները միմեանց մօտ են թաղում: Կանոնաւորութիւն, ծառուղիներ բոլորովին չկան: Աղքատների գերեզմանների վրայ մանր քարեր են դարսուած լինում կամ հողակոյտ շինած, իսկ հարուստներինը տապանաքարեր ձգուած: Սրանք ընդհանրապէս միակտուր, երկար, քառանկիւնի և կամ օրօրոցածև քարեր են, նշխելով եղբափակուած և մէջտեղը տապանագլով ծածկուած:

Գիւղերում 10—25 րուբլի արժեցող տապանաքարեր շատ յաճախ են պատահում:

Հ Ա Խ Ա Տ Ք

Լ Ե Բ Ն Ե Ր Ի Պ Ա Ճ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Մուաւ, Քափաս և Պանտ, ինչպէս և միքանի ուրիշ լեռներ, որ այժմ բաւական ուխտատեղիներ ունին իրենց վերայ, հեթանոսութեան ժամանակ պաշտուելիս են եղել: Սրանց մասին անշուշտ աւանդութիւններ եղել են, սակայն ինձ յաջուեց միայն մինը գտնել, որ հետևեալն է:

Մի ժամանակ Քափաս լեառը այնքան բարձր է եղել, որ լւը ստուերով ամբողջովին ծածկել է Գանձակ քաղաքը: Սրա վրայ սաստիկ նախանձել է Մուաւ լեառը և առաջարկել նրան կուուել: Քափասը իսկոյն լւը նեար շպրտել է Մուաւի վրայ և կոտրել նրա ձախ կողքը, իսկ Մուաւը բարկութեամբ և նախանձով լցուած՝ անպէս է տուել նրա զլխին իւր նետով՝ որ փշուր փշուր է եղել և թափուել վայր:

Վ ՔԱՐԻ Պ Ա Ճ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Քաւառումս կան մի քանի ժայռեր և քարեր, որոնք սուրբ են համարում և որոնց առաջ ժողովուրդը մոմեր վառելով, մի որևէ հիւանդութիւնից բժշկութիւն և կամ մի այլ շնորհ է խնդրում: Սրանց թիւը այժմ բաւական փոքր է և եղածն էլ հետզհետէ մուացութեան են տրում: Սրանց ամենանշանաւորը կարելի է համարել «Ծծերը»: Սա նիւկզար զիւղի մօտ, ձորի մէջ բարձրացող մի ապաւաժ քերծ է, որի ստորոտով հոսում է մի առուակ: Քերծի մէջ կայ մի քարայր, որի առասոաղից կախուած են մորդու, ոչխարի, կովի, խողի և այլ

պենդանիների ծծերի նմանութեան բիւրեղներ, որոնց ծալրերից ջուր է կաթկաթում և հաւաքում սրանց տակ գտնուած աւազանի մէջ: Կաթ չունեցող կանայք ուխտ են գալիս այստեղ, մոմեր վառում ծծերի առաջ, նրանցից կաթած ջուրը քսում իրենց ծծերին և խնդրում նրանցից իրենց ստինքի կաթը շատացնել:

Ոմանք էլ սակաւակաթներին են բերում այսաեղ, նոյն կենդանու ծծերի նմանութիւնն ունեցող բիւրեղներից ջուր քսում նրանց ծծերին, որ կաթն աւելանալ:

Տենդ ունեցող հիւանդներն էլ գալիս լողանում են այս սառն աւազանում և բժշկում, նախապէս մոմեր վառելով ժայռի առաջ:

Երքէճ զիւղի մօտ գտնում է մի ահազին ժայռ, մէջտեղից ճեղքուած, որտեղից կաթ կաթ չուր է կաթում: Առաւելապէս չիք չորեքարթի օրը շրջակայ զիւղերից ահազին բաղմութիւն է գնում այդտեղ ուխտ: Մոմեր վառելով այդ ժայռի կրծքին, տակից հող են վերցնում և այդ կաթ կաթ թափուր ջրով շաղախելով քսում մկնատամի վրայ, որ առողջանալ:

Մի այսպիսի Մկնատամի խաչ կայ նաև Գետաշէնում, որ մի հասարակ քար է, բլրակի վրայ ընկած:

Բրաջրից բանանց տանող ճանապարհի վրայ կայ մի ժայռ, որ կոչում է «Ճնրտեղի խաչ». սա շատ զօրաւոր է համար- ում և ամեն մի անցորդ անշուշտ գալիս և համբուրում է նրան:

Գետաշէնի մօտ, «Քաջքաձորում¹⁾» կայ մի ահազին ժայռ, որի մէջ մի անցք կայ: Այս ժայռը կոչում է «Քաջքաբուն. «Կոխուած²⁾» երեխաներին տանում են այդտեղ և երեք անզամ անցկացնում այդ անցքով, որպէսզի «կոխն» անցնի:

Ոչ պակաս նշանաւոր են նաև Մուռութ գիւղում Ճահ- քեանի աղբիւրի մօտ գտնուած ժայռը և Ս. Սարգիսի վանքից փոքր ինչ բարձր, ձորակի մէջ ընկած ժայռը, որ ունի մի նեղ անցք: Վերջինս կոչում է Կապ-խաչ: Ամուլ կանայք ե- րեք անզամ անցնում են այդ անցքով, որպէսզի որդի ունենան:

¹⁾ Տես սատանաների մասում:

²⁾ Տես Տղաբերքում:

Բանանցի շրջականերում զտնուող Մեծ-Գոմերի խաչին ուխտեն գնում աչքացաւ, Օսկեթելին՝ փորացաւ, Սուրբ Նշա- նին՝ զլխացաւ ունեցողները: Խոկ Ֆիրանաւորի խաչի ժայռի միջով անց են կացնում այն երեխաներին, որոնք ուշ են ոտելնում:

Դերունիներն ասում են, թէ իրենց մանկութեան ժա- մանակ միմեանց դրամ փոխ տալիս այս սուրբ համարուած քարերի առաջ էին տալիս և նրանց վկայ բռնում:

Ժողովուրդը պաշտում է նաև կախակի հարուածին են- թարկուած քարերը, ինչպէս օրինակ Միրզիկ գիւղի Խաչ- բիւրից փոքր ինչ բարձր գտնուած «Կեծաքարը»:

✓ ԶՐԻ ՊԷՇՏԱՄՈՒՆՔ

Դեռ մինչև այժմ էլ մնում են ջրի պաշտաման մնացորդ- ներ, գեռ մինչև այժմ էլ ժողովուրդը սուրբ է համարում մի- քանի աղբիւրներ, նրանց մօտ է ուխտ գնում, մոմեր վառում, աքաղաղ մատղում, ֆիրենց հիւանդութիւններից բժշկութիւն հայցում:

Այսպիսի աղբիւրներից նշանաւոր են.

Միրզիկ գիւղում «Խաչ-աղբիւրը», որ պաշտում է որպէս մկնատամ հիւանդութեան բուժիչ. այստեղ առաւելապէս բե- րում են մկնատամ հանած երեխաներին, մոմեր վառում աղ- բիւրի առաջ և երեխալին լողացնում այդ սառն ջրով:

Բրաջրում «Քոսի (բորոտի) աղբիւրը» առողջութիւն է պարզեցում բորոտներին, որոնք նոյնպէս մոմեր վառելով նրա առաջ՝ լողանում են: Այս աղբիւրի մասին աւանդութիւնն ա- սում է, թէ մի կռապաշտ բորոտութեան ախտով բռնուած հալածում է իւր բարեկամներից և ծնողներից ու անխնամ ընկնում այս աղբիւրի մօտը: Երկար տանջուելուց յետու մի ծե- րունի երեսում է նրան և ասում. Խոստացիր քրիստոնէութիւն ընդունել և կը բժշկուիս: Երբ այս կռապաշտը խոստանում է, ծերունին գաւազանով խփում է ժայռին և խոկոյն այժմեան աղբիւրը բղխում է: «Լուացանիր այս աղբիւրում և կատարի՛ խոստումդ», ասում է ծերունին և անյախտանում: Հիւանդը

լուացում է և անմիջապէս բժշկուելով՝ ընդունում քրիստոնէութիւն։ Այդ օրուանից, աւելացնում է աւանդութիւնը, սակայն աղբիւրը սուրբ է համարւում և հազարաւոր մարդկանց բժշկել է։

Բանանց գիւղի սարերում գտնուող պաքերի (Համբուների) աղբիւրի ջուրը երիտարղացնում է մարդուն և սէր ներշնչում։

Բանանցի մօտ դժնուող նահատակի աղբիւրը փարատում է վիշտը, թախիծը և առհասարակ բոլոր հոգեկան հիւանդութիւնները։

Նոր-Փիսի գիւղի մօտի Ոսկան նահատակի աղբիւրը բուժում է համրութիւնը, խլութիւնը և կուրութիւնը։

Եղնասարի փանքի աղբիւրը նոյնպէս սուրբ է համարւում և ուխտաւորները նրա առաջ մոմեր են փառում։ Ասում են, թէ մի անգամ մի անհաւատ կամեցել է պղծել այդ ջուրը, բայց խոյն նա կտրուել է։ Յետոյ արդէն արդար մարդիկ մոմեր են փառել, մատաղ կտրել ու աղօթել՝ մինչև որ նորից սկսել է բղիւել։

Հին-Փիսի գիւղում, եկեղեցուց փոքր ինչ ներքեւ նոյնպէս կայ մի սուրբ համարուած աղբիւր, ուր շրջակայ գիւղերից ուխտ են գտնիս։

Կիրանց գիւղի Կաղնի խաչի մօտ կայ մի սուրբ համարուած աղբիւր, որի տակ լողացնում են անդամալուծներին՝ առողջութիւն հայցելով։

Ասում են, թէ ջուրը և կրակը եղբայր և քոլը են. մի անգամ եղբայր-ջուրը իջել է սարից, քոլը կրակը ասել է նրան. «Եկ մի քէ նատի տաքացի»։ Եղբայր ջուրն էլ պատասխանել է. «Դու էլ մի քիչ ինձանից խմի՞ր հովացիր»։

Առաւելապէս հեքեաթների մէջ պատմում է «անմահութեան աղբիւրների» մասին, որոնց ջուրը խմելով՝ մարդը ամենայն տեսակ հիւանդութիւններից բժշկում և անմահանում է։ Այսինի աղբիւրները գտնուում են մարդկանց անմահանում է։ Այսինի աղբիւրները գտնուում են եօթ զլիսանի դևերով։

Նոյն հեքեաթներում պատմում են այնպիսի աղբիւրների մասին, որոնց տակ եթէ «բաղդաւոր աղամորդին» արթանանայ դլուխը բռնել, մազերը ուկու կամ արծաթի գոյն կստանան։

Կ Բ Ա Կ Ի Պ Ա Ճ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Կրակապաշտութեան մնացորդներից նշանաւոր են հետեւելները։

1) Կրակով երգում են։
2) Կրակը թէ վառելիս և թէ հանգնելիս «Յիսուս Քրիստոս» են ասում։

3) Կրակի վրայ ջուր չեն ածում և եթէ ստիպուած են ածելու՝ ասում են. «Յիսուս Քրիստոս, ես մեղայ Աստծու»։

4) Կրակին չեն խփում, վերան չեն թքում, վերայից չեն անցնում։

5) Գիշերները կրակ դուրս չեն տալիս, վնասաբեր համարելով այդ։

6) Գիշերները լողանալիս մի կրակ են ձգում ջրի մէջ, որպէսզի չարը խափանի»։

7) Միւևնոյն սենեակում երեք ճրագ չեն վառում, մեղք համարելով այդ։

8) Փայտը վառուելիս եթէ ձայն է հանում, ասում են, թէ իրենց բամբասում են. և որպէսզի դուշակեն, թէ ով է բամբասողը՝ սկսում են անուններ տալ և ում անուան վերայ որ գաղարի ձայնը՝ նա կը լինի բամբասողը։

9) «Մոմը վառած միջոցին ծալրին գոյացած ձևերից գուշակութիւններ են անում. այսպէս օրինակ, երբ չորս բարակ շիւղեր են մնում, ասում են ձիւառը հիւր պիտի գայ, երբ խաչ է գոյանում, ասում են իրենցից մինը պիտի մեռնի և այլն։

Կրակի պաշտաման հետ կապուած է և օջախի պաշտամունքը. Ընդհանրապէս բալոր օջախները առանձնապէս յարգուում են, ոչ ոք չի թքում նլանց վրայ, կամ անարգանքով վերաբերում, աւելացած մեռնաջուրը օջախն են ածում, ամենամաքուր տեղ համարելով այդ։ Բացի դրանից օջախով երդում են, օջախով օրհնում և անխում։ Հարսանիքի ժամանակ հարսը երկրպագում է հայրենական օջախին, և նրանից միքէ մօխիր վերցնում խը հետ սանելու սկեսրանց տունը։ Տղաբերքի ժամանակ ծննդկանը օջախի առաջն է ծնում և կամ օջախի

մոխրից իւր մօտ դնում: Ննջեցեալ եղած միջոցին միքանի օր օջախի առաջ կանթեղ են վառում: Գիւղատիրոջ կամ երկար ժամանակ տանուտիրութիւն անողների օջախները յարգում են ամբողջ գիւղից, այդտեղ ուխտ են գալիս, մոմեր վառում, հարսու փեսան նախ քան թաղուրի տուն գնալը՝ գալիս համբուրում են այդ օջախից: Միքանի օջախներ էլ իբր մի որոշ հեւանդութեան բուժիչ են պաշտում. այսպէս՝ օրինակ, Փիփ գիւղում նահատակենց օջախը, որ մի կիսաւեր տան սովորական օջախ է, համարում է որպէս մկնատամի բուժիչ. գալիս են մոմ վառում, հողից տանում ջրով շաղախում և քսում մկնատամի վրայ, որ լաւանայ:

Վ Ա Ռ Ե Բ Ի Պ Ա Ճ Տ Ա Մ Ո Ւ Ի Ն Ք.

Ինչպէս Վարանդայում, այնպէս և գանձակի զաւառում դեռ մնում է ծառապաշտութիւնը: Ոչ միայն շատ գիւղերում, այլ և նոյն իսկ քաղաքում կան նուիրական, սուրբ համարուած ծառեր: Սրանց առաջ չոքում աղօթում են, աքաղաղ, ոչխար, եղ մատղում և առաջնի կատարը, ու վերջիններիս եղջիւրները քաշ անում ծառից. Հիւանդները իրենց հանդերձներից կտրներ պատառում և կապում են ծառի ճիւղերից, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այդ շորերի հետ այդտեղ մնան. ուրիշներ հիւանդանալիս աղօթող կանանց աղօթել տալուց յետոյ՝ այն ասեղը, որով աղօթում են, բերում շուլուլում են այդ ծառի տերևների վրայ կամ խրում նրա կեղեկի մէջ, որպէսզի հիւանդութիւնը, որ ասեղին է անցած լինում, այդտեղ մեխուած մնայ և չկարողանայ վերադառնալ: Ամուլ կանայք էլ գալիս են այդ սուրբ համարուած երկճիւղ ծառերի միջով երեք անգամ անցնում, որ որդի ունենան:

Այս ծառերով երգում են, նրանց վկայ բռնում, երբ մարդկանցից ծածուկ դրամ են պարտք վերցնում և կամ մի աւանդ պահ տալիս:

Ոչ մի հաւատացող չի համարձակում վնասել այդպիսի ծառերին. նրանցից մի ճիւղ, մի տերև անգամ կտրելը մեծ մեղք է համարում և մեղանչողները, ինչպէս պատմում են,

սաստիկ պատժուում են: Ժողովուրդը այդ ծառերին իբր կենդանի էակներ է երեակայում և պնդում է, թէ նրանց կըտրելիս՝ արիւն է հոսում. նրանք բղաւում են և երբեմն նոյն իսկ կերպարանափոխուում ուրիշ ծառի: Սոյն հասկացողութեամբ կարելի է միայն բացատրել և այն սովորութիւնը, որ երբ մի ծառ պտուղ չի տալիս, ծաղկելիս, կամ առաւելապէս մեծ պասի աւագ չորեքշաբթի (չիք-չորեքշաբթի) օրը մինը կացնով երեք անգամ խփում է այդ ծառին և ասում. «Բար ես վերօնում վեր կալ, վեր չես օնում կտրում ենք»: Մի ուրիշն էլ միջնորդում է, թէ մի կտրեր, այս տարի անշուշտ պտուղ կըտայ և իբր թէ իսկապէս տալիս է:

Այս սուրբ համարուած ծառերը իրենց սրբութիւնը պահպանում են և չորանալուց յետոյ. ոչ ոք չի կտրատում կամ վերցնում տանում նրանց ճիւղերը, այլ միայն նրանց վիթած բներից փոշին վերցնելով ածում են ջրի մէջ և խմեցնում հիւանդներին, որ բժշկուին:

Ծառերի միքանի տեսակներ էլ ընդհանրապէս նուիրական են համարում, այսպէս օրինակ չինարին, բարդին և ընկուզենին կանաչ ժամանակ միանգամալի ապահովուած են կացնի հարուածներից: Հաւատացնում էին, թէ Գետաշէն գիւղում Աւադ անունով մինը մի կանաչ ընկուզենի էր կտրել, որի ճըսցից վախենալով հիւանդացել և երեք օրից մեռել էր:

Նոյն իսկ նա, ով հանում է մատաղ ընկուզենին մի ուրիշ տեղ տնկելու նպատակով, այնուամենայնիւ պատժում է մահով. և այս պատճառով երեք երիտասարդները այդ չեն անում, այլ միմիայն ծերունիները, որպէսզի եթէ մեռնին էլ նրանք մեռնին:

Յիշենք սուրբ համարուած ծառերից միքանիսը.

ա. Գանձակում, ս. Սարգիս ուխտատեղու մօտ գտնուած թղիկ ծառը: Սրա մասին պատմում են, թէ մի թուրք իւր կնոջ հետ եկել է ս. Սարգսին ուխտ անելու, որպէսզի իրեն մի որդի տայ: Զանաչելով ուխտատեղին, նա հարցը էլ միքանի հնձուորների, որոնք չկամենալով որ այդ թուրքը աղօթի իրենց ուխտատեղում, ցոյց են տուել այժմ սուրբ համա-

քուած ծառը, որ այն ժամանակ չէր պաշտուամ: Թուրքը ազօխում է այդ ծառի առաջ, մի ոչսար մատղում և վերադառնում: Մի տարուց յետոյ նոյն հնձուորները տեսնում են միւնոյն թուրքին իւր կոչ՝ և մի նորածին մանկան հետ, որ մի եղ էր բերում այդ միւնոյն տեղում մատղելու: Այս անգամ հնձուորները ասում են նրան, թէ ուխտատեղին այդ չէ, այլ փոքրինչ վերև, սակայն նա պատասխանում է, թէ իմ ուխտատեղիս սա է, քանի որ որան ես աղօթեցի և սա կատարեց իմ ինդրուածքը և որդի պարգևեց: Այս դէպքից յետոյ ոչ միւայն թուրքերը, այլ և հայերը սկսում են պաշտել այդ ծառը:

բ. Չարդախլու գիւղում նշանաւոր է «Կաղնի խաչը»: Սրա մասին պատմում են, թէ մի անգամ, երբ մի գիւղացի սրա բնի առաջ չոքած աղօթում էր, մի անցորդ թուրք ծաղրում է նրան, բայց իսկոյն ծռւում է և չի կարողանում ուղղուիլ: Զդշալով իւր արածի վրայ, նա չոքէչոք մօտենում է Կաղնի խաչին, համբուրում և մի մատաղ խոստանում, որից յետոյ միայն ուղղուում է:

գ. Գետաշէնում կայ մի «Զինարի խաչ», ծածկուած բագմաթիւ, գոյնզգոյն կտորներով: Պատմում են թէ մի անգամ մի թուրք արհամարկելով այդ խաչը՝ կտրել է զրա մի ճիւղը, բայց իսկոյն ուշագնաց է եղել և այսպէս երկու օր շարունակ մնացել ծառի տակ ընկած, մինչև որ բարեկամները եկել են և մատաղ խոստանալով խաչին՝ ուշքի բերել նրան:

դ. Աբլահ գիւղում հանդի մէջ ընկած է մի հինաւուրց չինարի ծառ, որ երկար ժամանակ պաշտուել է և այժմ էլ պաշտուում է, չնայելով որ արդէն չորացել է: Նրա կտորներից ոչ մինը չեն տանում, այլ միայն փթած միջուկը ջրի մէջ լուծելով խմեցնում են հիւանդներին, որ առողջանան:

ե. Գետաշէն գիւղից գէպի արևմտահարաւ մի փոքրիկ զագաթ կայ, ծածկուած գլխաւորապէս բոխի և կաղնու ծառելով: Սրանց մէջ տեղը կայ մի մէծ, հինաւուրց թղկի ծառ, որ պաշտուում է որպէս ջերմ և այլ հիւանդամթիւններից բուժող: Սա կոչում է «Կաղնի խաչ», թէև թղկի ծառ է: Պատմում են, թէ սրա մօտ շատ հիւանդամթիւններից մի կաղնի

սուրբ ծառ է եղել. որին թուրքերը վառել, մոխիր են դարձել: Բայց միւս օրը հայերը նկատել են, որ այդ սուրբ ծառի ճիւղերից մինը ընկել է այժմ պաշտուող թղկի ծառի վրայ, որով և կաղնի խաչը իւր սրբութիւնը տուել է այս թղկուն: Եւ այնուհետեւ սկսել են նրա փոխարէն այս թղկուն պաշտել:

զ. Բբաջուր գիւղում, բլրակի գլխին կայ մի բռշնի ծառ, որ նոյնպէս պաշտուում է: Ֆերունիներն ասում են, թէ սա մինչև այժմ էլ նոյն մեծութիւնն ունի, ինչ որ ունէր իրենց մանկութեան ժամանակ, և որ սրա տերեւները երբէք չեն թափիւում: Այս մասին պատմութ են, թէ շատ հին ժամանակներում մի պառաւ, սաստեկ լոգնած կին եկել հանգստացել է սրա ստուերի տակ, և ապա օրհնել նրան ասելով «Տիլար և կանաչ մնաս», և այդպէս էլ մնացել է: Աչքացաւ ունեցողները չոքեցնք բարձրանում են այս բլուրը, մոմեր վառում ծառի տակ, ոչխար մատղում և ապա վերցներով ծառի արմատից մի քիչ հաղ, ածում են ջրի մէջ և դրանով լուանում աչքերը: Ապա իրենց հանգերձից մի կտօր կապում ծառին ու վերադառնում, հաւատալով, որ շորի հետ միասին իրենց աչքացաւն էլ թողին ախտել:

է. Բուղլուղ գիւղում, Ա. Մինաս անուանուած մատուռի մօտ կան քսանից աւելի վիթխարի հացէնիներ, սրոնք նոյնպէս պաշտուում են, և որոնց մի տերեւն անգամ մեծ մեղք են համարում կտրել: Պատմում են, թէ մի անգամ մի թուրք մի ձեռնափայտ է կտրել այս ծառի ճիւղերից, բայց մինչև տուն հասնելը լեզուն բռնուել է և մի կտրմը թուլացել: Համականութով, որ այդ պատիքը սուրբ ծառիցն է, նա խոստանում է մի արջառ մատղել, եթէ առողջանակ, և երբ առաղջանում է՝ կատարում է իւր խոստումը:

ը. Ղարաբուկախ գիւղի մօտ կայ մի մեծ վայրի տանձենի, որ նոյնպէս սուրբ է համարում: Մի թուրք կտրում է նրա մի մասը և մի տաշտ շինում, բայց գիւղ տաշտը չբանեցրած ամբողջ ընտանիքով կոտորւում են:

Այսպիսի սուրբ համարուած ծառեր կան նաև ուրիշ շատ

զիւղերում, ինչպէս Բանանց («կաղնի խաչը»), Խաչակապ, Փիփը և այլն:

Փողովուրդը մի քանի ծառեր էլ անսուրբ է համարում և զգուշանում է նրանցից. այսպէս ոջի ծառը ոչ մի քանի գործ չեն ածում. եթէ այդ ծառից կտրած ճիպոտով խփեն մի եղանրասում են եղը փորացաւ կը նկնի, եթէ նա մինի այզում բուսնի, այդին անպտուղ կը մնայ, եթէ նրա մանրահատիկ պտղից մինն ուտի՝ կը թունաւորուի *):

ԿԵՆՔԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

Ա. ԹԹՈՉՈՒՆԵՐ

Ինչպէս Վարանդայում, այնպէս և Գանձակի գաւառում՝ թունների պաշտամունքը մասամբ մնացել է: Մի քանի թռուններ սուրբ են համարում, ժողովուրդը նրանց մեղքը է համարում սպանել, նրանց քար չի ձում, նրանց բները չի քանդում: Այսպիսի թռուններից նշանաւոր է ծիծեռնակը. սրանոչ միայն մի որևէ է վնաս չեն հասցնում, այլ և նրանից խընդրում են, որ իրենց երեխաներին շուտ և ճարտար խօսելու շընորհք պարզեցէ, որովհետև հաւատում են, որ նա էլ երբեմն մի ճարտար, քաղցրախօս երեխայ է եղել: Սրա խորիժ մայրը ատելով նրան՝ մի օր հիւանդ է ձեւանում, և պահանջում է ամուսնից, որ այս տղամի ճկոյթ մատը կտրէ, եփէ, տայ իրեն ուտի, որպէսզի առողջանայ: Հայրը կատարել է այս չար կնոջ կամքը, կտրել է իր երեխալի ճկոյթը (ծիծեռնը), որի ցաւից նա մեռել է: Բայց երբ ճկոյթը տարել է կնոջը, որ ուտի և առողջանայ, յանկարծ այս ճկոյթը ծիծեռնակ է դառել և թռել երգելով.

Ծիծեռն եմ հա, Ծիծեռն եմ,
Հօրը մորթած Ծիծեռն եմ.
Մօրը կերած Ծիծեռն եմ,
Թռեր Ծիծեռնակ եմ դառէ:

*) Արարատեան. Հիմնարկ. գաւ. ուսումնաբանի. եր. 70.

Ծիծեռնակին՝ տեղական թուրքերն էլ սուրբ են համարում և չեն սպանում: Սրանց մէջ էլ կան աւանդութիւններ ծիծեռնակի մասին, որոնցից նշանաւոր է հետևեալը.

Աստուած հրամայեց Արքահամբն գնալ Մելկա և այնտեղ մի այնպիսի տաճար շինել, որպիսին Մովսէս շինեց Երուսաղէմում: Արքահամբ կատարեց Աստուծոյ հրամանը, և բազմաթիւ ուխտաւորներ սկսեցին յաճախել այս տաճարը: Այս միջոցներում այդ երկրում բնակում էր Ադ կոչուած ժողովուրդը, որի թագաւորը հրամայեց մեծ զօրքով գնալ և հիմնովին կործանել այդ տաճարը: Բայց երբ զօրքը մօտեցաւ տաճարին, հաւաքուեցան անթիւ ծիծեռնակներ, որոնք կտուցներով քարեր վերցնելով՝ ճգեցին զինուորների վրայ և բոլորին կոտորեցին: Միայն ազատուեց մի զինուոր, որ գնաց և պատմեց այս դէպքը թագաւորին: Վերջինս չհաւատաց, բայց հէնց այս միջոցին երևաց մի ծիծեռնակ և մինչդեռ զինուորը կատէր. «Ահա, ահա, թագաւոր, նրանցից մինը», ծիծեռնակը ճգեց քարը նրա զլխին և սպանեց: Թագաւորը այս տեսնելով հրամայեց այլև ձեռք ըլտալ տաճարին: Սրանից յետոյ Աստուած սովորեցրեց ծիծեռնակին երգել այն աղօթքը, որով զգուշացնում է մարդկանց սպանել ծիծեռնակին, որովհետև Աստուած մահուան պատիժ է տալիս ծիծեռնակին սպանողին:

Բայցի ծիծեռնակից ժողովուրդը սուրբ է համարում նաև աղաւնուն, որի մասին եղած կռապաշտական աւանդութիւններն անհետացել են և մնացել է միայն մովսիսականը: Երբ կամենում են մորթել աղաւնուն, շատ անգամ խղճահարում են և չեն մորթում, որովհետև «նրա աչքերում արցունքներ են նկատում»:

Իբր չար կամ աւելի լաւ չարագուշակ թռուն յարգուում է բուհ: Երբ նա բւում է մի տան կտրին, տնեցիներին թուխիծ է պատում, ամէնքը հաւատում են, որ մի տխուր դէպք, յաճախ՝ մահ, պիտի պատահի: Ճատերը այդպիսի դէպքերում փայտէ գշի մէջ կերակուր են ածում և դուրս բերում, տալիս նրան, որպէս զի չարիքը այլ ևս չպատահի: Միևնույն կերպ վարում և հաւատում են թուրքերը: Սրանց կարծիքով բուն

ամենախմասուն թռչունն է. սկզբներում նա նոյն իսկ ընտանի է եղել, բայց յետով, երբ տեսել է, որ մարդիկ սկանում են մարդարէներին՝ վախեցել է, թէ մի գուցէ իրեն էլ սպանեն, ուստի և հեռացել է նրանցից և ապրել աւերակների մէջ: Եւ որովհետև նրա սիրելի տեղը աւերակներն են՝ ուստի և մի անդամ հարցրել են նրան, թէ աշխարհումս ի՞նչն է աւելի, շինութիւնները թէ աւերակները: «Աւերակները, պատասխանել է նա, որովհետև ժամանակով բոլոր շինութիւններն էլ աւերակ պիտի դառնան»:

«Իսկ ո՞րո՞նք նն աւելի, կանալք, թէ տղամարդիկ»:— Կանալք, որովհետև կնոջ լսող տղամարդն էլ կին է:

Բուի մասին կայ հետեւեալ աւանդութիւնը.

Սկակ անունով մի տղայ իւր քրոջ հետ խօսքի տարուելով՝ կրցնում է իրենց եզր արածացնելիս: Երկար, ապարդիւն որոնելոց յետոյ տուն են դառնում և պատմում են իրենց խորժ մօրը կորսուի մասին: Սա սաստիկ, բարկանում է սրանց վրայ, անիծում և տանից դուրս անում, պատուիրելով չկերադառնալ առանց եզի:

Նորից երկար որոնելուց յետոյ՝ սրանք յուսահատուած դիմում են Աստծուն, որ իրենց թևեր տայ, որպէսզի աւելի հեշտութեամբ կարողանան որոնել: Աստուած լսում է զրանց խընդիրը, թևեր տալիս և բու գարձնում: Դիեռ մինչեւ այժմ էլ նրանք շարունակում են հարցնել միմեանց այսպէս.

«Սկակ»...

— Հէ!

«Գտար»

— Ձէ:

Իսկ թռւրքերը պատմում են հետեւեալ աւանդութիւնը.

Յակոր լսելով Յովսէփի որդու կորուստը, կանչում է Ռւսուի և Նասիր ճառաւներին և ուղարկում նրան ոլոնելու: Արանք երկար որոնելուց յետոյ խնդրում են Աստծուն իրենց թևեր տալ, որպէսզի հեշտութեամբ որոնեն: Աստուած տալիս է նրանց թևեր, նրանք թռչում են և որպէս զի միմեանց չը կորցնեն, շարունակ կանչում են.

Յուսուփի, Նասիր.

Յուսուփի, Նասիր.

Այս աւանդութիւնը շատ նման է հետեւեալին, որ պատմում է գարձեալ թռւրքերի մէջ՝ յոպ-յոպի մասին.

Կար չկար երկու եղբայր, Յուսուփի և Նասիր անուններով. Նրանք ունեին մի քոյր Փաթմա անունով, որ սովորութիւն ուներ գլխին սանր կրել: Մի անգամ նրանց ձին կորաւ և եղբայրները գնացին որոնելու նրան և պատուիրեցին քրոջը մինչև իրենց վերադարձ կերակուր պատրաստել: Նա եփեց կաթնապուր և երկար սպասեց եղբայրներին: Սպասեց, սպասեց, վերջապէս՝ անհանգստանալով զնաց նրանց որոնելու: Երկար, ապարդիւն կերպով որոնելուց յէտոյ նա խնդրեց Աստծուն, որ իրեն թռչուն գարձնի, որպէսզի հեշտութեամբ կարողանայ որոնել իւր ոիրելի եղբայրներին: Աստուած լսեց նրա աղօթքը և նրան յոպ-յոպ գարձրեց: Եւ մինչեւ այժմ էլ նա որոնում է իւր եղբայրներին կոչելով. «Յովոպ, զիւլ թափ, Յուսուփի, Նասիր, սիւտիլ աշ», այսինքն. Յովոպ, վարդ գտիր, Յուսուփի, Նասիր, կաթնապուր: Երբ նա թռչուն գարձաւ, նրա հայրական ժառանգութիւնը մնաց գետնին:

Իսկ հայերը յոպ-յոպի մասին բոլորովին այլ կերպ են պատմում.

Մի անգամ մի հայոր հունցելիս գործը կիսատ է թռողնում և սկսում է գլուխը սանրել: Հազիւ սանրը խրում է մաղերի մէջ, երբ սկսրայրը վրայ է գալիս. ամօթից և երկիւղից հարսը թռչունի է փոխարկում և սանրը գլխին թռչում:

Մորեխ.—Երկիւղից պաշտում են Յորբէին: Երբ զրանք դալիս են մի զիւլ, բոլոր զիւղացիները սարսափած մեծ քանակութեամբ բրինձ են խաշում և լցնում նրանց առաջը, խնդրելով որ ուտեն և հեռանան: Երկիւղ կրելով չեն սպասում մորեխներին:

Բ. Կ Ա Թ Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր

Ճաւճ.—Սա իմաստուն և սաստիկ շուտ նախազգող է համարում: Նա ճանաչում է տան բարեկամին և չարակամին, նախազգում տանը գալիք դժբաղդութիւնը և ցաւակցելով՝ ոռնում, ուստի և մարդիկ լսելով նրա ոռնոցը տխրում են, գուշակելով, որ անեցիներից մինը պիտի մեռնի:

Ընդհանրապէս շանը չեն սպանում և նոյն իսկ զրող չեն չափում, մեղք համարելով այդ:

Պատմում էին, թէ մի անգամ շորս կին Մելիքենց տանը գորդ էին զործում օրական 10 կոպէկ վարձատրութեամբ: Սոնա անունով մի կին այդ վարձատրութիւնը քիչ համարելով սկսում է տանտիկնոջ բացակայութեան միջոցին դրդուել միւս կանանցը և առաջարկել այլևս չաշխատել, մինչեւ որ վարձը չբարձրացնեն: Այդ միջոցին շունը, որ բոլոր ժամանակ միքիչ հեռուն հանգիստ պառկած էր, առանց հաշելու յանկարծ յարձակում է Սոնայի վրայ և կծում: Միքանի օր յետոյ, երբ զորդը աւարտելու վրայ են լինում, «սրբրդաթայ» (աւարտելու առիթով նույը) են ուզում: Ֆանտիկինը փեթակի մեղրը կտրում է, լաւ մասը պահում, վատ մասը տալիս այս բան անող կանանց: Սոնան դարձեալ սկսում է վատ խօսել տանտիկնոջ մատին, նրա բացակայութեան միջոցին, բայց այս անգամն էլ նոյն իմաստուն և բարի կամեցող շունը լուելեան յարձակում է Սոնայի վրայ և կծում նրան: Այս և այսպիսի շատ անցքեր համոզում են գիւղացիներին, որ շան ներկայութեամբ վատ չխօսեն նրա տիրոջ մասին: Մի աւանդութիւն ասում է, թէ Աստուած կենդանիներին ստեղծելիս գալիքն հոտառութիւն տուեց, իսկ շանը՝ ոյժ: Գալիք յարձակուեց մի գոմէշի վրայ և ուզում էր պատռուել նրան և երբ չկարողացաւ՝ դարձաւ Աստծու մօտ և խնդրեց իրեն ոյժ տալ և ոչ հոտառութիւն: Աստուած կատարեց նրա խնդիրը, առաւ նրանից հոտառութիւնը տուեց շանը, իսկ նրա ոյժը տուեց գալիքն: Սակայն շունը նոյն հոտառութեամբ աւելի ապահով վիճակ ստեղծեց իւր համար, քան զայլը իւր ուժով:

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ սկզբում գալիքը էին բնակլում մարդկանց մօտ, իսկ շները ապրում էին անտառում: Մի օր շները եկան խնդրեցին գալիքը, որ թոյլ տան իրենց մնալ մարդկանց մօտ, մինչեւ որ կառողանան, իսկ մինչ այդ իրենք գնան անտառները: Գալիքը մեղքացան հիւանդ շների վրայ և նրանց զիջան իրենց տեղը, սակայն շներին շատ դիւր եկաւ մարդկանց կենակցութիւնը և չկամեցան այլևս վերադառնալ անտառը: Դեռ մինչեւ հիմայ էլ, գալիքը անտառից հարցնում են շներին. առողջացաք, վերադարձէք, իսկ սրւնք ոռնում են իրենց ցաւերից տանջուիլը ցոյց տալու և հաջում՝ ասելու՝ թէ դեռ չեն լաւացել:

Կատու.—Նոյի տապանում ապաստանած միջոցին՝ առիւծը փռնջտացել է և նրա քթից ընկել է կատուն: Այս պատճառով էլ սա նրան սաստիկ նման է^{*)}:

Լաւ է մի մարդ սպանել, քան մի կատու:

Կատու սպանողը եօթը եկեղեցի պիտի շինի, որ մեղքից ազտոտուի:

Արջ.—Սա սկզբում մարդ է եղել, ջրաղացպան, բայց որովհածու անարդաբար է վերաբերուել դէպի հացահատիկները, այս պատճառով և արջի է կերպարանափոխուել:

Կապիկ.—Սա մի ժամանակ մարդ է եղել և ներկարարութեամբ (պոյաճութեամբ) պարապել: Սակայն աշխատելուց առաջ երբէք չէ խաչակնքուել և կամ աղօթել, ուստի և Աստուած անիծել է նրան և կապիկ դարձրել: Եւ այս է պատճառը, որ կապիկի եղունգները կապտագոյն են:

Զորի.—Յիսուս Երուսաղէմ գնալիս պատուիրեց իւր աշակերտներին, որ մօտակալ գիւղեց մի էշ և մի չորի բերեն: Նըրանք էլ բերին: Քրիստոս նստաւ ջորու վրայ, բայց սա աքացի տուեց, ուստի և Տէրը անիծեց ջորուն ասելով, «Անիծեալ լինիս և չծնես երբէք»: Այդ ժամանակից սկսած ջորին զաղաքեց ծնելուց:

^{*)} Մինի սաստիկ նմանութիւնը ցոյց տալու համար ասում են. քթիցն ընկած է:

ՏԵՐԵԲԻ ԵՒ ՔԻԶԻՔԱԿՆ ԵՐԵՒՈՑԹԱԵՐԻ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

Երկինք.—Մի ժամանակ երկինքը շատ մօտ է եղել երկրին. մի օր մի կին ցորնի հասկով սրբել է երեխայի աղտեղութիւնը և վերև շպռտել: Երկինքը, որին դիպել է այդ հասկը, բարկացել է և վերև բարձրանալով անիծել ցորենին, որ այլևս հառկ չտայ: Այդպէս և եղել է, ցորենը, որ առաջները ամբողջովին ծածկւում էր հասկով ցցւում է դատարկ ցողունով: Իսկայն շները մկանում են կոնճ-կոնճալ և հայ խնդրել երկնքից: Ի վերջոյ երկինքը մեղքանում է շներին և պատուիքում ցորենին՝ միմիայն ծայրում մի փոքրիկ հասկ բռնել: Բայց մարդիկ այդ շների բաժինն էլ նրանցից խլում են և իրենք սննդւում դրանով:

Արեւ.—Արեածագին պառաւ կանայք դառնում են դէպի արեգակը, խաչակնքւում և աղօթում: «Դնսդկանը առաջին անգամ արև տեսնելիս՝ խաչակնքւում է. նորածնին առաջին անգամ տանից դուրս հանելիս դարձնում են դէպի արեգակը և աղօթում. «Ա՝ մըրբմէր ըրէքնակ, տիւ իմ ըրեխիս պահես»: «ա ըրէքնաք, իմ իրեսս քու վետի տակը, տիւ իմ բալէքը պահես»: Մարդը մեռնելիս երեսը դէպի արեգակն ան դարձնում և այդ ուղղութեամբ էլ թաղում: Արեով օրհնում են, ինչպէս՝ ասպիր արեգ, կանաչ արև ըլիս, երկար արև ըլիս. արեով անիծում, ինչպէս՝ արեգ մեռնի, արեգ խաւարի: «Նոյն արեով երդում են. Արել վկայ, արեգ վկայ, քոռ եշեմ արեկն... արել իմ բէալան (պատիժ) տայ, էն արդար ըրէքնակը վկայ ա. իմ փաչ ըրէքնակը խւարի թա ես...».

Պատում են, թէ սկզբում արել շատ մօտ է եղել երկինք. մի օր մի կին սրբել է իւր մանկան աղտեղութիւնը և շորք վերև ձգել: Սա դիպել է արեգակն և նա բարկանալով բարձրացել է վերև, հեռացել մարդկանցից:

Մի անգամ հարսներները հարս ու փեսայի հետ անցնում էին Քափաս լեռով, երբ արեւ սկսեց մայր մտնել: Թագուորը խնդրեց արեգակին մի քիչ սպասել, մինչև որ վտանգաւոր տեղը կանցնեն: Բարի արեգակը սպասեց, բայց երբ մեր

բարձրացաւ. իւր մօր մօտ, սա սաստիկ բարկացաւ նրա վրայ ուշանալու պատճառով: Արեգակը ողատմեց պատճառը, բայց չար մայրը աւելի ևս բարկացաւ և անիծեց հարսներներին, որ քար դաւնան: Իսկոյն կատարուեց մօր անէծքը և բոլոր հարսներները քար դարձան և մինչև այսօր էլ կանդնած են Քափասի ստորոտում:

Լուսին.—Լուսինը նորելիս ամէնքը նայում են նրան, խաչակնքւում և անմիջապէս իրենց հայեացքը ձգում մի բաղդաւոր համարուած երեխայի և կամ դրամի վրայ, որպէսզի այդ լուսնի տևողութեան միջոցում բաղդաւոր լինին կամ շատ դրամ ստանան: Երբ հնար չի լինում բախտաւոր երեխայի և կամ դրամի վրայ նայել, աչքերը երկինք են ձգում, որ գոնէ չար, վատ բանի չհանդիպեն: Մանուկներին բարձրացնում են դէպի լուսինը և աղօթում. «Ա՝ մօր ծոցէն տիւս եկող կարմիր լիներակ, տիւ իմ բեխիս պահես»:

Գորտնուկ (ծօրօճաւկ) ունեցողը նոր լուսնին է նայում և ասում.

«Լուսինը նոր՝

Գորտնուկը չոր»:

Եւ այս այն հաւատով, որ լուսնի գօրութեամբ գորտնուկը չորանայ:

Լուսնի 1, 3 և 7 ծնուածը բարի և երջանիկ է լինում:

Լուսնի առաջին քառորդում ծաղիկ հիւանդութեամբ բռնտածը կը մեռնի, մի որեւէ հիւանդից արիւն առնելը վտանգաւոր հետեւանք կունենայ, նորապսակ զոյզը եթէ թագվերացումը կատարի, կը հիւանդանայ:

Արեգակն ու լուսինը քոյր և եղբայր են համարւում. ըսկըզբում արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն է ման դայիս եղել: Մի օր քոյր արեգակը խնդրել է եղբայր լուսնին, որ իրեն աղատէ գիշերը շրջելոց, որովհետեւ վախենում է, ցերեկն էլ չի կամենում ման դալ, որովհետեւ ամաչում է, բոլորն էլ իրեն են նայում:—Լաւ, ասում է եղբայր լուսինը, որ ցերեկը շրջեր որ չվախենաս, իսկ ես գիշերը կը շրջեմ. և որպէսզի քեզ չնային, առ այս մի թոփ ասեղները և ցցիր նրանց աչ-

քերում, որոնք կընային քեզ»։ Եւ այնուհետև արևն սկսեց ցելելի ման գալ և ասեղներով ծակել իրեն նայողներին։

Արեգակի և լուսնի խառարածը բացատրում են այսպէս։ Մի եօթը գլխանի հրէշ (ուշափ) կայ, որ բնակւում է դժոխուքում։ Երբ նրա ուտեսող պակասում է, նա կատաղած դուրս է գալիս երկիրս կործանելու և բռնում է արեգակի կամ լուսնի առաջը, որ մարգիկ լոյսից և տաքութիւնից զրկուած կոտորուեն։ Սակայն ողորմած Աստուածը նրան կրկին նետում է դժոխքը։ Այս վիշապին վնասելու նպատակով՝ խաւարման միջոցին հրացաններ են ձգում դէպի այդ լուսատուները։

Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ արեգակն ու լուսինը քոյլ և եղացը են եղել. արեգակը գիշերը, իսկ լուսինը ցերեկն են շրջել։ Բայց քոյլը արեգակը վախեցել է գիշերը շրջելուց և յատնել է մօրը, սա էլ պատուիբել է լուսին գիշերը շրջել, և երբ նա ընդդիմացել է՝ մայրը մի ապտակ է տուել երեսին և ստիպել անշուշտ կատարել իւր հրամանը։ Նա էլ խոռված սկսել է շրջել, բայց շուտ-շուտ կամակորւում և թաք է կենում։ Մօր տուած ապտակի հետքերը այժմ էլ նկատելի են։

Աստղեր. — Սրանք բաժանուում են երկուսի՝ բարի և չար։ Բարի աստղի տակ ծնուածը բարի, երջանիկ է լինում, չարինը չար, թշուառ։ Սրանցից իւրաքանչյւրը պատկանում է մի մարդու և երբ վերջինիս օրհասը մօտենում է՝ նրա աստղը վայր է ընկնում և քառասուն օրից յիշոյ այդ մարդն էլ մեռնում է։

Աստղերից Մեծ արջի համաստեղութիւնը կոչում է «Օխթը սնամէր»։ Սրանց մասին պատմում են, թէ դրանք մի ժամանակ եօթը սանամէր են եղել, որոնց ընդհանուր քաւորը քաղցից մեռել է, որովհետեւ իւրաքանչյւր սանամէր մտածել է, թէ միար կը հողալ։ Աստուած այս դէպքը յաւերժացնելու համար, այդ եօթը սանամօրն էլ աստղերի է փոխարկել։

Յարդ-գողի նանապարհ. — Սրան կոչում են դարմանագողի ճանապարհ։ Պատմում են, թէ մի ուղտապահն 45 ուղտ ունէր, մի անգամ յարդը պակասեց. նա գնաց 30 համար դրա-

ցիներից փոխ վերցրեց, իսկ 15 համար գնեց։ Ելկութ անգամ՝ երես չունենալով փոխ խնդրելու, նա փորձեց գողանալ, բայց սաստիկ քամի բարձրացաւ և բոլոր յարդը գողացողի հետ ցրիւ տուեց երկնքում։

Անձեւ. — Ցիսուսը և Ալին միասին ցորեն են ցանել, հընձել, կալսել. բայց բաժանելիս Ալին խել է Ցիսուի բաժինը, որից դառնացած Ցիսուս արտասուել է։ Նրա արտասունքներից գոյացել են անձեւ։

Վերաց. — Երբ երկինքը կապւում է և արտերն ու այգիները սկսում են չորանալ, գիւղացիները և նոյնիսկ քաղաքացիները դիմում են հետեւեալ միջոցների, որ անձրև գայ։

1). Ըստքելով մի երկու մարդ, մի քահանայի հետ ուղարկում են Արթենայ սարը, Արթենայ գերեզմանից մի քար բերելու։ Սրանք պատկերով և աղօթելով բարձրանում են ահագին լեառը, համբուրում Արթեն ճգնաւորի գերեզմանը և մի քար վերցնում, փաթաթում մետաքսեալ թաշկինակների. մէջ և բերում։ Երբ տեղ են հասնում, նրանց դիմաւորում են ահագին բազմութիւն և քահանաներ, ու տանում քարը եկեղեցու աեղանի վրայ դնում։ Հետեւեալ օրը աւազ-երեցը գրկում է այդ քարը և խաչով-խաչվուով՝ քահանաներով ու ահագին բազմութեամբ գնում դէպի այդիներն ու արտերը, թափոր անում և հանդիսաւոր կերպով այդ քարը ձգում մի որեւէ ջրի մէջ։ Հաւատացնում են, թէ անձրևն սկսում է անմիջապէս տեղալ։ Եւ երբ բաւականաչափ գալիս է անձրև, գնում այդ քարը հանում են ջրից, որպէսզի անձրևը դադարի։

2). Երեկոները եկեղեցում հոկում են անում. կանաչք ոտարօբիկ թափուում են եկեղեցի և յորդ արցունքներով անձրև հայցում։

3). Երկու կին լծուում են արօրին, մինն էլ տղամարդի շորեր հազար, մի մեծ զլիարկ զլիսին ծածկած իրը հոտաղ քըշում է կանանց և զետի մէջ մտնելով ջրի ընթացքին հակառակ վարում են։

Երբ շարունակ անձրև է գալիս և արև չի ծագում, քահանայի տանից աւել են գողանում և չոր քարի վրայ դրած կրակ տալիս։

Որոտում.—Առաջները լժոխալը ընդունում էր իր Աստուած։ Մի կոյր մարդ բարկանալով Աստծու վրայ, որ իրեն զրկել է տեսողութիւնից, վերցնում է թժթու լոշ և շպրտում թիսլի վրայ։ Թուխալը սաստիկ բարկանում է, և զոռգուում կոյրի վրայ։ Այդ գուգուոցից առաջանում է որոտումն։

Կաև ասում են.

Երկնքում չար պառաւներին տոպլակների մէջ ձգելով՝ զլորում են, դրանց գուգուոցից յառաջանում է որոտումը։

Եղիա մարզարէն երկնքի վրայ քառաձի կառքով անցնելիս անխւների դառնալուց որբտումն է յառաջանում, իսկ մըտրակի զարկից՝ կայծակ։

Երբ առաջին անդամ որոտում է՝ ասում են.

Քըրէ կարկուտ

Անկաճկիւիք^{*)}

Եթէ առաջին անդամ որոտումը Մարտ ամսի կիսին պատահի, այդ տարի հուձը շատ լաւ կը զինի։

Կարկուտ գալիս վառում են Աւագ Աւրբաթ օրը մի քիչ վառուած և պահուած մոմք, զանգակները խփում, կասկարանքը ձգում դուրս՝ ոտները զէպի վեր։ շամփուրը ցցում գետնին, մի կարկուտ չորս կտոր արում, որպէսզի կարկուտը գաղարի գալ, իսկ արտերը կարկտից ազատ պահելու համար՝ Զատկից մինչեւ Եղիա մարգարէի տօնր բոլոր երկուշաբթի օրերը կիրակի են պահում, մասնաւոր մատաղներ անում, իսկ Եղիա մարգարէի տօնին՝ հասարակաց մատաղ անում, ցանքսերը օրհնում։

Կայծակը խփելիս պառաւները զլիներին քար, իսկ ատամների տակ ասել են գնում և հացառը ձգում դուրս, որպէսզի կայծակը իրենց տանը չխփէ։

Ո Գ Ի Ն Ե Բ Ի Պ Ա Ճ Տ Ա Մ Ս Ո Ւ Ն Ք

Ողիներ բարի եւ չար

Պահապան երեսակ. — Ամեն մի մանուկ մի պահապան Հրեշտակ ունի, որ շարունակ սաւառնում է նրա շուրջը և

*) Ականջը մօտի ատամներ-սեղանատամներ։

պահպանում նրան։ Երբ մանուկը քնում է՝ հրեշտակը թևերը պարզած հսկում է նրա վրայ, սնարի մօտ կանգնած։ Եւ երբ նա զարթնում է՝ սա ձեռին ծաղկի փունջ խաղում է նրա հիտ։ աղու անում, որ ժպտի, կտրում նրա երկարացած եղունդները և գանգուրներ որբում նրա մազերից։ Այս հրեշտակը մնում է երեխալի մօտ մինչեւ այն օրը, երբ նա արտառանում է առաջին հայկական խօսքը։

Սատանաներ. — Գանձակի գաւառի ժողովուրդն էլ սաստիկ հաւատում է սատանաների գոյութեան և հազարաւոր պատմութիւններ ու սնոտիապաշտութիւններ տնի սրանց մասին, որոնք մեծ մասամբ նման են միւս հայաբնակ գաւառներում պատմուածներին։ Արանք էլ նրանց երևակայում են ոլպէս երկար, պոչաւոր, սև արարածներ, երկար մազերով և երկար եղունգներով, ոտների թաթերը յետև դարձած, չուխահազար բնակուում են քարայրներում, ջրազացներում, ամերակ տներում և մանաւանդ Քաջքայ-ձորում, որ գտնում է Գետաշենից Ղարաբուլախ տանող ճանապարհի վրայ։ Այս մի խոր ձոր է, ծածկուած ժայռերով և խիտ ծառերով։ Արանք լինում են նաև Բանանց գիւղի մւտ գոտնող ծակերի ձորում։

Սատանաները իրենց ձայնը համացնելով ծանօթ անձաւութիւնների ձայնին՝ հեշտութեամբ խափում են մարդկանց մթութեան մէջ։

Էդ սատանաները մասնաւորապէս հաջուր են կոչւում, սրանք սկզբում են աներևոյթաբար, վեցցնել հարսերի տօնական հանդէները հազնել, պար բռնել պարել և ապա կրիխն աներևոյթաբար տանել իրենց տեղը զնել։ Հարսերը այս դիտենալով՝ նշիարք են դնում կամ ասեղներ շուլուզում հանդերի վրայ, որ նրանք չհամարձակեն մօտենալ։

Սատանաներն աւելի կանանց են մատենում, քան թէ տղամարդկանց։ Եւրե նրանք իրենց հայկակնքի տօպրտկը ձգում են մարդկանց զլիներին, սրանք սկսում են աշու ձախ հայկանքներ թափին, երբ նրանք իրենց մուշտակն են ձգում սրանց վրայ, ոկտում են կոռեկ, երբ նրանք մտնում են սրանց աչքերը և այնտեղ պար բռնում, սրանք կատաղում են և կա-

մենում են ամէն ինչ կոտրել, փշը Եւ երբ բուն են դնում սրանց սրտերում, սրտնք ընդ միշտ դառնում են նախանձու, չարասիրտ և խռովարար:

Սրանց մասին պատմում են հետևեալները.

Գետաշէնում մի նշանած աղջկայ մի գիշեր քաջքերը կանչում տանում են և իրենց հետ ման ածում: Սա տեսնում է, որ դրանք իւր բարեկամների շորերը հազած պար են դալիս. գնում իւրոտում է ձեռքերը և իւր եղբօր կնոջ (աղբարակնոջ) հանդերձով սրբում: Հետևեալ օրը պատմում է այս դէպքը իւր տնեցիներին և երբ չեն հաւատում, ցոյց է տալիս աղբարակնոջ շորերի վրայ մնացած իւրոտ մատների հետքերը: Այդ ժամանակ բոլորը հաւատում են և «քաջքատարած» են կոչում նրան: Նրա նշանածը հրաժարում է ամուսնանալ նրա հետ և մի քանի տարի ուրիշ ուղղողներ չեն լինում: Վերջապէս մի աւելի սրտոտ երիտասարդ ամուսնում է հետքը: Սա պատմում էր, թէ երբ երեկոները դուրս էր դալիս, սատանաները յետեից գոչում, կանչում են... Ասում են, թէ այդ կինը շատ ճարպիկ էր, ստուանի պէս մի ժամում մի գուլպայ էր գործում:

Թաքուն-այանի պապը ամէն օր անցնում էր ձիով քաջքաց ձորով և գնում գալիս Ղարաբուլախ: Նա ամէն առաւոտնկատում էր, որ իւր ձին արիւն քրտինք է մտած լինում ախոռի մէջ: Հարցնում է սրան, նրան, և ՚ի վերջոյ մի պառաւի խորհրդով կուպը է քսում ձիու մէջքին: Հետևեալ առաւոտ գալիս տեսնում է, որ մի սատանայ նստած է ձիու վրայ և կպել կուպըից. իսկոյն վերցնում է մի ասեղ և փոխանակ ծալրից, միւս կողմից շուլուում է նրա կրծքին: Սա սատանայ է լինում և ծառայում է սրանց տանը եօթ տարի շարունակ: Ճատ արի, կտրիճ է եղել, միայն ինչ որ ասել են, նրա հակառակն է արել. այս պատճառով էլ Թաքուն-այայենք սովորել են միշտ իրենց ցանկացածի հակառակն ասել, որպէսզի իրենց ցանկութիւնը կատարէ: Եօթ տարին լըանալիս այս սատանան ցեխոտում է իւր ձեռքերը և մօտենալով մի երեխայ՝ խնդրում է հանել իւր կրծքից ասեղը, պատճառաբանելով թէ իւր ձեռքերը ցեխոտ են, չի կարող ինքը հանել: Երեխան ան-

դիտակցօրէն կատարում է սատանի խնդիրը, և սա անիծելով Թաքուն-այանենց ամբողջ տոհմը՝ անյայտանում է:

Հայթուխները իրենց կրծքերին ասեղ կամ պողպատի կրտոր են շուլուում, որպէսզի գիշերները ուշ տուն վերադառնալիս սատանաները չխփեն իրենց:

Օրօրոցագող. Երբ մայրը երեխային ծիծ տալիս քնով է անցնում և իւր ծծով ծածկելով նրա քիթն ու բերանը նրան խեղդում է, ժողովուրդը նրա մահը ոչ թէ նրա մօրը, այլ մի տեսակ քաջքերի է վերագրում, որոնց կոչում է «օրօրոցագէ՛ող»: Սրանք իւր գողանում են մանուկներին և սպանում: Այսպիսի քաջքերից երեխաներին ազատ պահելու յուսով օրօրոցի մէջ նշիարք, համայիլ, խողի մազ են դնում, բարձին ասեղ շուլուում: Եւ երբ նկատում են, որ օրօրոցագողը զալիս է երեխային տանելու և սա խոխոցը զրել է՝ իսկոյն նրա շորերը պատառելով հանում են և տան հերթիկից դուրս ձգում. յետոյ մի քոռամեխ, մի ձու և մի քիչ խողի մազ թաղում օրօրոցի մօտ: Այս ժամանակ արդէն երեխան յետ (ուշքի) է գալիս: Հետևեալ օրը երեկոյեան մի կտոր հացի վրայ աղ են ցանում, ունելիքով մի կտոր կրակ վերցնում, հացը երեք անզամ երեխայի գլխովը շուռ տալիս ասելով. «Թեխիս չուը, ցաւը տար:» Յետոյ նախ կրակը և ապա հացը շփուտում են դուս, ասելով. «Քու փայը հս է, առ քընա:»

Օրօրոցագողերը ժամկոչներից սաստիկ վախենում են, ուստի և հոգատար մայրերը քառասունքի օրերում կանչում են ժամկոչին օրօրոցի վրայ աղօթքներ կարդալու, որպէսզի նրանք չհամարձակուին մօտենալու:

ՀՐԵ. — Սրանք վիթխարի, մարդակերպ էակներ են, միքանիսը միականի, սաստիկ ուժեղ, բայց և սաստիկ միամիտ: Բնակում են առաւելապէս անտառներում, ալրերի մէջ: Սրանք սիրում են կենակցիլ մարդ կանանց հետ, ուստի և ամէն միշոց գործ են գնում նրանց ձեռք բերելու: Մի աւանդութիւն ասում է, թէ այսպիսի մի հրէշ կամեցել է Գետաշէն զիւղից մի աղջկայ կնութեան տանել, բայց երբ աղջկայ ծնողներն ու զիւղացիները թոյլ չեն տուել, նա բարկանալով գնացել մի ա-

Հաղին ժայռ է բերել, որ զիւղի թմբից զլորի և ամբողջ գետաշէնն աւլիքի: Բայց բարեբաղպաբար Պանտը տեսել է նրան և խղճալով զետաշէնցիներին, լւը նիդակով խփել է նրան և քեսուել նոյն այն ժայռին, որ շալակած տանում էր: Հէնց այժմ էլ այդ ահազին ժայռը կանդնած է զիւղի զլիսին և նրա լանջին նկատելի է հրէշի ամբողջ գծագրութիւնը:

Սրանց մի ուրիշ տեսակը, որ ո-շե՞ք է կրցւում, եօթը զըլ-խանի է, ամէն մի զլիքի վրայունի քառասուն բերան և ամէն մի բերանում քառասուն ատամ։ Նա ապրում է դժոխքի խոր-քերում։ Սատանաները օր ու գլշեր սպասաւորում են նրան, նրա համար զոհեր տանում մեր այս մեղսալի աշխարհից։ Նա ծարդկանց ողջ ողջ կուլ է տալիս, բայց երբէք չի կշտանում։ Նրա փորում կրակ է վառւում, որի բոցերը դուրս են թափ-ռում բերաններից և քթածակերից։

Խորթլաղ. — Երջեմն մահմետական ննջեցեալները զիշեր-
ները շների են փոխարկում և շրջում գերեզմանատանը, այցե-
լում իրենց բարեկամների տները, ուր՝ ճանաչելով նրանց, ըն-
դունում են և կերակրում: Հայ զիւղացինքի ասելով մահմեղա-
կան տներում զիշերները օջախի մօտ կերակրներ են դնում
բատկապէս իրենց ազգական ննջեցեալների համար, որոնք շան
կերպարանքով դալիս են ուտում այդ կերակրուները և կրկին
լուսաբացին մօտ վերադառնում գերեզմանատուն և դիակ դառ-
նում: Բայց երբ այդ շան կերպարանք ստացած ննջեցեալները
համերի տուն են դալիս և արդելում, առաւօտեան, արև ծա-
գելուն պէս՝ կրկին դիակի են փոխարկում, և այդպէս մնում
մինչեւ զիշեր, երբ կրկին շուն են դառնում: Եթէ կամենում
են, որ դրանք դադարեն կերպարանափոխուելուց, դիակ դա բ-
ձած միջոցին կտրում են նրանց դլուխները և դնում ոտների
տակ ու այդպէս տանում թաղում և կամ մոլլան խաչակնքում
է գերեզմանը:

Արանց մասին կան ըաղմաթիւ պատմութիւններ, որոնցից գլշենք մի երկուսը:

Մի հայ զիւղացի գլշերելով մի մահմեղականի տնում՝
առևսնում է որ տանտիկլնը մի մեծ ամանով կերակոր դնում

Մի ուրիշ հայ գերզացի էլ մահմեղականների գերեղամա-
նատան մօտով անցնելիս մի փոքրիկ շուն է տեսել և հետը
բերել տուն, դոմում մի քթոցի տակ դրել, որ չփախչի։ Սա-
կայն երբ առաօտեան վերցրել է քթոցը շունը հանելու, տե-
սել է մի փոքրիկ, մահմեղական երեխացի դիակ։ Հասկանալով
որ դա խորթաղ է, սպասել է մինչև երեկոյ և երբ նա կրկին
շահմանափոխուել, վերցրել է և տարել մահմեղա-
շահմանափոխուել, կանոնական ձգել և ինքը փախել։

վասալ է ի և կամ եկած հիւրը ստիպուած է գնրնզան
Եթէ իրիկնաղէմից եկած հիւրը ստիպուած է գնրնզան
նատան մօտով վերադառնալ, այդ երեկոյ այդ տանը ճրագ չեն
վառիլ, որպէոզի խորթլաղները չկախեցնեն այդ հիւրին, գե-
րեզմանների մօտով անցնելիս:

3 u h b f

Յաւերը երեխաների նմանութեան ողիներ են, որ աներև-
ոյթաբար շըջում են և ում սև ձիպոտով խփում են, սա հի-
23

ւանդանում մեռնում է, իսկ սև կանաչ ճիպոտով են խփում, հիւանդանում, բայց էլի առողջանում է: Սրանք բոլորը ման ածողներ ունեն, արսինքն ստիպում են մի կնոջ, մի տղամարդի, որ իրենց առաջնորդէ և ման ածէ այն բոլորի տները, որոնց մասին յանձնարարութիւն են ստացել նրանք Աստծոց: Միայն ջերմը ման ածող չունի, ինքն իրեն է ման գալիս: Կարնակում է մենաւոր կաղնու մէջ: Ջերմ ունեցողը իւր վրայից պատռում է կանաչ կարմիր կտորներ, տանում ադրպիտի ծառերից կապում, յուսալով, որ ջերմը անցնելով կտորին՝ կանցնի կաղնու մէջ և այնտեղ կը բնակուի ու իրեն ազատ կը թողնի:

Ծաղկամայրը, որ ծտղիկ հիւանդութիւնն է տալիս, շատ քնքոյշ էակ է, նա արիւն չի սիրում, ուստի և նրան դոհեր չեն մատուցանում:

Կարմիր քամին (թօշա) մկնատամը իրենց օջախներն ունեն, որոնց հողը ջրով շաղախելով քսում են հիւանդութեան ենթարկուած տեղի վրայ, իսկոյն լաւանում է:

Վ Ս Բ Ե Բ Ր

Նախատակ.—Բանանց, Խաչակապ, Փիբ, Կիրանց և Քարհատ գիւղերին մօտիկ, Պուշկորա գետի աջ ավելից քիչ բարձր գտնուում է «Նահատակ» ուխտատեղին: Այստեղ մի ժայռ քար կալ ցցուած, որի մօտ մի հայրի ծառ տարածել է իւր սաղարթախիտ ճիւղերը, բազմաթիւ շորի կտորներով կապկապուած: Մի քիչ հեռու մի աղբեւր է կարկաչում:

Ամեն տարի, առաւելապէս մեծ պարի աւագ չորեքշաբթի օրը, որ ժողովրդի բարբառով Զիք չորեքշաբթի է կոչում, շրջակայ գիւղերից բազմաթիւ մարդիկ, մանաւանդ երիտասարդներ և չափահաս աղջիկներ գալիս են այստեղ ուխտ: Գարնան սկիզբներին հարսներն ու աղջիկները «հարսի մանուշակ» (ամենամուգ մանուշակ) են քաղում, զարդարում իրենց կրծքերը և ապա բերում շաղ տալիս Նահատակի գերեզմանի վրայ

Աւանդութիւնն ասում է, թէ այդ նահատակը Վարդան անունով մի կտրիճ երիտասարդ է եղել, որ լեռներում առանձ-

նացած՝ աւազակութեամբ է պարապել: Նա կռուել է վատ և անօրէն մարդկանց հետ, այն էլ ճակատ առ ճակատ և ոչ գաղտնագողի, թիվերի տակից: Երբ նա պատահել է մի անգէն մարդու, նրան ձեռք չէ տուել, այլ միայն ասել է, թէ միւս անզամ այս ճանապարհով անցնելիս զէնք վերցրու հետդ, որ ես կարողանամ քեզ ցոյց տալ, թէ ինչպիսի մայր է ծնել ինձ: Իսկ երբ կռւում անձնատուր են եղել, նա վերցրել է թուլասիրտ հակառակորդի սուրը, միջից կոտրել ասելով. «Նամարդ (անազնիւ), դու արժանի չես վրադ թուր կրելու, որ չկարողացար ներկել քո թշնամու արիւնով: Նալաթ (ամօթ) քո տղամարդութեանը, հարամ ըլի վափախդ, գնա ու գլխիդ կնկայ լաչակ կապիր»:

Մի անզամ, վարդավտուին Բանանց գիւղի աղջիկները վիճակ հանելիս դուրս է եկել, որ Նախշուն անունով լսի կտոր աղջիկը Վարդանին է վիճակուած: Այս վիճակը հասնում է Վարդանի ականջին և նա մի տօն օր իջնելով Բանանց գիւղը՝ պարի ժամանակ շորոշ է տալիս Նախշունին և սա սիրով ընդունում է:

Վյոնուհետև Վարդանը գարնան սկզբներին հարսի մանիշակ, մայիսին կուսանց վարդեր, իսկ ամառը եղա-ծաղիկ վիճակուած: Եր Նախշունին նրա ջուր գնացած միշտին: Ջեր կապած ուղարկում էր Նախշունին նրա ջուր գնացած միշտին:

Նախշունի գեղեցկութեան լուրը հասնում է և գանձակի խանին, որ վեց մարդ ուղարկում է Բանանց՝ Նախշունին փախցնելու և իւր մօտ բերելու: Սրանք բռնում են Նախշունին ցընելու և իւր մօտ բերելու: Սրանք բռնում են Նախշունին գնալիս, դնում ձիու վրայ և փախցնում: Գիւղի երիտարդի կտրիճները նրանց յետելից են ընկնում, բայց Նախշունին շեն կարողանում ազատել: Բոթը հասնում է Վարդանին, սա կրակ կտրած յարձակում է դրանց վրայ Մկեց աղջիկների մօտ, չորսին գետին գլորում, երկուսին վախցնում և ազատում Նախշունին:

Ճուտով վրայ են հասնում Նախշունի ծնողները, Վարդանը յանձնում է նրանց ազատուած Նախշունին, և խնդրում նրա ձեռքը: Ֆնողները սիրով համաձայնում են, միայն իննդրում են սպասել մինչեւ համբարձում, որինաւոր կերպով պատակը կատա-



թելու։ Սակայն խանը իմանալով իւր մարդկանց պարտութիւնը, մեծ զօրք է ուղարկում Կուշդարի հովիտը, Վարդանին գտնելու։ Տմբլալ ձորում Վարդանը նրանց հետ կռուի է բոնում և սաստիկ ջարդ տալուց ինտոյ ինքն էլ ընկնում։ Ընկերները նրան թաղում են սև ժայռի տակ։ Այս բոթը լսում է Նախշունը, և չիք չարեքշաբթի օրը ծնողներից ծածուկ գալիս ընկնում է գերեղմանի վրայ և աղի արցունքներ թափում։ Նրա արցունքները վտակում են ու կազմում այն փոքրիկ աղբիւրը, որ այնպիսի տիտոր կարկաչով դուրս է ցայտում ժայռի մօտից։

Ծնողները գալիս բաժանում են Նախշունին Վարդանի գերեղմանից, սակայն նա հիւանդանում և գնում է յաւիտենականութեան մէջ միանալու նրա հետ *):

Իմամ-զադաւ.—Մի հայ երիտասարդ մի թիւրք խանի տան ծառայելիս չի պատասխանում նրա կնոջ հրապոյրներին, ուստի և վերջինս ամբաստանում է նրան խանի առաջ, իր թէ սա կամենում էր իրեն մոլորեցնել։ Խանը անմիջապէս սպանել է տալիս երիտասարդին, որի վրայ լոյս իշնելով ապացուցում է արդար լինելը, ուստի և՛ հայերը սկսում են պաշտեն նրան։

Արթեն ճգնաւոր.---Սա սարսափելի ցըտերի միջոցին բարձրացել է այժմ իւր անունը կրող լեառը և այնտեղ ճգնել, իսկ սաստիկ շոգերին իջել Երասիսի հովիտը և այնտեղ տանջել իրեն։ Նրա գերեղմանը այժմ գտնում է համանուն լերան վերայ և հրաշագործ է։ Երաշտ ժամանակ գալիս քար են տանում այդ տեղից, որ անձրև գայ ։):

ՊանՏը կամ Պանտալէօնը մի թուրք տղայ է եղել, որ շնորհնել է քրիստոնէութիւն և իւր քրոջ հետ միասին փախել տանից։ Թուրքերը հետեւել են նրանց և նահատակել եղքորը այն լիրան վերայ, որ այժմ նրա անունն է կրում, իսկ քրոջը դնում են մի պարկի մէջ և լեռից զլորում։ Սա գալիս

*) Այս ժողովրդական աւանդութիւնից պ. Ս. Տէր-Աւետիքեանը մի գեղեցիկ վեպիկ է շինել „Նահատակը“ անունով, որից մենք հանեցինք բուն աւանդութիւնը,

*) Տիս՝ Երաշտ.

ընկնում է Մուռութի մօտ, այժմեան նահատակի տեղը, ուր վրայ են հասնում թուրքերը և նահատակում։

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

Կարկտագիր.—Կախարդութեամբ պարապող մարդիկ կանշատ գիւղերում, բայց բոլորից նշանաւոր համարում է բանանցեցի Գրբաց Ակոբը։ Սա ունի մի քանի ձեռագիր Սողոմոնի, Վեցհազարեակ, Հաւախոս և այլ զրքեր, որոնց օդնութեամբ կարողանում է զուշակութիւններ անել, կորուստներ գտնել, զողի տեղն լիմանալ, մինի սէրը զրաւել, սիրահարներին զըդտեցնել միմեանցից և այլն։ Բայց այս բոլորը անում են և միւս զրբացները, բանանցեցի Յակոբի վառքը կայանում է նըրանում, որ նա միայն կարող է կապել երկինքը կարկտից, արգատել զիւղացու ապրուստի միակ միջոցը կարկտի աւերիչ հարուածներից։ Եւ այս հետեւեալ միջոցով։

Համբարձման օրը միւս մատաղների հետ մորթում են և մի չալ այծ, որի արիւնով ինքը Յակոբը զրում է թղթի վրայ հետեւեալը։ «Մեծ և երաշնորհ Տեառն մեր տէրն Յիսուս Քրիստոս յորժամ երթալը յերուսաղէմ, հարցին ցնա աշակերտքն ։ Ինչ արացուք, յորժամ դայ ամպ կարկտից։» Պատասխանի նոցա տէրն մեր Յիսուս Քրիստոս։ «ասացէք Առառի Մատուկ գէծ-գէծ։»

Ահա այս զրուածը ոլորում, անց է կացնում եղեգնի կամ մի ծակ փայտի մէջ, երկու ծայրը ամրացնում և տանում արտի կամ այդու մօտ մի բարձր տեղ տնկում։ Ահա այս աղօթտի կամ այդու մօտ մի բարձր տեղին խփի։ Բանանցի, քը թոյլ չի տալիս, որ կարկուտը այդ տեղին խփի։ Բանանցի, սրա շրջակայ և նորինսկ Փանձակի շատ արտերն ու այլիները ամէն տարի այսպէս ապահովագրուում են։ Եւ որովհետեւ ապահովողների թիւը չափազանց մեծ է և Գրբաց Յակոբը ահովագրողների թիւը չափազանց մեծ է և Գրբաց Յակոբը ամէնի համար չի կարողանում ինքը զրել, ուստի թոյլ է տալիս, որ ուրիշներ արտագրեն այդ աղօթքը. միայն որպէսզի դա իւր զօրութիւնը չի կորցնի՝ պահանջում է որ տառ առ տառ արտագրեն, առանց իմաստն ըմբռնելու։



Գարի ցկել. — Մեծ մասամբ գարի ցկողները կանալք են լինում: Նրանք այս միջոցով գուցակում են, թէ հիւանդութիւնը ո՞ր սուրբն է տուել, թէ կորած իրը ուր է կամ ում մօտն է, թէ մտաղբուած խորհուրդը կրկատարուի թէ ոչ:

Իւրաքանչիւր գարի ցկող ունի երեք գարի, որոնցից մինը արծաթապատ է, և կամ երկու ցորեն և մի գարի: Կա արանց պահում է մի մետաքսեալ թաշկինակի մէջ մեծ յարգանքով, որոշեալ սրբութիւն վերագրելով նրանց:

Գարի ցկելիս թաշկինակը փաթթում է ձախ ձեռին, գարիները գնում այդ ձեռի ափին, նշանակում թէ այս գարին այս ինչ սուրբը կամ այս ինչ մարդն է նշանակում. ապա աջ ձեռը դնում է ձախի վրայ, Յիսուս Քրիստոս ասելով երեք անգամ թափ տալիս, աջ ձեռքը վերցնում և նայում, թէ արծաթապատ գարին կամ ցորենը ո՞ր գարու մօտ է ընկել, նրանից էլ յառաջացել է հիւանդութիւնը և կամ նրա մօտ է գտնուում կորուստը:

Գարի ցկողը մեռնելիս զարիները տալիս է իւր ամենասիրելին և այնուհետև այս վերջինն է շարունակում գուշակութիւններ անել, ստանալով նրա օրհնութեան հետ և նրա ունեցած շնորհքը:

Վիճակի ջրով ևս գուշակութիւններ են անում այսպէս. Համբարձման վիճակը հանելուց յետոյ վիճակի ջուրը ածում են մի քետով (գաւաթ) մէջ և երկու բութ մատերը միմեանց յենած երկու ցուցամատով բռնում են գաւաթը և սկսում սրբերի անուններ տալ. որի անունը տալիս զաւաթը դէպի աջ պտտուի, նրանից է առաջացել հիւանդութիւնը կամ անյաջողութիւնը. իսկ եթէ ձախ պտտուի՝ նրանից չէ:

Մի քանի տեղեր երկու մարդ են բռնում զաւաթը իրենց բութ մատերով, իսկ քաղաքում միմիայն մի մարդ՝ երկու բըթով, միւս մատերը ծածկած:

Խաչ բցի. — Որպէսզի գուշակեն, թէ անելիք ճանապարհորդութիւնը լաւ թէ վատ հետևանք պիտի ունենալ, գնում են Խաչակապ գիւղի մօտ գտնուած Խաչ-այի մատուռը*), 5—10

*) Այս մատուռը նոր են կառուցել այն խաչարի վրայ, որ ընկած էր մի կինաւուց, փտած կաղնու տակ:

մանրիկ քարեր վերցնում և բոլորը միսախն ձգում մատուռի մէջ գտնուած միակ խաչքարի վրայ. եթէ քարերը խաչաձեզ գասաւարուեցին, ասել է՝ թէ ճանապարհորդութիւնը «բարի» է, իսկ եթէ ոչ «չար», պէտք է յետ կենալ: Եւ շատ շատերն այլես չեն շարունակում ճանապարհը՝ եթէ «բարի» չի գալիս: Ռորիշներ և մանաւանդ կանալք նոյն կերպ գուշակում են թէ իրենց իղձերը կատարուելու են թէ ոչ:

Գիլ-կապ. — Երբ մի անասուն է կորչում, գիլ-կապ անող պառաւներին խնդրում են գալլերի բերանները կապել, որպէսզի կրած անասունին չուտեն: Սրանք էլ կամ թել են վերցնում, մատի վերայ փաթթում և հանգուստում և կամ մի գրչահատ, բերանը բացանում և ապա փակում և այդպէս պահում: Այս երկու դէպքումն էլ ասում են հետեւալ աղօթքը.

Գիլ անեմ, գիլ կապ անեմ.

Կորներդ*^{*)} մո-մայ անեմ.

Ոտներդ խոզանի անեմ.

Աչերդ հծորի **^{**)} անեմ:

Մինի սէրը գրաւելու համար. — Նրա շորերի մէջ լոպչոպի իւղ են գցում, շորերի բանքակի հետ բորենու մազ դնում***^{***}):

Ամուսիններն միմեանցից գժտեցնելու նպատակով գողանում են կնօջ մազերից և երեք անգամ հանգուստում և այդպէս պահում: Երբ կամենում են, որ հաշտուին, հանգուստը արձակում են:

Խաչի դուլ. — Միքանի սրբավայրերում կան սաստիկ ջըդացին և կրօնասէր կամ տղամարդիկի: որոնք իրենց կաչէ շուշ (ծառայ) են կոչում. սրանք աւելում մաքրում են այդ սրբատեղիները, օգտում նրանց եկամուտներից, և ուխտաւորներ եկած ժամանակ ուշաթափում (շառադրամ) և գուշակութիւններ անում Սրանք միքանի համախոհ կանալք են ունենում, որոնք օգնում են ուխտաւորներին կերակուր եփելիս և

*) Ատամները.

**) Կուսաստիկի. Կարծում են թէ լուսատիկի աչքերը չափազանց փոքր են և իրենից արծակուող լուս, ո շացած՝ ոչինչ չեն տեսնում:

***) Մամիկոննեան. Զհասութիւն. Եր., 127.

նրանցից տեղեկանում նրանց դրութեան և ուխտի մասին։ Ապա այս բալորը հաղորդում են խաչի դուլին։ Սա յարմար ըոպէին յանկարծ վայր է ընկում, ձեռներն ու ոտները խփում գետնին, ուշաթափում, ձեռներով ծեծում կուրծքը, անկազ խօսքեր ասում և ապա հետղհետէ հանդարտուում։ Այս ժամանակ ով ուզում է գուշակել տալ, բունում է նրա ձախ ճկոյթ մատից։ Խաչի դուլը կիսաբաց աչքերով նայում է դրան և կցկը տուր ձայնով ասում։

Կաղնի-խաչ, ես քե մատաղ,
Կաղնի-խաչ, ես քու լիս երեսին մատաղ.
Կաղնի-խաչ, ես քու ցաւն ու չոռը տանեմ.
Կաղնի-խաչ, ես քու ոտի տակի հողն եմ.
Կաղնի-խաչ, ես քու դարավաշը, քու ծառան եմ։
Ցետոյ մելամաղձոտ ձայնով երգում է.

Քու ցաւերին կանեն դարման,
Քիր ու ախպեր Կաղնի խաչը.
Չոր-չոր զնա նրանց տակը,
Երեսիդ քսիր նրանց քարերը.
Դնա սիրով ու հաւատով
Թամուզ ու պայծառ սրտով.
Նրանք քեզնից շամբիր կուզեն,
Անձին աշառ ու մատաղ կուզեն։

Պատգամ հարցնողը լարուած ուշադրութեամբ, շատ անգամ արցունքն աչքերին լսում է և կատարում ասածները։ Այսպիսի խաչի դուլերից հոչակ են հանել կիրանց գիւղի մօտ գտնուած վերոխշեալ Կաղնի-խաչի դուլ՝ Բանսնցեցի Նազունց թանգի աքերը և Գետաշէնի ս. Նշանի-դուլ Ակոփը, որ նոյն իսկ մատուան յետևումն է թաղուել։ Սա երկար տարիներ շահագործել է ս. Նշանի մատուռը և խարել ժողովրդին, մինչեւ անգամ հերթիկներից ներս ցատքելով։ ուր նախապէս ծածուկ վերմակներ են բռնած եղել, որպէսզի այդ բարձրութիւնից թռչելիս ոտներն չկոտրուին։

Ն Ա Խ Ա Պ Ա Ճ Ա Բ Մ Ո Ւ Ն Ք

Եթէ հաւը աքաղաղի պէս կանչի՝ պէտք է մորթել, ապա թէ ոչ տանեցիներից մինը կը մեռնի հէնց երրորդ կանչին։

Եթէ հաւը քթիթ անէ՝ անձրև կը գայ։
Եթէ կաչաղակը չւչուայ՝ հիւր կը գայ։
Եթէ կաչաղակը մինի տան մօտ ցախերի վերայ նստի և կչկչայ, այդ տանտէրը կը հարստանայ։

Եթէ մինի տան մօտ բուն բուայ կամ ազուար կանչի՝ տանեցիներից մինը կը մեռնի։

Եթէ կատուն ճանկուտում է գորգը կամ մի որևէ փայտ անձրև կը գայ։

Եթէ շունը քիթը վեր քաշի՝ տիրոջը ամբաղդութիւն կը պատահի։

Եթէ խոզերը մէջք մէջքի տուած նստեն կամ, եթէ դաշտումն են, տուն վազեն՝ անձրև կը գայ։

Գորտին սպանելիս երեք անգամ թքում են իրենց ձեռքերին և ոտներին, վախենալով Աստծու անէծքից։

Եթէ արևով անձրև գայ՝ գալլը կը ծնի։

Եթէ օձ տեսնեն և չսպանեն, բոլոր օձերը կը բարեկամանան։

Օձի շապիկը դնում են զլխարկի մէջ, որպէսզի գլուխը չցաւի։

Եթէ ականջը «կանչում է»—ձայն է տալիո, ասում են թէ մինը իրենց լիշեց։

Եթէ ոտի տակը քոր գայ՝ ճանապարհ կերթայ։

Եթէ աջ բուռը քոր գայ, փող կստանայ, իսկ եթէ ձախը քոր գայ՝ կը տայ։

Եթէ մինը զկոտայ, նշանակում է, որ նա բան է գողացել։

Հիւր կը գայ՝ երբ պատառը վայր ընկնի, դանակը գետին ընկնելիս՝ բերանը վերև ուղղուի։

Զախ աչքը խաղայ։

Երբ իմորը հունցելիս մի կտոր թռչի:
Երբ հացի կտորը սեղանի վրայ կանգնի:
Որպէսզի ճանապարհորդը չվերադառնայ, կճռճ են կոտում յետևից:
Գիշերը գլխաբաց չեն ման գալիս, որպէսզի սատանաները չլսին:

Գիշերը առանց խաչակնքուելու և Յիսուս Քրիստոսի անունը տալու գետից չեն անցնում, որպէսզի «տուրը չտան»—սատանաները չլսին:

Մաղած ալիւրի վրայ խաչ են քաշում, որ քաջքակոխ չինի, —քաջքը չկոխէ:

Փամաժանքին տան դռները բաց են թողնում, որովհետեւ «շառն ու խէրը» այդ ժամանակն են բաժանում:
Ժժմանին—աղջամդին—չեն աշխատում, հաց չեն ուտում,

որպէսզի բաղդ բաժանողը իրենց վնաս չպատճառէ:

Սփռոցը ընթրիկից յետոյ թափ չեն տալիս, որպէսզի տան «բարաքեաթը» չգնայ:

Եթէ ալրուած հաց ուտեն, գալից այլևս չեն վախիլ:

Հացը վայր ձգելը, կամ ալիւրը վայր թափելը մեղք է համարում. ալդպէս անողին Աստուած հացից զրկում է:

Աղջիկներն ու երիտասարդները վիւրի քերանք չեն ուտում, ասկա թէ ոչ՝ նրանց հարսանիքին, եթէ ամառ է՝ անձրւ, իսկ եթէ ձմեռ՝ ձիւն կը գայ:

Աղջկներն ու երիտասարդները փայծաղ և ձուի գեղնուց չեն ուտում, որպէսզի հարսանիքի ժամանակ չսեւանան:

Սխտորի կճեալը կրակը չեն ձգում, մեղք է:

Սխտորը ձեռքից ձեռք չեն տալիս, որպէսզի աչքերը

չցաւի, այլ վայր են դնում, որ միւսը վերցնի:

Երազում՝ եթէ տեսնեն, որ գլխարկը վայր ընկաւ՝ նշանակում է, որ կինը պիտի մեռնի: Եթէ բոլոր ատամները թափուեն՝ պիտի հարստանան: Եթէ ագռաւը թոնրատնից հաց պիտիցնէ, տնեցիների մին կը մեռնի:

Հիւանդութիւն տարածուած տեղում եթէ մի քահանայ վախճանուի, հիւանդութիւնը կը վերջանայ:

Եթէ մինը կարողանայ իւր արմունկը համբուկել, իսկոյն թռչուն կը դառնայ: Ֆիածանի տակից անցնողը եթէ տղայ է՝ աղջիկ, իսկ եթէ աղջիկ՝ տղայ կը դառնայ:

Ն Ճ Ա Ն Ա Ի Ո Ր Տ Օ Ն Ե Ր.

Նոր-տարի.—Սա բաւական անշուք է անցնում թէ քաղաքում և թէ մանաւանդ գիւղերում: Առհասարակ ոչ խանութները և ոչ արհեստանոցներն են փակում, ուստի և շատ քչերն են ացելում միմեանց: Քաղաքում առաւօտ վաղ պատարագ են մատուցանում, որպէսզի տարին լաւ անցնի: Ացելելով միմեանց շնորհաւորում են նոր-տարին և բարեմախտում առողջութիւն և յաջողութիւն: Ացելուներին հիւրասիրում են սուրճով և ընկոյզի ու նշի գողինաղով: Գիւղերում ացելողները խնձոր կամ կիտրոն են տանում իրենց հետ և մի մի հատ տալիս ում որ շնորհաւորում են: Սրանց հիւրասիրում են օղիով և չոր մրգեղինով:

Մի քանի տներում դռան ճակատը զարդարում են կարմիր թելերով, որպէսզի նոր-տարին էլ կարմիր, ուրախ անցնի:

Ուրիշ տեղեր եղած ծանօթներին և աղջականներին այցետումս ուղարկելու եւրոպական սովորութիւնը քաղաքում հետղետէ ընդհանրանում է:

Ծնունդ եւ Մկրտութիւն Քրիստոի.—Շրագալոյցի գիշերը, ասում են, զետը մի բոսէ կանդ է առնում. եթէ այդ միջոցին մի որևէ իր զնեն չուրը՝ իսկոյն արծաթ կամ ոսկի կը գառնայ. իսկ եթէ քար զնեն՝ դա ամէն տեսակ հիւանդութիւններ բուժելու շնորհը կտանայ: Ամուլ կանալք այս զիշեր երեք անդամ ընկղմուում են զետի մէջ, որպէսզի երեխայ ունենան:

Սուրբ Սարգիս.—Առաջաւորաց պասը այս գաւառում ևս յայտնի է որպէս Սուրբ Սարգիսի պաս: Ամբողջ հինգ օր պաս, և շատերը՝ միածում են մնում, այսինքն օրը միայն մի անգամ, կէսօրին են ճաշում: Այս շաբաթուայ ընթացքում ծանր

գործեր չեն անում, ոչ ճախարակ մանում, ոչ բռւրդ զգում և ոչ լուացք անում, որպէսզի Սուրբ Սարգսի ձին չահթաքը: Նոյնիսկ եղջերուն Աստծու հրամանով այս շաբթուն այնպէս չի շարժում, որ վրայից մազ թափուի և սուրբ Սարգսի ոտներին փաթաթուի:

Հաւատալով, որ Սուրբ Սարգսի այդ շաբթուայ ընթացքում քաղցած է մնացել և ուրբաթ օրը ցորենի հասկերը փշրելով իւր բռում կերել է, իրենք էլ ի լիշտակ այդ անցքի, նոյն այդ ուրբաթ օրը ցորենից փողինց են անում և ուտում: Երիտասարդ տղաներն ու աղջիկները նոյն գիշերը աղի բլիթեն ուտում, որպէսզի երազում տեսնեն, թէ ով կրգայ իրենց ջուր տալու, միանգամայն հաւատալով, որ նա պիտի լինի և սպասած ամուսինը:

Ճաբաթ օրը գրեթէ ամէն տուն խաշիլ է եփում, ուստի և այս պասը կոչում է նաև «խաշիլի պաս»: Սովորաբար այս օրը ուխտ են գնում մօտակայ Ա. Սարգսի ուխտատեղիները: Այսպիսի ուխտատեղիներ գաւառում բաւականաչափ կան, որոնց մէջ աւելի նշանաւոր է Գանձա՛ի արևմտեան կողմում գրանուածը: Այստեղ հաւաքւում են ուխտաւորների ահազին բաղմութիւնն, երեքական անգամ պտոյտ գալիս ուխտատեղու շուրջը, մոմ վառում, աքաղաղ մատղում: Վերագրածին հանդիպողին փոխանակ բարեկելու ասում են. «Խաչը քեզ ողջոյն է զարկել»:

—Ողջ կենաս, պատասխանում է հանդիպողը:

Բարեկենդան.—Ա. Սարգսի տօնից մինչև մեծ պաս բարեկենդան է համարւում և այս միջոցում ժողովուրդը թէ լաւ սննդում է, և թէ շատ ուրախ անցկացնում: Միայն այս միջոցումն է, որ գրեթէ բոլորի տանն էլ միս է զտնւում: Բայց սրանից հարսանիքներից շատերը այս միջոցումն են կատարում և գրեթէ ամբողջ զիւղը ի միախին է անցկացնում ժամանակը: Հարսանիք չեղած օրերումն էլ փոքրիկ խմբեր կազմած այս ու այն տանը ուտում խմում և քէֆ են անում. ապա, երբ գլխները բաւականաչափ տաքացած է լինում, դաւուլ գուռնի առաջնորդութեամբ սկսում են շրջել զիւղը, պարել, երգել և հազար ու մի տեսակ միմոսութիւններ անել:

Ահա մի այսպիսի խումբ բարեկենդանի վերջին օրը իւր միջից մինին առաջնորդ է ընտրում, քիւրքը թարս հազցնում, փափախը շրջած դնում, երեսին սև մուր քսում և կնոջ շորեր հազած մի տղամարդու հետ շրջում զիւղը: Գիւղացիները սրան ասում են «Քեօսա-գեալդի» և ահազին բազմութեամբ հետեւում նրան: Թէ քեօսան և թէ, մանաւանդ, նրա կինը հազար ու մէկ ծամածուլթիւններ ու հանաքներ անելով ծիծաղցնում են շրջապատողներին:

Մի քանի ուրիշ խմբեր էլ «Ղոշուն դոշունի» կամ «Ճահշամի» են խաղում: Պաքրում են մի կալ. մի բարձր տեղ պատրաստում, մի երկար ձող ցցում և ծայրին մի կանանչ ու կարմիր թաշկինակ կապում ու թողնում, որ ծածանի: Ապա երիտասարդներից ամենից ճարպիկ ու սրախօսի զլխին մի եռանկիւնի, թագաձև փոստ են անցկացնում, փորը ուռցնում, կուրծքը, ուսերը զարդարում զանազան ձեւի գունաւոր կտորներով, վերան մի հազուագիւտ վերարկու ձգում: Կրծքին շարում զանազան դոյնի թղթեալ մեղալներ և իբր շահ բազմեցնում թաղթեալ վրայ: Միւս երիտասարդները՝ միմի երկար մահակ ուսերին դրած՝ շարում են նրա յետեր, որպէս նրա հաւատարիմ թիկնապահներ, իսկ միքանի սրախօսներ կանգնում են նրա առաջը և զանազան խնդիրների մասին զեկուցանում նրան: Ահա մինը ոկտեղ զիւղի մի հարստի մասին գանգատուել և ամբաստանել նրան զանազան զեղծումների մէջ: Ճահը խոկոյն համարում է իւր թիկնապահներից միքանխին գնալ և բերել նրան: Սրանք էլ անմիջապէս բռնի կերպով բերում են նրան շահի առաջ: Ճահը երեսովն է տալիս նրա արածները և տուգանք նշանակում: Խոկոյն թիկնապահները ոկտում են չարչարել նրան, մինչև որ վճարում է տուգանքը: Այսպէս զատափարութիւնը շարունակում է, մինչև որ լուր է զալիս, թէ մի ուրիշ շահ յարձակումն է գործում: Անմիջապէս այս շահը խաղացնում է իւր զօրքերին և յարձակում եկող շահի վրայ: Ակտում է բաւական լուրջ կոխի.. մահակները իրար են հարւում և փշուում. երեմն զլուխներ էլ են պատառուում: Վերջապէս մի կողմը յաղթող է հանդիսանում: Խոկոյն յաղթուած

շահին նստեցնում են իշխ վրայ, աղին ձեռք տալիս, երեսին մուր քսում և թիկնապահներով շրջապատած պտտեցնում զիւղը՝ հաղար ու մի կատակներ անելով և նուէրներ ժողովելով:

Կէս գիշերին, երբ արդէն միքանի անգամ հաց կերած են լինում և ձուով «փակած բերանները», հրացաններ են արձակում «բարեկենդանին փախցնելու»:

Տեառնդառաշ.—Նորապսակ երիտասարդները ցրտնի ծառի ճիւղեր են բերում և եկեղեցու բակում դարսում: Եթէ մի նորապսակ զլանում է այս պարտականութիւնը կատարելու, քահանան նրանից 40-50 կ. տուգանք է առնում: Երեկոյեան ժամասացութիւնից յետոյ երեղեցու ջահից վերցրած մոմով վառում են այդ խարոյգը, որ «դռնտառունչ» է կրչում և նորապսակ դոյգերը երեքական անգամ պտտում են շուրջը և վերջը ամուսինները երեքական անգամ թռչում դռնտառունչի վրայից: Երեխանները մի մի հաւ գրկած կանգնում են խարոյկի շուրջը. որպէսզի հաւերը մեծ պասին յաճախ ձու ածեն: Ապա մի խանձող առած վերաբառնում տուն: Միքանիսը այս խանձողները (ընձղակոթ) պահում են, որ զատկի թաթախման երեկոյին «կաթնաւի» տակ դնեն և թաթախուին այդ կերակրով:

Տէրնդազի մոխիրը ջրի մէջ լուծում խմեցնում են ծնընդկանին, որ հեշտութեամբ ազատուի, հիւանդին, որ առողջանայ: Նոյն մոխրից ածում են հաւաբնում, որ հաւերը շատ ձուածեն, պահում և գարնանը շաղ են տալիս արտերում, որպէսզի մուկը չկտրի ցանքսերը:

Տէրնդազի համար անպատճառ ցրտնի են գործածում, որովհետև «Քրիստոսը ծնուած միջոցին այդ ծառի ճիւղերով է փաթաթուել»:

Մեծ-պաս.—Առաջին օրը տղամարդիկ և պառաւ կանալք խնձորներ և կիտրոններ առած այցելում են միմեանց՝ մեծ պասը շնորհաւորելու: Նորապսակները անշուշտ մի-մի թաշկինակ լի մրգեր առած գնում են իրենց զոնքանչներին տեսութեան, համբուրում են նրանց ձեռքերը և մրգերը տալիս: Զոնքանչներն էլ համբուրում են նրանց ճակատը և մի մի դոյգ դուլպայ ընծայում:

Տան մեծերը մի մի շիշ օղի առած գնում են տանուտէրին և քահանալին տեսութեան, շնորհաւորում են նրանց պասը, իրենց օղիից մի մի բաժակ նախ իրենք խմելով և ապա նրանց առաջարկելով: Եւ եթէ միքիչ օղի աւելանում է, շշերը տալիս են տնեցիներին, որ դատարկեն և վերադարձնեն:

Կէս օրից յետոյ երիտասարդները ձիւորուած դուրս են գալիս մի հրապարակ, քաղաքում «Քաբուր» կոչուած դաշտը և արշաւում: Ահազին բազմութիւն դալիս է դիտելու և գովաբանելու իրենց ճարպիկութիւնը ցոյց տուող երիտասարդներին:

Իսկ աղջիկներն ու հարսները իրենց տների բակերում և կամ մօտակայ ծառի տակ ճլորթի (ճինջաղ) են խաղում: Խաղը աւելի կենդանութիւն է ստանում, երբ կամաց-կամաց երիտասարդներն էլ են մօտենում և մասնակցում: Խաղի «տաք» ժամանակը մինը մի ձող է առնում ձեռին և այնքան հըրում ճլորթին և ձողով խփում մէջը նստողին, մինչև որ նա տալիս է իւր ապագայ նշանածի անունը: Եւ որովհետև ընկերներին յայտնի է լինում թէ ով ում է սիրում, ուստի և խոստովանութեան ենթարկուղը չի ազատում, մինչև որ ճշմարիտը չի խոստովանաւում:

Միջունի չորեքարթի երեկոյին «լիճք» են կոչում և «լիտվառում», այսինքն մի ամանի մէջ նախ միքիչ ջուր և ապա ձէթ են ածում ու մի բամբակից ոլորած պատրոյդ գնում մէջը և վառում ՚ի լիշտակ «քառասուն մանկանց», և քառասուն անգամ ծունը գնում:

Հետեւեալ օրը այդ կանթեղի մէջ մնացած ջուրը օջախը կամ թոնիրն են ածում, մեղք համարելով «արդար» ջուրը մի անսուրբ տեղ թափել:

Ծաղկազարդ.—Տեղական բարբառով կոչում են պատրարք: Առաւօտ շատ վաղ, դեռ լոյսը ըքացուած, ամէնքը շտապում են եկեղեցի: Այս օրը բոլոր հարուերն ու աղջիկները անշուշտ լինում են եկեղեցում: Երբ «Առաւօտ լուսոյ» շարականը երդում են, երեխանները ճակատ են ածում: Եւ երբ ուռենու ճիւղեր են օրհնում, նշանած աղջիկների գլխներին սկեսրանք չարդաթ են ձում և մոմ տալիս ճեռը: Փամասացութիւնից յետոյ գնում են

գերեզմանատուն, բազարջ հաց տանելով իրենց հետ, մոմեր վառում գերեզմանների վրայ, ողբում, հացն ուտում և վերագառնում:

Զարչարանաց շաբաթ.—Առաջ Երեշշաբէնի երեկոյեան ժամերգութեան միջոցին տասը երեխալի շապիկ են հազցնում, ձեռներին մոմ տալիս և կանդնեցնում եկեղեցու սեղանի առաջ: Երբ տասը լիմար և իմաստուն կրտսանաց առակը կարգում են, աւագ դպիրը մի ափսէի մէջ տասը կորած թղթեր է ածում և առաջարկում այս երեխաներին վերցնելու: Այս թղթերից հնդի վրայ «լիմար», խալ միւս հնդի վրայ՝ «իմաստուն» խօսքերն է գրուած լինում և ըստ այնմ՝ երեխաներից հինգը իմաստուն, խալ հինգը լիմար են համարում:

Զի՞-չորեկչաբթի.—Այս օրը սովորաբար ուխտ են դնում «Մկնատամի խաչերին», որոնցից նշանաւոր է Գանձակի հարաւարեմտեսն կողմում «Պղղայա» կոչուած բլրակի և իրքէն գիւղի մօտ դտնուածները: Ուխտաւորները մոմ են վառում, աղօթում և այդ ուխտատեղու հողեց միքիչ ջրով շաղախելով՝ քսում մկնատամ ունեցողների վէրքերի վրայ, որ լաւանան: Վերադարձին քարեր են գլորում կամ նետում, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այդ քարերի հետ դնան անցնին. և կամ ուխտատեղու մօտ եղած ծառերից շորի կտորներ են կապում, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այնտեղ կապուած մնան:

Տուն վերադառնալով նոյն ուխտատեղից բերած հողը լուծում են ջրի մէջ և խմեցնում աղջիկներին, որպէսզի նրանք շոտով ամուսնանան:

Նոյն օրը շատ ընտանիքներ հիմնովին մաքրում են տները—«չիք են անում»:

Աւագ-չինգչաբթի, երեկոյեան ժամերգութեան միջոցին կարաղ իւղ են տանում եկեղեցի և տալիս քահանալին: Ոտնչուալի միջոցին քահանան լուանում է զրեթէ բոլոր ծերունիների սուները և բոլոր կանանց և երեխաների ձեռքերը և միշտիքիչ օրհնուած իւղ դնում: Այս իւղը քսում են աչքերին, ճակատին և մաղերին:

Ա. Քաղուսնանց տօնը. զիւղերում բոլորովին չի տօնելում,

իսկ քաղսքում հոգեհանգիստ է կատարում եկեղեցու մէջ, քարող և ճառեր խօսւում:

Գլշերային ժամերգութեան ժամանակ ժամանորները բաղարջ հաց են բերում իրենց հետ եկեղեցի և բաժանում լիշտակ բաղարջակերաց տօնի:

Այս ժամերգութեան միջոցին երիտասարդները շատ անկարգութիւններ են անում, մանաւանդ Փանձակում, ուր վերջին տարիս նրանցից միքանիսը թողլ էին տուել իրենց եկեղեցու մէջ թուղթ խաղալու:

Աւագ Ռւբաթ առաւոտեան դարբինները, ոսկերիչները անխօս գնում են իրենց խանութները և եօթական անգամ մուրճով խփում սալին: Կանայք էլ ասեղով եօթը անդամ ծակում են մի որևէ շոր: Նոյն առաւոտը դարբինները պողպատից անխօս շինում են մատանիներ, որ կոչում են «ուրբաթարուր»: Սա դնում են մատները, որպէսզի կայցակը նրանց չխփէ, քաջքից աղատ լինին:

Ճաշու ժամերգութիւնից յետոյ ամէն տուն ընդհանրապէս և այդ տարում ննջեցեալ ունեցողները մասնաւորապէս, բաղարջ հաց, և պասուայ կերակրներ են բերում եկեղեցի, ուր սփռոցներ են սփռում և այդ բերածները դարսում. ապա բոլոր ժամաւորները նստում միասին ուտում են, իրենց գլուխունեալով քահանաներին, որոնք ճաշից յետոյ ամենայն ննջեցելոց համար մի ընդհանուր հոգոց չեն ասում:

Այդ օրը փայտ չեն կտրում, կանանչի չեն հանում, գետինը չեն փորում, որպէսզի Քրիստոսի գերեզմանը քանդուած մինի:

Ճաբաթ առաւոտեան քահանան խոստովանեցնում է զիւղի ընակիչներին և հաղորդում երեխաներին: Այս վերջիններս մի-մի կամ երկ-երկու ձու են տալիս քահանալին հաղորդուելու միջոցին: Այնուհետև քահանան շըջում է տները և օրհնում, ստանալով կամ մի քանի կոպէկ և կամ ձու, բրինձ, ցորեն, և այլն: Երեկոյեան նախատօնանքին կրօնամոլները իրենց հետ ձու են տանում եկեղեցի, որ «ժամաւ քաշեն» և նըրանով բանան պատը: Պատահում են և այսպիսի որկրամոլներ,

որ հէնց եկեղեցում «Առէք կերէք»-ը ասելիս՝ անմիջապէս ուտում են ձուն։ Նոյն երեկոյին ժամուրների մեծաղոյն մասը հաղողդուում է։

Այդ երեկոյի պատարագը մինը «առած» է լինում, որը և քահանալին, տիրացուներին և միքանի մարդկանց ընթրիքի է հրաւիրում։ Սովորաբար այս երեկոյին ձուկ և փլաւ են եփում։ Խոկ կարմիր, դեղին և այլ գոյնի ներկած ձուն անպայման լինում է։

Զատիկ.— Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ զիւղացիները գնում են նախ տանուտէրին, քահանալին և ապա իրենց բարեկամներին վրիստոսի յարութիւնը շնորհաւորելու։ Տանուտէրին և քահանալին սովորաբար մի-մի շիշ օղի են տանում նուէր։

Չու կոռուցնելու սովորութիւնը սաստիկ ընդհանրացած է թէ փոքրերի և թէ մեծերի մէջ։

Միքանի զիւղերում այս օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու գաւթում միւր լաւաշ հայցի մէջ փաթաթած բաժանում ժամուրներին, ուս կոչում է «ախար», իսկ սրանից՝ այս զատկի կիրակի օրը՝ «ախար օը»։

Երկուշաբթի, մեռելոցին, ամէն տուն զանազան ուտելեղէններ և մրգեր առած գնում է զերեզմանատուն, օրհնել տալիս իւր հին ու նոր ննջեցեալների զերեզմանները և ապա միացնելով իւր բերած ուտելեղէնները բոլորի բերածների հետ, միասին հաց են ուտում. այստեղ էլ նախ տղամարդիկ և ապա կանալք։

Ապրիլի 1.-Թէ քաղաքում և թէ զիւղերում ընդհանրացած սովորութիւն է միմեանց խաբել։

Նաւասարդ.— Այցելում են միմեանց և շնորհաւորում նորտարին։ Հարսերի հերանց տներից ընկուզ են բերում և հերթիկից ածում փեսաների զլիններին, ճշլշնու, այսինքն գաթաների, խնձորների, հաւերի շալան—քաշ տալիս նոյն հերթիկներից։ Գրեթէ ամէն տուն կորկոտ է եփում։

Համբարձում. Տօնի նախընթաց օրը առաւօտեան շատ վաղ եօթ աղջիկ միասին, բոլորովին անխօս գնում են եօթն

աղբիւրից եօթը բուռ ջուր վերցնում, եօթը տեսակ ծառից եօթը տերկ պոկում և եօթը տեսակ ծաղիկի հետ ածում մի բղուղի մէջ, ապա իրենց զրկիցների տները ման ածելով՝ զանազան նշաններ—մատանի, բալանի, կոճակ, դանակ և ալն, — ձգում են բղուղի մէջ և գիշերը տանում մի վարդենութիւրի տակ, բարի աստղերի ներգործութեան ներքոյ։ Զարանձի երիտասարդները որոնում են, որպէսզի աղջիկներից ծածուկ գողանան և հետեւեալ օրը մի որևէ նուէր ստանալով՝ վերաբարձնեն։ Համբարձման օրը աղջիկներն ու տղաները հաւաքւում են մի հրապարակ տեղ, վիճակ հանելու. ամէն կողմից հարսներ, կանալք և տղամարդիկ գալիս շրջապատում են դըրանց։ Մի հինգ կամ վեց տարեկան «միամիտ» երեխալի նըստեցնում են շրջանի մէջ տեղը, վիճակի բղուղը դնում գիրկը և մի մեծ մեզար (մեծ շալ) ձգելով աղջկայ գլխին, ամբողջովին ծածկում նրան։ Ապա նախ չափահաս և յետոյ հետզհետէ բոլոր աղջիկները խմբով վիճակի երգեր են երգում և իւրաքանչիւր երգի միջոցին վիճակահան աղջիկը բղուղի միջից մի նշան է հանում. իսկոյն այդ նշանի տէրը վերցնում է այդ և ինքն իրեն կրկնելով երգուած «զիւղումը», աշխատում է նըրանից գուշակութիւններ անել։ Ճրջապատողները օգնում են նրան և նրա հետ ուրախանում կամ տիրում։

Այդ օրը ամենայն տուն անշուշտ «կաթնաւ» է եփում։ Ճատ զիւղերում գութանաւորները միասին մատաղ են անում և ամբողջ զիւղին բաժանում։